ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

№ 7 (1592) ԴԵԿՏԵՄԲԵՐ 2007



Դաշնակցությունը հայոց երկաթե լեռներից, 1000 տարվա երկունքից հետո ծնած երկաթե ռազմիկն է: Էջմիածինը միացրեց հայությունը իրար հետ Քրիստոնյա խաչով, Դաշնակցությունը՝ ֆիդայիների սրով: Հայոց եկեղեցին երգեց "Արի Աստված հարգն մերոյ. լեր սպանին ազգի հրոյ...", Դաշնակցությունը երգեց.

Դեպի, դեպի Հայաստան,
Ձեռքին ահեղ հրացան,
Վերք տո՛ւր, մահ տո՛ւր թշնամուն,
Մահ կամ ազատություն:

Դաշնակցությունը հայության ուղն ու ոսկորն է:

Ավ. Իսահակյան

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

4

15


43


46

Լուր
4 Գոբլի ծրագրի նոր հրատարակությունը

Նամակ խմբագրությանը
12 Թուրք-ազերիների հետ հաշտ ու խաղաղ ապրելու բանաձևը

Տարածաշրջան
15 Սանցխե - Ջավախք - Ծալկա. ե՞րբ է գալու սթափման պահը

18 Վրաստանի ազգային անվտանգության խորհուրդը

Տեղեկագիր
25 Ռումինիայի հայ համայնքը և Ռումինիան որպես տարածաշրջանային ծրագրերի կենտրոն

Պարմա-մշակութային
28 Հասարակական երևույթների մշակութային-խորհրդանիշային տեսանկյունը

Տեսակետ
33 Հ. Տասնապետյանի Հայկական հարցի վերլուծականը

Արձագանք
38 Ուրեմն ո՞րն է բուն դրդապատճառը

Հիշատակ
43 Անկոխարինելի Աբրահամ Աշճյանի առեւանգման 25-ամյակին

Խմբագրի անկյուն
46 Քրիստափորը եւ Իսահակյանը

Թերթելով "Դրօշակ"-ի էջերը
46 Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

Նոր գրքեր
51 XXI դպրի բանակը

"Դրօշակ"-ի պատկերասրահ
52 Վարուժան Վարդանյան

"Դրօշակ" ամենամսյա պաշտոնաթերթ Հայ Հեղափոխական Դաշնակցություն:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ **Ռուբեն Հովսեփյան**
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

" **Droshak**" monthly, ARF dashnaktsoutiun publication
12/1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ԱՑՅԱԼԸ, ԵՐԿԱՆ

և ապագան

ՀՅԴ աշնակցության Հայաստանի Գերագույն ժողովը, 2007 թ. նոյեմբերի 30-ին ընկ. Վահան Հովհաննիսյանին առաջադրեց ՀՀ գալիք նախագահական ընտրությունների Դաշնակցության թեկնածու:

Այս որոշմամբ Հայաստանի նախընտրական քաղաքական դաշտը, կարելի է ասել, ուրվագծվեց ամբողջությամբ: Փորձենք մեր պատկերացումները տալ այդ մասին.

- 1991-98 թթ. իշխանախումբը Հայոց համազգային շարժման գլխավորությամբ, իր սահմանափակ օլիգարխների կապիտալիստական ռեսուրսներով, պաշտոնանկ կամ թաքուն բյուրոկրատական իր կադրերով եւ արբանյակային խմբակցություններով, աջակցում է քաղաքացիական նախաձեռնությամբ առաջադրված, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությանը: Կարոտախտով ու որոշ ուժերի խրախուսանքով վերաշխուժացած այս խումբը ցուցական-միտինգային աղմուկների ընդմեջից փորձում է բարձրանալ հասարակության լայն դժգոհության ալիքների վրա եւ այդպիսով ապահովել հաղթանակի հեռանկարներ:

- 1998 թվականից հետո գործող իշխանությունների առանցքում գտնվող Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, պետական իր լծակներով, առավել մեծ քանակի խոշոր օլիգարխների կապիտալի հզորությամբ, գրեթե մենաշնորհյալ մաս-մեդիայով եւ տնտեսաքաղաքական կուսակցախմբերով, առաջադրել է ՀՀ գործող վարչապետ Սերժ Սարգսյանին: Արտաքին ու ներքին բազում կապերով արդեն ամրացած այս ուժը ձգտում է պահպանել ներկա իշխանական ստատուս-քվոն՝ ցուցադրաբար հաղթանակներ դրվագելով նույնիսկ ընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ:

- Նշյալ երկու «բեւեռ»-ների բարոյագաղափարական եւ նյութական ազդեցության գոտուց դուրս գտնվեցին ստվար թվով չմագնիսացող ուժեր, որոնք իրենց ուրույն դիրքորոշմամբ որակական լուրջ փոփոխությունների ավետիս հնչեցրեցին հայ քաղաքական մտքի ու ազգային նորածիլ ժողովրդավարության պատմության մեջ: Սոցիալ-տնտեսական իմաստով հասարակությանը բեւեռացնելու ճոխ փորձառությամբ բնութագրվող՝ անցյալի

ու ներկայի իշխանախմբերին կարծես այս անգամ չի հաջողվում կամայական երկբեւեռում եւ առճակատում սերմանել քաղաքական դաշտում: Նրանց երկուստեք բեմադրություններում խիստ զգացվում է կանխորոշված սցենարների առկայությունը:

Դաշնակցությունն առաջադրեց սեփական թեկնածու: Որո՞նք էին գաղափարախոսական հիմնավորումները, որոնցում համոզված ՀՅԴ-ն չէր կարող միանալ երկբեւեռության եւ երկփեղկվածության ձգտող նշյալ բեւեռներից եւ ոչ մեկին:

ՀՀՇ-ական անցյալին դառնալու հարցում պատասխանը շատ պարզ է. եթե նույնիսկ մի պահ մոռանանք մեր նորանկախ հանրապետության առաջին տարիների սոցիալ-տնտեսական կատաստրոֆիկ կացությունը, քաղաքական կյանքի պարբերական ճգնաժամերը, ազգային մշակույթի կորուստը, մեր կուսակցության արգելափակումն ու մեր ղեկավար ընկերների կալանավորումը, եւ այդ բոլորը միամտաբար համարենք անկախության անզուգական արժեքի ձեռք բերման համար վճարված գին, ապա իրավունք չունենք մոռանալու մեր ժողովրդի ազգային գիտակցության մեջ թունավոր այն գաղափարի ներարկումը, որով ապահով, երջանիկ ու անվտանգ կյանքը դրվում էր հայրենի տարածքներից ինքնակամ հրաժարվելու նժարի վրա: Չենք կարող մոռանալ նաեւ այն պատճառով, որ այդ խեղկատակությունը նորից է շրջանառության մեջ դրվում, որպես նախընտրական քարոզչության հումք... Բացառվում է անցյալին միանալը:

ՀՀԿ-ական ներկային միանալու պարագայում եւս պատասխանը թող հստակ լինի. մենք զորակցեցինք նախագահ Քոչարյանին, որովհետեւ արցախյան հարցում նա ընդունում էր մեր դիրքորոշումները, որոշ վերապահումներով՝ նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման, երկքաղաքացիության եւ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերության հարցերի մեր պատկերացումները: Սակայն հենց առաջին օրերից Դաշնակցության համար անընդունելի մնացին ՀՀԿ-ի՝ իշխանությունների առանցքային քաղաքական ուժի, կապիտալիստական եւ, այսպես կոչված, «ազատ» շուկայական գաղափարները եւ դրանց կիրառման ձեւերը, գռեհիկ, անտակտ սեփականաշնորհման գործընթացի «փափուկ» շարունակությունը, անողոք մոնոպոլիզացիան, սոցիալական բեւեռացումը, կոռուպցիան եւ այլն, եւ այլն: Ուրեմն հնարավոր չէ նաեւ ընդունել ներկան... Թեեւ Դաշնակցությունը, երկրի կայունացման համար իր բաժինը ներդնելով, համագործակցեց ներկա իշխանությունների հետ, բայց չհրաժարվեց քննադատության իր իրավունքից, եւ հիմա, իր համակարգված կենսափորձին հենված, հայտարարում է ամբողջական իշխանությունն ստանձնելու իր պատրաստակամության մասին:

ՀՅԴ ծրագրային տեսլականները, պլատֆորմային համոզումները, հավաքական ղեկավարման կազմակերպական ըմբռնումները, աշխատանքային փորձառությունները նրան վերապահում են բարոյական իրավունք վերոնշյալ որոշմանը հանգելու համար:

Այս ամենից զատ կա մեկ այլ մեկնակետ եւս: Նախագահական ընտրություններում Դաշնակցության եւ մյուս չմագնիսացող ուժերի մասնակցությունը փոշիացնելու է կանխորոշվածության հակաժողովրդավարական ավանդույթը Հայաստանի քաղաքական կյանքում: Խավարամտության այս եւ նման ավանդույթները թոթափելով միայն՝ կարելի է հույսեր փայփայել ժողովրդավարական պատշաճ մակարդակի հասնելու համար:

Ազգայինն ու սոցիալականը վտանգող անցյալից անցել ենք ազգային իմաստով համեմատաբար առողջ, սակայն սոցիալապես վատառողջ ներկային եւ ուզում ենք վճռական քայլերով ընթանալ դեպի ե՛ւ ազգային, ե՛ւ սոցիալական առումներով զարգացող, թեւածող ու անկաշկանդ ապագա:

Ահա այսպիսին է Դաշնակցության ներկա քաղաքական ուղեգիծը: Գիտակցում ենք, որ նման ուղեգծեր որդեգրելու մասին խորհող քաղաքական այլ ուժեր եւս կան, որոնց համախմբման համար Դաշնակցությունը նույնպես պատրաստակամ է ու նույնպես վճռական:

ԳՈԲԼԻ ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

«Պետությանյուրաքանչյուր կյանք հողի մեջ արմատներ ունի: Հողը ժողովուրդների ճակատագիրը դեկավարում է կույր դաժանությամբ: Ժողովուրդը պետք է ապրի այն հողի վրա, որը նա ճակատագրով է ստացել: Այդ հողի վրա նա պետք է մեռնի եւ այդ հողի օրենքին նա պետք է ենթարկվի»:

«Պատմությունը մեզ ցույց է տալիս շոշափելիորեն, թե ինչ չափով է հողը իրական հիմք քաղաքականության համար»:

Ֆրիդրիխ ՌԱՏՑԵԼ

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետությունը սահմանակից է արեւմուտքից Թուրքիային, հարավ-արեւմուտքից Նախիջեւանին (Ադրբեջանի խնամակալություն), որն իր արեւմտյան ելուստում ունի Թուրքիայի հետ ընդհանուր սահմանաշերտ (շուրջ 10 կմ), հարավից՝ Իրանին 46 կմ ընդհանուր երկարությամբ, արեւելքից ԼՂՀ-ի հետ միասին՝ Ադրբեջանին, հյուսիսից՝ Վրաստանին: Արցախյան ազատամարտի հետեւանքով «Մեղրու միջանցքը» շարժվել է արեւելք շուրջ 170 կմ-ով:

Արցախի ազգային-ազատագրական պայքարը, որ հանգեցրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) կազմավորմանը, ԽՍՀՄ լուծարումից հետո վերածվեց միջազգային քաղաքականության խնդրի ու տարածաշրջանային վերադասավորումների տարրի: Զուգահեռաբար ԼՂՀ անկախության միջազգային ճանաչումն աստիճանաբար մտցվեց փակուղի, թեեւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) կարգավիճակի փոփոխությունը՝ ինքնավարությունից անկախություն, իրականացվել էր ե՛ւ ԽՍՀՄ համապատասխան օրենսդրության (ԽՍՀՄ Սահմանադրության 72-րդ հոդված, «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքի 3-րդ հոդված), ե՛ւ միջազգային իրավունքի («ժողովուրդների ինքնորոշման անօտարելի իրավունք») շրջանակներում

անքերի, եւ գլխավորը՝ ձեռք էր բերվել ժողովրդի ինքնապաշտպանության անօտարելի իրավունքի հիման վրա:

Հատկանշական է, որ «Ղարաբաղյան շարժման» հանդեպ Արեւմուտքի վերաբերմունքը սկզբնական փուլում քաջալերական էր (թերեւս այն դիտվում էր ԽՍՀՄ կազմալուծման ազդակներից մեկը), սակայն Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության թուլացմանը համընթաց, խնդիրը դարձավ ավելի չափավոր եւ տեղափոխվեց ժողովուրդների ինքնորոշումից, այսինքն՝ բազմազգ պետությունների ներքին զարգացման գործընթացներից, պետությունների տարածքային ամբողջականության, այսինքն՝ միջպետական հարաբերությունների ոլորտ:

Անտեսելով նախկին ԽՍՀՄ ինքնավարության ժողովրդավարորեն արտահայտված ինքնիշխան կամքը ԼՂՀ հռչակման մասին (02.09.1991թ.), տարբեր փորձագետներ (օրինակ, Փոլ Գոբլ* եւ ուրիշներ) եւ միջազգային կազմակերպություններ առաջադրեցին եւ շարունակում են որոնել հիմնախնդրի կարգավորման (եւ ո՛չ լուծման) տարբեր նախագծեր, որոնցից մեկն էլ «տարածքների փոխանակման» տարբերակն էր: Հայկական կողմին առաջարկվում էր Հայաստանի Հանրապետության նախկին Մեղրու վարչական շրջանը, այսպես կոչված, «Մեղրու միջանցքը» փոխանակել (իրականում՝ հանձնել) հետխորհրդային Ադրբեջանի երբեւիցե մասը չկազմած ԼՂ ինքնիշխան պետության տարածքների հետ: Այսպիսով, հետխորհրդային Ադրբեջանը հնարավորություն էր ստանում, միջազգային հանրության օժանդակությամբ, երբեւէ իր մասը չկազմած եւ նրա վրա որեւէ ազդեցություն չունեցող ԼՂՀ տարածքների հաշվին իրեն բռնակցել (անեքսիայի ենթարկել) Հայաստանի Հանրապետության անքակտելի մասը կազմող ռազմավարական «միջանցքը»:

Ստեղծվում էր տարօրինակ եւ թերեւս համաշխարհային պատմությանը բոլորովին անծանոթ մի նախադեպ. էթնիկական զտման ու պատմամշակութային ցեղասպանության փորձի դիմաց եւ ագրեսիայի համար պատժված կողմը՝ Ադրբեջանը, փորձում էր տարբեր շահատակություններով համաշխարհային հանրության օժանդակությամբ իրեն ենթարկել (բռնակցել) քաղաքակրթորեն իրենից արմատապես տարբերվող (ԼՂՀ ազգաբնակչությունը միաբնակ քրիստոնյա հայեր են), իր ժողովրդի հետ էթնիկական որեւէ ընդհանրություն չունեցող (խառնածին ադրբեջանցիները հիմնականում թյուրքական շիա-մահմեդական ցեղեր են) եւ լեզվամտածողությամբ առանձին մի ժողովրդի: Այսպիսով, ինչը չհաջողվեց զենքի ուժով ռազմի դաշտում, փորձ էր արվում ձեռք բերել դիվանագիտության խարդավանքներով:

Առհասարակ անտեսվում էր ՄԱԿ-ի 1970 թվականի Հռչակագիրը, որը հաստատում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը եւ պետությունների վրա դնում որոշակի պարտականություններ: «Ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման սկզբունքի ուժով, որը ամփոփված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ,- ասվում է Հռչակագրում,- բոլոր ժողովուրդներն ունեն իրավունք առանց արտաքին միջամտության որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը եւ իրականացնել իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը եւ յուրաքանչյուր պետություն ***պարտավոր է հարգել այդ իրավունքը համապատասխան կանոնադրության դրույթների»***[1]:

Այդ դեպքում առաջանում է հարց. միջազգային իրավունքի շրջանակներում ամենապարզ խնդիրն ինչո՞ւ է տեղափոխվում երկրաքաղաքականության (գեոպոլիտիկայի) բարդ ոլորտ: Առաջարկը կամ հիմնախնդրի կարգավորումը տվյալ տարբերակով պարզ է, երկրառազմավարության (գեոստրատեգիա) բնագավառից է եւ ունի առնվազն երկու ենթաշերտ.

ա) ***Տարածաշրջանային ենթաշերտ:*** Տարածքների ենթադրյալ փոխանակությունը հայ ժողովրդի ազգային տարածքի վրա նրա պետական կազմավորումների երկու հատվածների միջեւ հօգուտ հետխորհրդային Ադրբեջանի, վերջնականորեն կասկածի տակ է դնում ոչ միայն ՀՀ եւ ԼՂՀ հետագա գոյությունն առհասարակ, այլեւ հեռանկարից զրկում է հայ ժողովրդին իր հայրենիքի վերջին հատվածում իր գոյությունն ու մշակութային ինքնությունը պահպանելու եւ բարգավաճելու հնարավորությունից: Այսպիսով, տվյալ տարբերակը մինչեւ վերջ խարխլում է հայոց ազգային անվտանգության հիմքերն ընդհանրապես: Ահա թե ինչու ժողովրդի ազգային ինքնագիտակցության ներքին ծալքերում «տարածքների փոխանակման» տարբերակը վերածվում է 1915 թվականի Հայոց ցեղասպանության մղձավանջի վերհուշի:

Ակնհայտ է, որ «Մեղրու միջանցքի» բռնակցումից հետո, թյուրքական երկու պետությունների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ կառաջանա անընդմեջ ցամաքային կապ (տարածք) Ստամբուլից մինչեւ Բաքու, իսկ Հայաստանի Հանրապետությունը անսահմանորեն կհեռանա

Իրանից՝ իր գոյության ու անվտանգության ռազմավարական կարեւորագույն խարիսխներից մեկից: Չարագուշակ տարբերակի իրականացումը, հետեւապես, ՀՀ-ն ԼՂՀ-ի հետ միասին կվերածի թյուրքական ջրավազան նետված մի շշի, որի խցանը կգտնվի էթնիկական հակամարտություններից բզկտվող, Հայաստանի թիկունքում եւ նրա հաշվին Թուրքիայի հետ գործարքների գնացող եւ թերեւս բյուզանդական ավանդույթները լավագույնս յուրացրած եւ թրքամետ Վրաստանի գրպանում: Հետեւապես, ավելորդ է, նույնիսկ, կանխատեսել ռազմավարական այն աղետը, որին կենթարկվեն Հայաստանն ու հայությունը ողջ աշխարհում: Եվ ՀՀ-ն, եւ ԼՂՀ-ն կկորցնեն իրենց ռազմագիտական նշանակությունը, կվերածվեն սովորական աշխարհագրական հետնախորշի, իսկ հայոց քաղաքակրթական ինքնության վերացումը կդառնա ժամանակի հարց: Իսկ Զավախքի ազգային տարածքի մասին հիշելը նույնիսկ կդառնա ավելորդ: Հետեւապես, հայկական կողմը չի կարող համաձայնել «տարածքների փոխանակման» եւ ո՛չ մի տարբերակի հետ: «Խնդրի կարգավորման» շրջանակներում, չի կարող դեր խաղալ ո՛չ իշխանափոխության պերմանենտ շղթան, ո՛չ էլ ինչ-որ հաշտեցման հանձնաժողով: Ճիշտ չէ նաեւ որեւէ տարբերակ ներառնել նախագահական ընտրարշավի զինանոց:

բ) ***Միջազգային ենթաշերտ:*** Ո՞վ կշահի տարածքների ենթադրյալ փոխանակությունից: Բնականաբար, Թուրքիան եւ թյուրքական Ադրբեջանը: Առաջին հերթին կիրականանա պանթյուրիքիստների իդեալը. անընդհատ ցամաքային հաղորդակցություն առաջացնել Նախիջեւանի** եւ «Մեղրու միջանցքի» վրայով՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ: Այս ուղղությամբ առաջին քայլն արվել է դեռեւս 1920-ական թվականներին, երբ Թուրքիան նեղ սահմանաշերտով (շուրջ 10 կմ) սահմանակից դարձավ Նախիջեւանի խնամակալությանը:

Մեզ հայտնի չէ, թե արդյոք պրն. Գոբլը եւ ընկ. տեղյա՞կ էին թյուրքական այս իդեալի մասին, որի իրականացման ուղղությամբ առաջին փորձերը կատարվել են դեռեւս Առաջին աշխարհամարտի տարիներին, սակայն ավելորդ չենք համարում հիշեցնել թուրք զինվորական-պետական գործիչ Խալիլ փաշայի 1918 թվականին արտահայտած մի «անմեղ» բաղձանքի մասին: «Հաղթական Խալիլ փաշան,- վկայում է հայոց ազգային հեղափոխության անզուգական տարեգիր Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան),- չէր մերժեր սկզբունքով Հայաստանի հողերի ընդարձակման պահանջը: Նա կանխիկ կառաջարկեր, որ հայերը դատարկեն Զանգեզուրի Մեղրիի գավառակը, որպեսզի իրենք անմիջապես կապվեն Բաքվի հետ. ի փոխարեն դրան պատրաստ էր ի հաշիվ Ադրբեջանի ընդարձակել Հայաստանի սահմանները, դեպի Ջիվանշիր եւ Վարանդա (այսինքն՝ դաշտային Արցախից էլ արեւելք.- Լ. Շ.): Դա փաստորեն կնշանակեր ուժ տալ պան-թուրանիզմին: Նա կառաջարկեր զինվորական դաշինք կնքել Դաշնակիցների դեմ: Այս կնշանակեր վերջին հույսն էլ ջուրը ձգել...»[2]: Երիտասարդ հանրապետության իշխանությունները, բնականաբար, մերժեցին թուրքական առաջարկը: Շարունակեցին պայքարը թուրքական արշավանքի դեմ, եւ ինչպես նկատում է գեներալ Լյուդենդորֆը, Անդրկովկասում «Թուրքիայի դեմ միայն հայերն էին կռվում 1918 թվականի սկզբներից՝ ռուսական բանակի հեռանալուց հետո եւ ութ ամիս կասեցրին Բաքվի գրավումը»[3], դրանով մեծապես ազդելով Առաջին աշխարհամարտի ելքի վրա: Նույն Ռուբենը, 1926 թվականի օգոստոսի 11-ին, գրում էր Ռուբեն Դարբինյանին (Արտաշես Չիլինգարյան). «Մխիթարական չէ երկրի քաղաքական կացությունը: Հայաստանը թույլ է, կղզիացած՝ Վրաստանի եւ Ադրբեջանի գերիշխանության տակ: Այժմ հարց կա Մեղրին տալ Ադրբեջանին, Նախիջեւանը ընդարձակել»[4]:

Թերեւս արժե հիշելը, որ ի տարբերություն պրն. Գոբլի եւ ընկ. նույնիսկ ֆաշական Գերմանիայի ղեկավարությունն էր հասկանում «տարածքների փոխանակման» հետեւանքով առաջացող ռազմավարական աղետի հնարավորությունը, ինչը, վերջին հաշ-

Ալֆրեդ Ռոզենբերգ

վով, նշանակում է «հայկական սեպի» անէացում: Քաղաքական աշխարհին ոչ անհայտ Ալֆրեդ Ռոզենբերգը վկայում է. Հիտլերը «իմ կարծիքը հարցրեց հայերի մասին (*Օբերզալցբերգ, 22 օգոստոսի 1939թ.- Լ. Շ.*): Ես ասացի նրան, որ Հայաստանը լավագույն դարպասն է Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ, որի շնորհիվ նա կարող է կասեցնել պանթուրանական շարժման առաջխաղացումը դեպի Արեւելք: Ընդհանուր առմամբ, հայերը նստակյաց ազգ են եւ հմուտ արհեստավորներ»[5]: Ստացվում է, ուրեմն, որ ինչպես պրն. Գոբլը, այնպես էլ «տարածքների փոխանակման» տեսակետի կողմնակիցները դույզն-ինչ չեն հեռացել զուտ թուրքական տեսակետից:

Այս ենթադրյալ փոխանակությունից կշահի, անշուշտ, նաեւ Արեւմուտքը, սակայն սոսկ մարտավարական առումով: Իսկ տանուլ կտա ռազմավարական հեռանկարը: Քանզի, մարտավարական իմաստով, իրողություն կդառնա Արեւմուտքի, գլխավորապես ԱՄՆ-ի, ընթացիկ քաղաքականության անցողիկ նպատակը Հարավային Կովկասում: Հյուսիսից Իրանը թյուրքական «սանիտարական միջանցքով» կբաժանվի Հարավային Կովկասից՝ գլխավորապես Հայաստանի Հանրապետությունից եւ Եվրոպայի, թերեւս Ռուսաստանի հետ հաղորդակցվելու հնարավորությունից, կհայտնվի էթնիկական արհեստական հակամարտությունների լաբիրինթոսում: Ռազմավարական հսկայական վնասներ կկրի Ռուսաստանը՝ դեպի հարավ Հարավային Կովկասով իր ելքը պայմանավորելով թուրք-ադրբեջանական քմահաճույքներով, անմիջապես ստանալով հակառուս տրամադրությունների էլ ավելի մեծ աճ Վրաստանում, ինչի ականատեսն ենք այսօր արդեն:

Իսկ ռազմավարական առումով տանուլ կտա նաեւ Արեւմուտքը: Անակոնդայի*** ռազմավարության կիրառությունն այստեղ, ինչին հետեւում է ԱՄՆ-ը տվյալ պարագայում, դժվար թե ռազմավարական հաջողություն ապահովի նրա համար: Քանզի խրախուսելով Թուրքիային դեպի Արեւելք տեղաշարժի ձգտումներում, կամա-ակամա ուժեղացնելու է նրա ազգայնական տրամադրությունները, որից ամենաշատն զգուշանում է նույն Արեւմուտքը, առաջին հերթին ԱՄՆ-ը: Այսպես, օրինակ, Հ. Մակքինդերի երկրաքաղաքական բնորդի (մոդել) ջատագով Զբ. Բժեզինսկին իրավացիորեն նկատում է. Թուրքիան եւ Իրանը իրենց «երկրաքաղաքական կողմնորոշման մեջ դրսեւորում են

Զբ. Բժեզինսկի

անհաստատունություն եւ ներքին առումով, ներուժի իմաստով, խոցելի են»[6]: Ավելին. «առաջվա պես պարզ չէ, թե ինչպիսին է լինելու նրանց երկրաքաղաքական կողմնորոշումը եւ նույնիսկ ինչպիսին է լինելու գործերի ընթացքը երկու երկրներում էլ ազգային համախմբվածության տեսակետից»[7]: Ուստիեւ Բժեզինսկին Թուրքիայի պարագայում, նրա ռազմավարական ապագայի ընտրության հարցում նախատեսում է երեք հնարավոր զարգացումներ: «Թուրքիան հետկայսերական պետություն է,- գրում է նա,- որը դեռեւս գտնվում է իր ընտրության որոշման գործընթացի մեջ, ձգում է երեք ուղղություններով. մոդեռնիստները ցանկանում են նրանում տեսնել եվրոպական պետություն, եւ հետեւապես, նայում են դեպի Արեւմուտք, իսլամիստները հակված են դեպի Մերձավոր Արեւելք եւ մահմեդական համագործակցություն, եւ այսպիսով, նայում են դեպի հարավ, դեպի պատմություն նայող ազգայնականները տարածաշրջանում տեսնում են Կասպից ծովի ավազանի եւ Միջին Ասիայի թյուրքական ժողովուրդների նոր դերակատարությունը, եւ այդպիսով նայում են դեպի Արեւելք: Այդ հեռանկարներից յուրաքանչյուրը պտտվում է տարբեր ռազմավարական առանցքների շուրջ, եւ քեմալականների հեղափոխությունից հետո առաջին անգամ այդ դիրքորոշումների միջեւ բախումը որոշ անվստահություն է մտցնում Թուրքիայի տարածաշրջանային դերի հարցի մեջ»[8]: Եթե Թուրքիայի եվրոպականացումը անհա-

ջողության մատնվի ներքին, թե արտաքին պատճառներով, եզրակացնում է Բժեզինսկին, ապա Հայաստանը եւ Վրաստանը ստիպված կլինեն «հարմարվել Ռուսաստանի շահերին»: Նրանց ապագան այդ դեպքում կվերածվի Ռուսաստանի էվոլյուցիայի գործառույթի (ֆունկցիայի), կախված Ռուսաստանի՝ ընդարձակվող Եվրոպայի հետ հարաբերությունների զարգացումներից[9]:

Անշուշտ, Բժեզինսկու եւ հաստատումները, եւ եզրակացությունները ճիշտ են արտացոլում Թուրքիայի եւ նրա շուրջ ընթացող խորքային գործընթացները, սակայն անակոնդայի ռազմավարությանը հարազատ մնալու ձգտումը, Heartland-ը**** (սիրտ-երկիր) ջախջախված տեսնելու բուռն ցանկությունը թույլ չեն տալիս գլոբալ ռազմավարության շրջանակներում (Թուրքիայի պարագայում) երկրառազմավարության շեշտադրումներն իրենց իսկական տեղը դնելու:

Բժեզինսկին գրեթե անտեսելով Թուրքիայի երկրառազմավարության մեջ ազգայնական ուղղության հնարավոր վտանգները, ինչը գլոբալ աղետի սաղմերն ունի իր մեջ, մերձակա եւ հեռանկարային պայքարի առաջնահերթ խնդիր է համարում նրա զարգացման իսլամական թեքման կասեցումը: Այս շեշտադրումը, անշուշտ, հատուկ չէ միայն Բժեզինսկիին: Այդուհանդերձ, նա առավել պարզությամբ է ձեւակերպել այդ տեսակետը: Նա գտնում է, որ «Ամերիկան պետք է օգտագործի իր ազդեցությունը Եվրոպայում... պայմանով, որ Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ տեղի չունենա կտրուկ թեքում դեպի իսլամական ուղղություն»[10]: Նրա դատողություններում նույնիսկ անթաքույց սպառնալիք կա դեպի Եվրոպան: Այսպես. «Թուրքիան,- գրում է նա,- շարունակելով իրեն զգալ Եվրոպայում իզգոյ (վտարակ, անջատավոր - Լ.Շ.), կդառնա ավելի իսլամական»[11]: Եւ բնական է, որ Թուրքայի քաղաքական ղեկավարությունը, գիտենալով նման դիրքորոշման մասին, ճարպկորեն շահարկում է եւ օգտագործում բժեզինսկիների այս «վախը»:

Անկասկած է, որ Թուրքիայի թեքումը դեպի իսլամական երկրառազմավարություն որոշակի խնդիրներ կընծնի Առաջավոր Ասիայում եւ գլխավորը՝ Արեւմուտքի ու Իսրայելի հետ հարաբերություններում, սակայն, ինչպես մեզ է թվում, էլ ավելի մեծ բարդություններ կառաջացնի ազգայնական ռազմավարությունը Ռուսաստանի հետ: Վերջինս ստիպված կլինի «կենտրոնանալ» եւ «կենտրոնանել» «մերձավոր արտասահմանը», ինչից զգուշանում է Արեւմուտքը: Կարծում ենք, «կկենտրոնանա» նաեւ Արեւելքի արթնացող հսկան՝ Չինաստանը եւ կփոխի իր երկրառազմավարության շեշտադրումները: Հասկանալի է, ինչու: Այդ բլոկին կմիանա, ուզի թե չուզի, Իրանը եւ այլն: Այնպես որ, ագրեսորին «խաղաղեցնելու» անթաքույց ձգտումն իր մեջ ունի տարածաշրջանային անվտանգությունից դուրս նետվելու հսկայական կարողականություն: Աշխարհը, սակայն, Մյունխենի հետեւանքները մի անգամ ճաշակել է... Եվ ճիշտ է Բժեզինսկին, երբ գրում է, թե Հայաստանն ու, թերեւս, Վրաստանը այդ պարագայում կնետվեն Ռուսաստանի գիրկը: Սակայն դա՞ է, արդյոք, Արեւմուտքի ռազմավարության ներքին տրամաբանությունը... Եվ հանուն ինչի՞...

Ուշագրավ է Վ. Պ. Ստուպիշինի դատողությունը: Անհանգստացած Ռուսաստանի, Եվրոպայի, եւ ինչու չէ, ԱՄՆ-ի ապագայով, համամարդկային արժեքների ճակատագրի համար, նա գրում է. «Անդրկովկասում, Ղարաբաղի շուրջ եւ մյուս «թեժ կետերում», որոնք երեւան եկան որպես հետեւանք կայսերական փոքր մտածողության՝ երբ ոտնահարում են ժողովուրդների ազգային իրավունքները, որոնք բռնի ձուլման չեն ենթարկվում, լուծվում է ոչ միայն Ռուսաստանի, այլեւ ընդհանուր մարդկային արժեքների ճակատագիրը»: Մնում է հավատալ միայն, որ, իրոք, «Եվրոպան խորապես շահագրգռված է, որ հարկադրի թուրքերին հարգել այդ արժեքները, հարգել միջազգային իրավունքը, հարգել միջազգային համագործակցության բարոյական հիմքերը, այլապես համաթյուրքական ժանտախտը կսկսի տարածվել աշխարհով մեկ...»[12]:

Իսկ «համաթյուրքական ժանտախտը» կտարածվի, առաջին հերթին, «հայկական դարպասով»: Մանավանդ, որ այդ ճանապարհին թուրք-պարսկական համաձայնագրով (1932թ.) Թուրքիան ժամանակին կարողացել է թուրք-պարսկական սահմանագծի հյուսիսային հատվածում տարածքների շահավետ փոխանակության միջոցով տիրանալ սահմանագծի ռազմագիտական նշանակություն ունեցող կետերին: «Պարսկաստանի հետ ունեցած նրա (Թուրքիայի) սահմանների հյուսիսային մասերը բռնում են ռազմագիտական այն կետերը, հաղորդակցության այն ուղիները,- արժեւորում է Ս. Վրացյանը,- որոնք ուղիղ գծով, թուրք մահմեդական զանգվածների միջով, պարսից եւ ռուսական Ադրբեջանների վրայով տանում են դեպի Կաս-



պից ծով եւ Անդրկովկասյան երկրներ»[13]:

Ի նչ եւ է: Խոսք տանք ռուս շահագրգիռ այլ հեղինակների եւս: Երկքաղաքական իմաստով, գրում է ոչ անհայտ Ալ. Արբատովը, հատուկ կարեւորություն ունի այժմ գոյություն ունեցող «ոչ մեծ ճեղքը», այսպես կոչված «Մեղրու միջանցքը» հայկական տարածքում, որը բաժանում է Թուրքիան ադրբեջանական անկլավ Նախիջեւանով՝ մնացած Ադրբեջանից, Կասպից ծովով, ուղիղ հաղորդակցությամբ, Միջին Ասիայից: «Ահա թե ինչու,- ասում է Արբատովը,- Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տարածքների փոխանակումը, ներառյալ Լեռնային Ղարաբաղը, կլինի ոչ շահավետ Ռուսաստանի համար»[14]: Մի այլ ռուս փորձագետ՝ Վ. Նիկոնովը նկատում է, որ 1921 թվականի ռուս-թուրքական գործող պամանագրով, որով Հայաստանը բաժանվեց Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ, «Ռուսաստանն է Անդրկովկասի երեք պետությունների սահմանների երաշխավորը, ինչպես նաեւ երաշխավորը Վրաստանում՝ Աջարիայի եւ Ադրբեջանում՝ Նախիջեւանի ինքնավար կարգավիճակների»[15]: [Թե Ռուսաստանն ինչպիսի երաշխավոր կարող է լինել, ակնառու երեւաց Ասլան Աբաշիձեի քաղաքական ճակատագիրը որոշելիս: Սա, սակայն, վերլուծության այլ թեմա է]:

Մի ոչ անկարեւոր հանգամանք եւս. Թուրքիայի գալիքի վերաբերյալ կանխատեսումներում, ինչպես տեսանք, Բժեզինսկին նախատեսում է երեք հնարավոր զարգացում եւ դրանք հատուկ առանձնացնում է միմյանցից: Ընդսմին, Բժեզինսկին չի կարող չգիտենալ, որ երկրաքաղաքական վերադասավորումներում ապագային միտված զարգացումները չեն կարող դրսեւորվել մաքուր տեսքով, իրարից բացարձակ առանձին: Հետեւապես, ենթադրելի է, որ *արմատական իսլամը կամ իսլամական արմատականությունը Թուրքիայում կներկայանա պանթյուրքիզմի շաղախով:* Պատմության մեջ մի անգամ արդեն դա տեղի է ունեցել: Իսկ փորձել Թուրքիան ուղղորդել դեպի Արեւելք, թեկուզեւ ամերիկյան խողովակով, կնշանակի ուժեղացնել նույն արմատական իսլամը նույն Թուրքիայում:

Նկատենք, որ ԱՄՆ-ում բոլոր ռազմագետները չեն, որ բաժանում են Բժեզինսկու դիրքորոշումները: Օրինակ, Գրահամ Ֆուլլերը «մոդեռնիստական» Թուրքիայի երկրառազմավարության մեջ էլ, Բալկաններից մինչեւ Արեւմտյան Չինաստան, ցույց է տալիս պանթյուրքիզմի տարրը: Թուրքիան ձգտում է, նկատում է Ֆուլլերը, ստեղծել թուրքալեզու պետությունների միություն: [Խնդիրը միայն Թուրքիայի փաստական հնարավորությունների մեջ է]:

Իսկ, առհասարակ, Թուրքիան Արեւմուտք չէ, ինչը շատ լավ գիտակցում է Եվրոպան: Այլ է նրա մշակութային ինքնությունը: Եվ ճիշտ է Ս. Հանթիգթոնը, որը նկատի ունենալով Թուրքիայի մշակութային երկատվածությունը, այդ երկիրն անվանում է «պառակտված երկիր» («torn-state»): Այսպիսի երկրներն առանձնանում են երկու երեւույթով, գրում է Հանթինգթոնը[16]: Քեմալը, գրում է նա, Թուրքիան վերածեց «բզկտված երկրի»[17]: Նման երկրներում «գերիշխում է մի քաղաքակրթություն, սակայն նրանց առաջնորդները ցանկանում են փոխել քաղաքակրթական նույնականությունը»[18]: Ըստ որում, այդպիսի երկրները «անվստահ են իրենց մշակութային նույնականության մեջ»[19]: Հասկանալի է, որ այդպիսի երկրից մնայուն ռազմավարություն դժվար է ակնկալելը՝ պատմական հեռանկարի առումով: Սա, անշուշտ, հասկանում է Հանթինգթոնը եւ հարեւանցիորեն ընդունում իրողությունը:

Սակայն, ինչը որ հասկանում եւ ընդունում է «հանրապետական» Հանթինգթոնը եւ չի մերժում «դեմո-

կրատ» Բժեզինսկին, չի հասկանում եւ չի ուզում ընդունել Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ դեմ գնալով արդի Հայաստանի աշխարհագրական տվյալներին, հայ ժողովրդի պատմական փորձին (1908-1912 թթ. հայ-թուրքական մերձեցման արդյունքները քաջ հայտնի են), ձգտելով խախտել Հարավային Կովկասի շուրջ ետխորհրդային տարիներին առաջացած ռազմավարական փխրուն հավասարակշռությունը՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության: Ընդսմին, ինչպես հասկացվում է, մտացածին կանխագուշակությունների հիմքի վրա:

Ակնհայտ է, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ միասնական տնտեսական տարածքի գոյացումը, նրանց հետ ՀՀ «ամենաբնական տնտեսական գործընկերության» տեսքով, նշանակում է Լեռնային Ղարաբաղի վերջնական կլանում Ադրբեջանի կողմից, Հայաստանի Հանրապետության վերածում թյուրքական համադաշնության՝ Հյուսիսային Կիպրոս + Թուրքիա + Ադրբեջան, մեծ «Մեղրու միջանցք»-ի:

Եվ վերջինը:

Անկասկած է, ինչպես գրում է Բժեզինսկին, որ Միացյալ Նահանգների ազգային շահերից չի բխում «առմիշտ թշնամանքի պահպանումը ամերիկա-իրանական հարաբերություններում»[20], մի ժողովրդի՝ պարսիկների հետ, որին բնորոշ է «բարձր աստիճանի ազգային եւ նույնիսկ կայսերական ինքնագիտակցությունը»[21]: Անշուշտ, Բժեզինսկին չի սխալվում այս պարագայում, ինչպես Լեվոն Տեր-Պետրոսյանը, սակայն փորձում է ցանկությանը տալ իրականության կերպարանք, երբ պնդում է, թե Թեհրանի «մոսկովամետ» դիրքորոշումը մարտավարական բնույթ ունի[22]:

Թերեւս, ռազմավարության տեսանկյունից Ամերիկայի համար ցանկալի է, իսկապես, Իրանի «վերադարձը արեւմտամետ դիրքորոշումներ»[23], սակայն ոչ Մոսկվայի հետ հակադրության հաշվին, ինչը ստեղծված երկրաքաղաքական իրադրության մեջ հնարավոր էլ չէ: Դա, մասնավորապես, ՀՀ-ին թույլ կտա ապագայում ավելի վստահ վարել պետականության ամրապնդման քաղաքական գիծը, եւ ավելի հանգիստ նայել իր ազգային անվտանգության հիմնախնդիրներին: Գալիքը, թերեւս, իր մեջ ունի զարգացման այս սաղմը: Դա թույլ կտա հայկական երկու պետական կազմավորումներին քիչ մտածել ռազմավարական կողնորոշումների եւ արտաքին միջամտությունների վտանգի մասին, իսկ հայ ժողովրդին որպես Արեւելքում արեւմտյան քաղաքականության տարրերի կրողի՝ համեստ առաքելության իրականացման մասին: Նման պարագաներում է, սակայն, որ Բժեզինսկին մի քիչ պակասում է «վիլսոնյան իդեալիզմը»:

Վերջին հաշվով, տարածաշրջանում եւ նրա շուրջ առաջացած հավասարակշռությունը, երկրաքաղաքական ճառագայթների հզոր բախումն ու փոխադարձ չեզոքացումը ուրվագծում են հենց այս ապագան: Իսկ տարածքների փոխանակման «մեծ» ու «փոքր» նախագծերի համար միշտ էլ տեղ կգտնվի պատմության աղբակույտերի մեջ:

Հ. Գ. Հարավային Կովկասի արնածոր բախումների քաջամուր «գիտակ» Թոմաս դը Վաալը սրտի ցավով փոխանցում է, որ Լեռնային Ղարաբաղի «առաջին հայկական ղեկավար» Արթուր Մկրտչյանը 1991 թվականի ձմռանը պատկերել-գծագրել էր «պաշտպանված սահմանների» քարտեզը, որը զարմանալիորեն համընկավ ռազմական գործողությունների թատերաբեմում առաջացած իրադրության հետ[23]: Ահա այս «միաձույլ» համաձուլվածքն է, որ փորձում է խորտակել, կամա-ակամա, ՀՀ առաջին նախագահը: Եվ հանուն ինչի՞: Ընդսմին, ողջ շարադրանքի խորապատկերի վրա առավել քան տարօրինակ է, եթե չասենք հրեշավոր, Լեռնային Ղարաբաղի կնճիռը «ոչ թե հողի կամ տարածքի, այլ միայն մարդու իրավունքների հարց» դիտարկելը:

Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի խնդիրը, զինադադարից հետո, ունի հետեւյալ «դիմագիծը»:

- ԼՂՀ պաշտպանական բանակը զբաղեցնում է, ռազմաստրատեգիական իմաստով, ընդհանուր առմամբ ամենաբարենպաստ բնագծերը, առավելագույնը՝ ցանկալիի պարագայում,

- հայ ժողովուրդը, ըստ էության, լուծել է ինչպես ԼՂՀ, այնպես էլ հարակից ազատագրված տարածքների (ԼՂՀ անվտանգության գոտի) հարցը անդարձ եւ վերջնականորեն: Ուրեմն, հարցը վերաբերում է լուծված խնդրի միջազգային «հանդերձանքին», այն է՝ համաշխարհային հանրության կողմից ԼՂՀ անկախության ճանաչմանը:

Ինչ վերաբերում է առաջացած status quo-ի զարգացման հեռանկարներին, ապա տեսականորեն այն ունի երեք տարբերակ.

ա) գնալ ինքնասպանության եւ կամովին հանձ-

նըվել թշնամու ողորմածությանը՝ կրկնելով 1920 թ. հոկտեմբերի 30-ին թուրքերին Կարսը հանձնելու ազգային դավաճանությունը եւ հետո բողոքել երկրի աշխարհագրական դիրքից, դաշնակիցների դավաճանությունից, կանադական ծանր հրացաններից ու ինչ իմանամ էլ ինչից...

բ) օգտվելով արեւելյան ճակատում ԼՂՀ պաշտպանական բանակի զբաղեցրած նպաստավոր ռազմավարական դիրքերից, կամ այլ հանգամանքներից, Ադրբեջանին պարտադրել խաղաղության դաշնագիր. հասկանալի է, որ այս տարբերակը ենթադրում է արտաքին համապատասխան իրադրություն: Եվ սա ապագայի հարց է: Նշանակում է, անհրաժեշտ է հետեւել համաշխարհային ու տարածաշրջանային զարգացումներին, շարունակել համախոհների ու դաշնակիցների որոնումները՝ հանդես գալով բացառապես հիմնավոր կանխատեսումներից, ունենալ ռազմավարական կողմնորոշումների արագ արձագանքման «բեմականացումներ» (սցենարներ),

գ) մինչ այդ պահպանել status quo-ն՝ նպատակադրվելով երկիրը դարձնել գիտա-արտադրական համալիր, չմոռանալով տեղեկատվական մենամարտը տանուլ տալու վտանգի մասին եւ այլն:

- Ամեն կերպ խուսափել «փոխզիջումների» համաշխարհային մտքի ու պրակտիկայի մեջ անհիմն «գյուտարարության» գայթակղությունից, նախագահական ընտրությունների շքահանդեսը չվերածել հայրենի եզերքը էժանագին վաճառքի տոնավաճառի:

---

* Գոբլի առաջարկության վերլուծությունը տես Լիմա Վինսենթ. Ի՞նչ է ասում Փոլ Գոբլը եւ ո՞վ է նա, «Դրօշակ», 1992, թիվ 15, էջ 19-21:

[1] Де Аречага Эдуардо Хименес. Современное международное право. Пер. с исп. М., 1983, стр. 160.

** Հայկական Նախիջեւանի արդի կարգավիճակը սահմանվել է ռուս-թուրքական 1921 թվականի մարտի 16-ի համաձայնագրով: Վերջինիս 3-րդ հոդվածը թելադրում է. «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջեւանի մարզը... կազմե ինքնավար շրջան Ադրբեջանի խնամակալության տակ, պայմանով, որ Ադրբեջանը այս խնամակալությունը չի զիջի երրորդ պետության»: Եվ առհասարակ, Անտանտայի «կրտսեր» դաշնակից Հայաստանի բաժանումն ու բռնազավթումը լենինյան Ռուսաստանի եւ քեմալական Թուրքիայի կողմից տխրահռչակ Մոլոտով-Ռիբենտրոպ (1939թ., 23 օգոստոսի) դաշնագրի նախատիպն է եւ նրա առաջին գործադրումը: Հիշատակենք ժամանակակից թուրք հետազոտող Բյուլենտ Արազի ցինիկ խոստովանությունն առ այն, որ ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթյուրքը գերադասեց մատների արանքով նայել այն բանի վրա, որ Կովկասում ապրում են մեր եղբայրակիցները: «Դրա համար նրան տվեցին Կարսն ու Արդահանը՝ Խորհրդային Ռուսաստանի հետ անխախտ սահման հաստատելու համաձայնության փոխարեն»: (Տե՛ս Արազ Բ., Թուրքիա. Անդրկովկասի պետությունների հետ հարաբերությունների որոշ առանձնահատկությունները, «Կենտրոնական Ասիա եւ Կովկաս» (ռուս.), 2001, թիվ 5, էջ 100):

[2] Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, հ. 7, էջ 145:

[3] Տե՛ս Կարապետյան Ս. Խ., Կոմկուսը Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարում (ռուս.), Եր., 1959, էջ 113:

[4] Տե՛ս «Հայրենիք» (Բոստոն), 1963, թիվ 11, էջ 21:

[5] Բարտակչյան Գ. Պ., Հիտլերը եւ հայերի ցեղասպանությունը: Թարգմ. անգլ., Եր., 1991, էջ 44-45:

*** Անակոնդայի ռազմավարություն՝ ատլանտիզմի երկրաքաղաքական ուղղությունը, որը միտված է Եվրասիայից առավելագույն սահմանային տարածք պոկելուն նրա երկրաքաղաքական ընդարձակումը զսպելու նպատակով:

[6] Բժեզինսկի Զբ., Մեծ շախմատային տախտակ: Ամերիկայի գերիշխանությունը եւ նրա երկրառազմավարական գերակայությունները: Թարգմ. անգլ., (ռուս.), Մ., 1999, էջ 161:

[7] Նույն տեղը, էջ 161:

[8] Նույն տեղը:

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 180:

**** Heartland՝ Մակքինդերի եզրը, որը իրենով նշանակում է ներցամաքային եվրասիական տարածքը, որի շուրջն է տեղի ունենում պատմական զարգացման տարածական շարժը: Համընկնում է Ռուսաստանի տարածքի հետ:

[10] Նույն տեղը, էջ 241:

[11] Նույն տեղը:

[12] Ստուպիշին Վ. Պ., Ղարաբաղյան կոնֆլիկտը. 1992-1994, (ռուս.), Մ., 1998, էջ 23:

[13] Վրացյան Ս., Թուրք-պարսկական սահմանավեճը, «Դրօշակ», 1929, թիվ 6-7, էջ 126:

[14] Արբատով Ա. Գ., Ռուսաստան. ազգային անվտանգությունը 90-ական թվականներին, «Միջազգային տնտեսություն եւ միջազգային հարաբերություններ» (ռուս.), 1994, թիվ 9, էջ 14:

[15] Տես «Նովոյե վրեմյա», 27 ապրիլի 2002 թ.:

[16] Հանթինգթոն Ս., Քաղաքակրթությունների բախումը եւ համաշխարհային կարգի վերակազմավորումը (ռուս.), "Pro et Contra", հ. 2, թիվ 2, 1997, էջ132:

[17] Նույն տեղը, էջ 124:

[18] Նույն տեղը, էջ 132:

[19] Նույնի «Արեւմուտքը եզական է, սակայն համապարփակ չէ» (ռուս.), «Համաշխարհային տնտեսություն եւ միջազգային հարաբերություններ», 1997, թիվ 8, էջ 88:

[20] Բժեզինսկի Զբ., նշվ. աշխ., էջ 241:

[21] Նույն տեղը, էջ 162:

[22] Տես նույն տեղը:

[23] Նույն տեղը, էջ 180:

[23] Տես Դը Վաալ Թոմաս, Սեւ այգի: Հայաստանը եւ Ադրբեջանը խաղաղության եւ պատերազմի միջեւ (ռուս.), Մ., 2005, էջ 305:

ԹՈՒՐՔ-ԱՋԵՐԻՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՇՏ ՈՒ ԽԱՂԱՂ ԱՊՐԵԼՈՒ ԲԱՆԱՁԵՎԸ

Ռաֆիկ Հովհաննիսյան

Նոյեմբերի 27-ին ռուսական «ՌԻԱ-Նովոստի» լրատվական գործակալության նախաձեռնությամբ կազմակերպվել էր Երևան-Մոսկվա հեռուստակամուրջ՝ նվիրված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ներկա մարտահրավերներին:

Հեռուստակամրջի մանրամասներին չեմ անդրադառնում, նշեմ միայն, որ երկու կողմից բավական ուշագրավ ելույթներ հնչեցին ու տեսակետներ արտահայտվեցին, եղան նաև լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցեր: Դրանցից մեկը հնչեցրեց ադրբեջանական «Լիդեր» հեռուստաընկերության լրագրողը, ակնհայտ ենթատեքստով մեր Ազգային ժողովի փոխխոսնակ Վահան Հովհաննիսյանին հարց ուղղելով, թե «Հայաստանը արդյո՞ք տարածքային պահանջներ ունի Թուրքիայից, և ապա՝ եթե Վահան Հովհաննիսյանն իր խոսքում, վկայակոչելով ռուս-թուրքական 1921 թվականի պայմանագրերը, հիշատակում է Նախիջևանի անունը, դրանից հետո կարելի՞ է հավատալ հայ և ադրբեջանցի ժողովուրդների խաղաղ գոյակցությանը»:

Այս մտավարժանքին, որն իրականում ոչ թե մեկ, այլ երկու հարց էր պարունակում, Վահան Հովհաննիսյանը պատասխանեց, թե «հայ-թուրքական

հարաբերությունների հետ Ադրբեջանն ընդհանրապես գործ չունի», իսկ ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական հարաբերությունների ապագային, ապա ինքը կհավատա դրանց, եթե, իր բառերով, «Ադրբեջանում դադարեն մեզ վրա ծախել խաղաղություն՝ տարածքների դիմաց»:

«Նախիջևանն իզուր չհիշատակեցի,- ընդգծեց Վահան Հովհաննիսյանը,- դա տարածք է, որը բռնազավթվել է Հայաստանից, իսկ հայկական բնակչությունը, որ 1920-ական թվականներին Նախիջևանի բնակչության 50 տոկոսն էր կազմում, բռնությամբ վտարվել է ադրբեջանական իշխանությունների կողմից»:

Ըստ իս, դիպուկ և նույնիսկ սպանիչ պատասխան էր:

Իրոք, Ադրբեջանը, եթե ինքն իրեն անկախ ու ինքնիշխան պետություն է համարում, ինչո՞ւ է անհանգստանում երրորդ պետության, տվյալ դեպքում՝ Թուրքիայի հանդեպ Հայաստանի ենթադրյալ հողային պահանջատիրությունից: Դա իսկապես Ադրբեջանի գործը չէ:

Բայց ավագ եղբայր թուրքերի նկատմամբ Հայաստանի հողային պահանջատիրության հարցը ազերիական քարոզչամեքենան օգտագործում է հետին նպատակով՝ իբր, տեսեք-տեսեք, Հայաստանը մի երկիր է, որը հարևանների տարածքային ամբողջականության սկզբունքն, իբր, չի ընդունում:

Հարկ եմ համարում ընդգծել, որ Հայաստանը, որպես պետություն, երբեք վիճարկելի չի համարել հարևանների տարածքային ամբողջականության սկզբունքը: Հայաստանը միշտ ասել և ասում է, որ մենք աչք չունենք հարևանների որևէ թիզ հողի վրա: Մեզ համար չափազանց կարևոր է, որ ամեն մեկն իր հողի տերը լինի, ոչ թե պատմական հանգամանքների բերումով Հայաստանից բռնազավթված հողերն իրենը համարի ու իր տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը մատի փաթաթան դարձնելով՝ ձգտի հավերժացնել հայկական հողերի օկուպացիան:

Կոնկրետ Թուրքիայի նկատմամբ Հայաստանը երբեք պետական մակարդակով հողային որևէ պահանջ չի ներկայացրել: Հակառակը պնդելը ուղղակի զրպարտություն է: Հայաստանը պետական մակարդակով Թուրքիային ներկայացրել և միշտ ներկայացնելու է Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու պահանջ: Սա է, որ Անկարան (իսկ Անկարային երկրորդելով՝ նաև Բաքուն) նենգափոխված կերպով աշխարհին հրամցնում է իբրև Թուրքիայի տարածքային ամբողջականությունը Հայաստանի կողմից չընդունելու արտահայտություն:

Ինչո՞ւ են թուրքերն այս նենգափոխումն անում: Որովհետև հրաշալի հասկանում են, որ Հայոց ցեղասպանության փաստն իրենց կողմից ընդունելուն պես ոչ միայն Հայաստանը, այլև ողջ համաշխարհային հանրությունը Թուրքիայի առաջ բարձրացնելու է ցեղասպանության ենթարկվածների շառավիղներին ոչ միայն բարոյական, այլև նյութական փոխհատուցում տալու, իրենց զոհերից բիրտ ու բարբարոս կերպով խլված պատմական Հայրենիքը հայ ժողովրդի վերապրող սերունդներին վերադարձնելու հարցը:

Ահա ինչու Անկարան Հայաստանի հետ դիվանագիտական բնականոն հարաբերություններ հաստատելուց խուսափում է՝ առաջադրելով կանխավ անընդունելի նախապայմաններ, որոնցից մեկն էլ այն է, թե թող Երևանը հրապարակավ հայտարարի, որ Թուրքիայից հողային պահանջ չունի:

Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա այդ հողի հայկական պատկանելությունը նույնիսկ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն ու նրա դաշնակից ռուս բոլշևիկները չէին վիճարկում: Դրա համար էլ 1921 թվականի ռուս-թուրքական երկու պայմանագրերում (մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի

պայմանագրերում) սևով սպիտակի վրա գրել են, թե «Նախիջևանը հանձնվում է Ադրբեջանի խնամակալությանը (պրոտեկտորատին), երրորդ կողմին (այսինքն Հայաստանին) չհանձնելու պայմանով»:

Եթե Լենինն ու Աթաթուրքը համոզված լինեին, թե Նախիջևանն ազերիական հող է, ինչո՞ւ էին այդ հողը «խնամակալությա՞ն հանձնում», և ոչ թե միացնում Ադրբեջանին: Ո՞վ է տեսել, որ սեփական հողը տիրոջը հանձնեն «խնամակալության»:

Այսինքն, Աթաթուրքն ու Լենինը շատ լավ գիտեին, որ Նախիջևանը ազերիական հող չէ, հայկական հող է, դրա համար էլ այդ հողը խնամակալությա՞ն էին հանձնում օտարին, Ադրբեջանին: Իսկ այդ օտարը, օգտվելով Խորհրդային կայսրության ոչ պակաս ոճրապարտ ղեկավարների թողտվությունից, փաստորեն խախտելով 1921 թվականի ռուս-թուրքական պայմանագրերը, Նախիջևանը հայտարարել է իր տարածքը, մտցրել իր կազմի մեջ՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով, որի իրավունքը ամենևին չուներ: Ու հիմա, այդ անիրավությունից տասնամյակներ անց, ազերի լրագրողը փորձում է Հայաստանի Ազգային ժողովի փոխխոսնակին հեգնել, թե ինչպե՞ս կարելի է խոսել հայ և ազերի ժողովուրդների խաղաղ գոյակցության մասին, եթե Վահան Հովհաննիսյանը տալիս է ադրբեջանակա՞ն Նախիջևանի անունը:

Սա ազերի շարքային լրագրողի և Հայաստանի Ազգային ժողովի փոխխոսնակի սովորական բանավեճ չէր, սրա մեջ չափազանց կարևոր ենթատեքստ կար: Իմ տպավորությամբ, Վահան Հովհաննիսյանն այս կերպ Հայաստանի դեմ անընդհատ ռազմի շեփորներ հնչեցնող Բաքվի կարծամիտներին հիշեցնում էր, որ 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերը միջազգայնորեն ապօրինի պայմանագրեր են, կնքվել են այն ժամանակ դեռ միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող կողմերի միջև՝ ի հաշիվ երրորդ կողմի, և համաձայն միջազգային իրավունքի՝ անվավեր են հենց ստորագրման պահից:

Երկրորդ՝ այդ ապօրինի պայմանագրերով մինչև ե՞րբ է հայկական Նախիջևանը մնալու Ադրբեջանի «խնամակալության» տակ՝ որպես «պրոտեկտորատ»: Ազերիները Նախիջևանում այդ ո՞ւմ են «խնամակալում», երբ այնտեղ արդեն 40 տարուց ավելի ոչ մի հայ չեն թողել:

Հայությանը Նախիջևանից դուրս մղելով՝ Ադրբեջանը, փաստորեն, կորցրե՞լ է նաև Նախիջևանի խնամակալության իրավունքը: Որովհետև նրանք կարող էին «խնամակալել» միայն իրենց համար ոչ-ազգակից էթնիկ հավաքականությանը՝ հայերին, և ոչ թե իրենց իսկ ազգակից ազերիներին:

Իրենք, որ այդքան խոսում են Լեռնային Ղարաբաղի ազերիներին իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու անհրաժեշտության մասին, չե՞ն մտածում, թե նույն հաջողությամբ մենք էլ կարող ենք հարց բարձրացնել նախիջևանահայությանը իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու մասին: Էլ չեմ ասում անցած պատերազմից հետո ազերիական գերիշխանության տակ մնացած մյուս հայկական բնակավայրերի նախկին հայ բնակիչների՝ իրենց ծննդավայրերը վերադառնալու իրավունքի մասին: Թե՞ իրենց թվում է՝ ազերի փախստականների վերադարձի խնդիրը պիտի լուծվի, իսկ հայ փախստականներինը՝ ոչ:

Դիմացինին վախեցնելով, պատերազմով սպառնալով, էժանագին հոխորտանքներով խաղաղ համաձայնագիր չե՞ն կնքում:

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ՅԱԼԿԱ.

ԵՐԲ Է ԳԱԼՈՒ ՍԹԱՍՊԻՄԱՆ ՍՊԱՍԻՐ

Վահե Սարգսյան

Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններ) և նրա շուրջ ստեղծվող աշխարհաքաղաքական իրադրության մասին գնալով ավելի շատ է խոսվում: Ջավախքի խնդրով, մանավանդ մեր օրերում, մեծապես հետաքրքրված են հատկապես զանգվածային լրատվական միջոցները, տարածաշրջանային հարցերով զբաղվող վերլուծաբանները՝ և Հայաստանից, և Վրաստանից, և Ռուսաստանից, ինչպես նաև օտարերկրյա ու միջազգային մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պատճառը Ջավախքի հայահոծ պատմական հայկական երկրամաս լինելն է, ինչպես նաև վերջինիս զբաղեցրած տարածքը, որը ռազմավարական կարևոր նշանակություն ունենալու պատճառով մեծ հետաքրքրություն է առաջացնում մի շարք մեծ ու փոքր տերությունների համար: Այս ամենով հանդերձ, սակայն, վերոնշյալ շրջանակներից շատերի մոտ (և հատկապես հայկական կողմի ներկայացուցիչների) նկատվում է մի նշանակալի «բաց». խոսելով Ջավախքի շուրջ ստեղծված այս կամ այն իրավիճակի մասին, միշտ շրջանցում են և հաճախ գրեթե չեն հիշատակում վերջինիս սահմանակից Սամցխեի (Աղիգենի, Ախալցխայի, Ասպինձայի շրջաններ) ու Թռեղքի (Ծալկայի շրջան) մասին: Այնինչ՝ և պատմական տեսանկյունից, և տարածաշրջանային առումով այս տարածքները նույն Ջավախքի ճակատագիրն ունեցած (և ունեցող) շրջաններ են, և գրեթե անհնար է առանց այս տարածքների ուսումնասիրել Ջավախքի հիմնախնդիրը: Դեռ ավելին, տեսնելով այս տարածքների ներկա վիճակը, կարելի է պատկերացնել Ջավախքը մի որոշ ժամանակ անց... Իսկ բարոյական տեսանկյունից գրեթե աններելի է (գոնե հայկական շրջանակների համար) այս շրջանների անտեսումը: Այս ամենի պատճառն առաջին հերթին մեր պատմական ոչ այնքան հարուստ գիտելիքներն են այս գավառների անցյալի ու ներկայի վերաբերյալ, և շատ ԶԼՄ-ներ ու թեման արծարծող շրջանակներ անգամ չեն տարբերակում Ջավախքը Ախալցխայից, կամ վերջիններս՝ Ծալկայից: Ուստի ձևավորվում է աղավաղված պատկերացում և երկրամասի հիմնախնդրի վերաբերյալ ոչ հստակ մոտեցում. մի շարք շրջանակներ ունեն յուրովի «վախվորած» վերաբերմունք այս հարցի շուրջ. նպատակահարմա՞ր է, արդյոք, խոսել Ախալցխայի կամ Ծալկայի մասին ընդհանրապես: Պատճառներից մյուսն էլ այն է, որ Սամցխեի և Թռեղքի հարցում Վրաստանն արդեն ունի «հաղթողի» կեցվածք, քանի որ լուրջ հաջողություններ է ունեցել այս գավառների էթնոժողովրդագրական պատկերը հօգուտ վրացիների փոխելու գործընթացում:

Ընդհանրապես և հատկապես վերջին շրջանում՝ հայկական իրականության մեջ տարածված է կաղապարված այն տեսակետը, ըստ որի Սամցխե-Ջավախք-Ծալկայի (այսուհետ՝ Երկրամաս) ողջ հայությունը ամբողջ աշխար-

հում սփռված հայկական համայնքների օրինակով պետք է ինտեգրվի վրաց պետությանը, հասարակական ու պետական գործընթացներին, մասնակցի երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման պրոցեսին, տեղ ունենա Վրաստանի պետական-վարչական կառավարող օղակներում, լայնորեն տիրապետի պետական (վրացերեն) լեզվին... Առաջին հայացքից իրատեսական և օրինաչափ թվացող այս մոտեցումներն ամբողջովին համապատասխանում են Վրաստանի և ՀՀ-ի պաշտոնական տեսակետներին, և, կարելի է ասել, այս ոսկե ընդհանուր հայտարարի հիման վրա է, որ երկար տարիներ կառուցվել և կառուցվում են հայ-վրացական այդքան բաղձալի բարիդրացիական հարաբերությունները: Նման տեսակետները Վրաստանի կողմից պաշտպանելը ամբողջովին հասկանալի է և մեկնաբանությունների կարիք չունի: Ամբողջովին «հասկանալի է» նման տեսակետները նաև ՀՀ-ի կողմից պաշտպանելու հանգամանքը. դեպի արտաքին աշխարհ ելքի հարցում Վրաստանից չափազանց մեծ կախումը և էլի մի քանի ծեծված հանգամանքներ հայրենի ղեկավար-բիզնեսմեններին ստիպել են հայտարարելու այն մասին, որ Երկրամասին վերաբերող բոլոր հիմնահարցերն ամբողջովին Վրաստանի ներքին խնդիրներն են, և ՀՀ-ն բացարձակ ի զորու (իրավասու) չէ միջամտելու: Երկրամասի հիմնահարցերից «ազատվելու» և վերջինս բախտի քմահաճույքին թողնելու ամենահեշտ ուղին է սա:

Նպատակը, որ այս հոդվածի միջոցով փորձել ենք դնել մեր առաջ, մինչ այժմ շրջանառվող վերոնշյալ տեսակետներին դեմ լինելն է, ավելին՝ ապացուցելու հակառակը, որի մասին հրապարակի վրա խոսվում է առաջին անգամ:

ԵՐԿՐԱՄԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ) ՉԻ ԿԱՐՈՂ ԻՆՏԵԳՐՎԵԼ ՎՐԱՍՏԱՆԻՆ, քանի որ՝

Վրաստանը, վրացական միջավայրը դեռ պատրաստ չէ իր մեջ իսկապես ինտեգրելու այլ ազգերի և ժողովուրդների: Մանրամասնենք. դեռ իր կազմավորման գործընթացում գտնվող, դեռ որպես ազգ վերջնականորեն չձևավորված վիրքացի/վիրացի/վրացի ցեղախմբերը դեռ չեն ստեղծել ինտեգրման համապատասխան միջավայր: Իսկ ներկա միջավայրում ինտեգրվելու պատրաստ ցանկացած այլ ազգ (ժողովուրդ), անկախ իրենից, ուղղակիորեն մասնակցում է այդ միջավայրում (տարածքում) ազգաստեղծման պրոցեսին կամ մեկ բառով արտահայտած՝ ձուլվում է: Օրինակները մեծաթիվ են, և սա մի պարզ աքսիոմ է:

Երկրամասի բնակչությունը (հայությունը), լինելով հայերով կոմպակտ բնակեցված տարածաշրջանի ժառանգորդ, ի տարբերություն այժմյան Վրաստանի տարածքում ապրող այլ հայության, արդեն և վերջնականորեն ձեռք է բերել ազգային դիմադրողականության շատ մեծ ներուժ, ինչը ևս խոչընդոտ է հանդիսանում վերջիններիս՝ վրաց միջավայրին ու մշակույթին ինտեգրվելուն (սերտաճելուն):

Երկրամասի բնակչությունը (հայությունը), լինելով մարդկության քաղաքակրթության բնօրրաններից մեկը հանդիսացող տարածաշրջանի՝ Հայկական լեռնաշխարհի բնիկ ժողովրդի (հայության) մի մասնիկը, ինչպես նաև ապրելով այդ տարածաշրջանի մի մասի (Մեծ Հայքի Գուգարք նահանգի գավառներից մի քանիսի վրա)՝ կուլտուրապես և էթնիկ զարգացածության առումով մշտապես գտնվել է բարձր մակարդակի վրա: Ելնելով այս հանգամանքից՝ Երկրամասի բնակչությունը (հայությունը) պարզապես առիթ և պահանջարկ չի ունեցել (և չունի) վերոնշյալ, պայմանականորեն ասած՝ «էթնոմշակութային բացը» լրացնել այլ ժողովուրդներից/իր հարևաններից/վրացիներից: Այս հանգամանքն, իրոք, մեծ դերակատարություն է ունեցել՝ հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երկրամասը գտնվելով շուրջ 70 տարի Խորհրդային Վրաստանի, իսկ դրանից առաջ՝ շուրջ 90 տարի Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Թիֆլիսի, Քութայիսի և այլ վրացապատկան նահանգների կազմում, գոնե նվազագույն չափով բռնած կլիներ ինտեգրման ճանապարհը:

Երկրամասի բնակչությունը (հայությունը) իր ազգային խոր ինքնագիտակցության հետ մեկտեղ նաև ունի իր պատմական հայրենիքում (ոչ վրացապատկան հողում) գտնվելու մշտական զգացողություն: Այս գործոնն, իրոք, ինչ-որ տեղ արհեստականացնում է վրացական ներկայությունը ինչպես Երկրամասի տարածքում, այնպես էլ վերջինիս բնակչության (հայության) շրջանում գոյություն ունեցող իրավահարաբերություններին առնչվող ամենատարբեր ոլորտներում: Ելնելով այս ամենից՝ հստակորեն կարելի է նշել հետևյալը. **ճիշտ չէ Երկրամասը «Վրաստանի հայկական համայնք» անվանելը: Իր պատմական հայրենիքի տարածքում տվյալ ժողովուրդը չի կարող համայնքի կարգավիճակ ունենալ: Վերջապես՝ բարոյական չէ այդ «համայնքը» և այդ համայնքի խնդ-**

դիրները նմանեցնել Ֆրանսիայի, Լիբանանի կամ Հավայան կղզիներում ապրող հայկական համայնքների և վերջիններիս խնդիրների հետ:

Բնական օրինաչափությամբ՝ որևէ քաղաքացի կարող է ծառայել (բառի լայն և ընդգրկուն իմաստով) միայն մեկ պետության: Բարոյական իմաստով անընդունելի է, երբ մարդը (քաղաքացին) ծառայում է մեկից ավելի պետությունների: Իսկապես, եթե ՀՀ-ն և մենք բոլորս մղում ենք Երկրամասի բնակչությանը (հայությանը) ինտեգրման, ապա նույնն է, որ վերջիններիս մղենք նվիրվելու վրաց պետականաշինությանն ու քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացին, մղենք վերջիններիս երդվել՝ ծառայելու վրացական բանակին ու ներքին զորքերին և, վերջապես, Վրաստան պետությանն ընդհանրապես: Այսքանից հետո՝ բոլոր փաստերը և օրինակները խոսում են հօգուտ այն բանի, որ Վրաստանի այդպիսի քաղաքացին (հայը) դառնում է պետության «սեփականությունը», ընդհանրապես օտարվում հայկական միջավայրից: Ավելորդ չենք համարում նշել այն հանգամանքը, որ Վրաստանի այսօրվա կառավարող շրջանակների մեծ մասը վերոնշյալ ճանապարհով «ինտեգրված» հայեր են: Իսկ նորություն ասած չենք լինի, եթե նշենք, որ այդպիսի մարդիկ, մեղմ ասած, այնքան էլ չեն ընդունվում հայկական միջավայրում՝ շատ դեպքերում արդարացիորեն որակվելով որպես դավաճան (այդպիսի պիտակ ստացան նաև Արցախում 1980-ականների վերջին Ադրբեջանին «ինտեգրված» որոշ հայազգի քաղաքական գործիչներ): Այս է թելադրում (պարտադրում) վրացական միջավայրը: Կուրորեն մղելով ինտեգրման, մենք գիտակցորեն կամ անգիտակցորեն Երկրամասի բնակչությանը (հայությանը) դնում ենք հետևյալ ընտրանքների մեջ. ա) ինտեգրվելով՝ ձուլվել/դառնալ Վրաստանի «սեփականությունը», օտարվել հայրենի ժողովրդից, բ) ինտեգրվելով՝ անբարոյականանալ, ծառայելով միաժամանակ երկու պետությունների, գ) չինտեգրման դեպքում՝ վրացական շրջանակների գործադրած ողջ ճնշումների հետ միասին զգալ նաև մայր հայրենիքի աջակցության լիարժեք բացակայությունը: Կա նաև հաջորդ՝ չորրորդ ընտրանքը, որին, ցավոք, հետևում է Երկրամասի հայ բնակչության մեծ մասը. դա արտագաղթն է՝ սեփական հայրենիքի լքումը:



Բացի այս ամենից, նշենք նաև մեկ կարևոր հանգամանք. մենք մինչ այժմ քննելով հարցադրումները, «ինտեգրում» տերմինն օգտագործել ենք դրական իմաստով, դրա մեջ ձգտելով տեսնել մեր համար շահեկան ինչ-ինչ գործընթացներ: Իրականում, սակայն, նույն «ինտեգրումը», ելնելով մեր շահերի դիտանկյունից, ամբողջովին բացասական երևույթ է, որն ըստ եվրոպական քաղաքագիտական բառարանների՝ նշանակում է «միավորում», «ներտաճում»:

Ամփոփելով՝ նշենք, որ այս ամենը չի նշանակում, թե Երկրամասի բնակչությունը (հայությունը) պետք է մեկուսանա Վրաստանից, կամ թշնամանա վերջինիս հետ, ընդհակառակը՝ կազմակերպված, հայեցի, ուժեղ, սոցիալ-տնտեսապես զարգացած, ազգային դիմադրողականության հզոր ներուժով օժտված ժողովրդով միայն Երկրամասը կարող է կերտել և իր, և Վրաստանի ապագան: Միայն այդպիսի Երկրամասի հետ կարող է հաշվի նստել նաև Վրաստանը: Միայն այդպիսի Երկրամասի բնակչությունը (հայությունը) կարող է, իրեն անհրաժեշտ լինելու դեպքում, սովորել վրացերեն լեզուն կամ դառնալ Վրաստանի լիարժեք քաղաքացի: Եվ վերջապես՝ միայն այդպիսի Երկրամասը կարող է իրապես ամբողջապես ծառայել և Վրաստանին, և ՀՀ-ին, և հայ-վրացական բարեկամական հարաբերություններին: Իսկ հարց է ծագում. ինչպե՞ս ունենալ այդպիսի Երկրամաս: Առաջին հերթին պետք է ունենալ հզոր ու ազգային ՀՀ: Երկրորդ քայլով Երկրամասում պետք է ուժեղացնել հայկական գործոնը: «Ինտեգրման» քողի տակ Երկրամասը պետք չէ հանձնել Վրաստանի քմահաճույքին: Ցավոք, առայժմ, այդ գործընթացն է իրականանում:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU LIBRARY

ՎՐԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Պետության ազգային անվտանգության կարևորագույն որոշումներն ընդունվում են տվյալ երկրի (ազգային) անվտանգության խորհուրդների (այսուհետ՝ ԱԽ) կողմից, որոնց գործունեությունը սահմանվում է այդ պետության սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով: Համաշխարհային պրակտիկայում ԱԽ-ների օրենսդրությունում, թեև ենթադրում են ընդհանրական նպատակներ, սակայն դրանց իրավական ձևակերպումները բավական բազմազան են և ուրույն: ԱԽ հիմնադրույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդլայնել քաղաքական պատկերացումները երկրի որոշումների ընդունման մեխանիզմի, ԱԽ անդամների միջև փոխազդեցության խնդիրների մասին: Հոդվածում մանրակրկիտ ուսումնասիրվում են Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ԱԱԽ) իրավական, իրավաքաղաքական հիմնական ասպեկտներն ու առանձնահատկությունները, բերվում համեմատական վերլուծություններ այլ երկրների օրինակներով:

Վրաստանի ԱԱԽ օրենսդրության առանձնահատկությունները

Վրաստանի ԱԱԽ իրավական հիմքերը դրվել են դեռևս 1995-1996 թթ.: ԱԱԽ օրենսդրական դաշտը ապահովում են երկրի 1995 թ. ընդունված գլխավոր օրենքը՝ Սահմանադրությունը, «Ազգային անվտանգության խորհրդի մասին» երկու օրենքները: Վրաստանի ԱԱԽ առաջին օրենքն ընդունվել է Սահմանադրության ընդունումից մեկ տարի անց՝ 1996 թ.: Ինչ վերաբերում է ԱԱԽ երկրորդ օրենքին, ապա այն կիրառություն է ստացել միայն վերջերս՝ «վարդերի հեղափոխությունից» հետո և գործում է մինչ օրս: Եթե երկու խոսքով ամփոփենք երկու օրենսդրական ակտերի հիմնական տարբերությունները, պիտի նշենք, որ ԱԱԽ նախորդ

օրենքը, ի տարբերություն գործող օրենքի, առանձնանում էր որոշ հիմնադրույթներում նկատելի «լիբերալության» կամ «խաղաղասիրական» տարրերով: Մասնավորապես՝ օրենսդրության համաձայն, երկրի ԱԱԽ նիստերին կարող էին ուղղակի մասնակցել Աջարիայի ինքնավարության, ինչպես նաև Աբխազիայի առաջնորդները: Այս հիմնադրույթները բացակայում են գործող օրենքում: Ներկայիս օրենքում նման կարգավիճակ ընձեռված է միայն Վրաստանի խորհրդարանի նախագահին: Մյուս կողմից, նախորդի համեմատ, գործող օրենքի հիմնադրույթների զգալի մասն առանձնանում է խստության, սահմանափակիչ և ռազմականացված շեշտադրումներով:

Ինչևէ, համաձայնենք, որ նախորդի հետ համեմատ գործող օրենքը միջազգային իրավունքի տեսանկյունից առավել կատարելագործված ու միջազգային չափանիշներին համարժեք մի փաստաթուղթ է: Գործող օրենքի առավելություններից մեկն էլ այն է, որ դրա նախագծման ու մշակման գործընթացին մասնակցել են ոլորտում հայտնի, հիմնականում արևմտյան փորձագիտական կազմակերպություններն ու մասնագետները: Մասնավորապես հիշատակենք առաջին հերթին Միջազգային անվտանգության խորհրդատվական խորհրդի (ՄԱԽԽ(Internacional security advisory board)գործունեությունն ու ավանդը Վրաստանի ԱԱԽ-ի և ընդանրապես երկրում գործող ազգային անվտանգության ինստիտուտների արդիականացման ու տրանսֆորմացման գործում[1]:

ՄԱԽԽ-ն Վրաստանում իր գործունեությունն սկսել է դեռևս 1998 թ.-ից վրաց իշխանությունների հրավերով՝ Վրաստանի նախագահին և ԱԱԽԽ-ին անկախ ռազմավարական խորհրդատվություն տրամադրելու նպատակով: 1999 թ. ՄԱԽԽ պատրաստեց իր զեկույցը՝ նվիրված Վրաստանում ազգային անվտանգության սեկտորներում ու ինստիտուտներում բարեփոխումների անցկացման գործընթացին, որի արդյունքում ՄԱԽԽ փորձագիտական խումբը պատրաստում էր տարեկան զարգացման հաշվետվություններ և տրամադրում դրանք երկրի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին (վերջին՝ ամփոփիչ տարեկան հաշվետվությունը տեղի է ունեցել 2006 թ.):

Ստորև փորձ է կատարվում վեր հանել Վրաստանի ԱԱԽ օրենսդրական հիմքերի ընդհանուր նկարագիրն ու հիմնական առանձնահատկությունները՝ տալով այլ երկրների անվտանգության խորհուրդների իրավական հիմքերի համեմատական վերլուծությունը:

Դասակարգում՝ ըստ կատեգորիաների - Համաշխարհային պրակտիկայում ԱԽ-ները՝ իրենց համապատասխան իրավական բազայով, ազգային անվտանգության և դրա ապահովման հասկացությունների տակ ենթադրում են երկու՝ ռազմական կամ ռազմականացված և քաղաքացիական ուղղվածություն: Այլ կերպ ասած, պետության անվտանգության ու պաշտպանության, դրանց ապահովման հիմնախնդիրներին տվյալ պետության ԱԽ-ի օրենսդրական ակտերում հռչակված նպատակներն ու գործառույթները հիմնվում են այդ երկրի ռազմական, պաշտպանական ներուժի և քաղաքացու իրավունքների ու ազատության, հասարակության բարեկեցության ապահովման սկզբունքների վրա: Հստակեցնենք, որ թեև վերը նշված երկու մոտեցումները և դրանց իրացման մեխանիզմները տեսականորեն փոխկապակցված են և փոխ- լրացնում են մեկը մյուսին, այնուամենայնիվ, գործնականում դրանց իրացման ընթացակարգը տալիս է ոչ համարժեք, հաճախ էլ հակադիր վեկտորներ: Էապես տարբերակվում են նաև ազգային անվտանգության և դրա ապահովման համապատասխան չափորոշիչների ու ռիսկերի գնահատման մեթոդաբանությունները:

Այսպես, Վրաստանի «Ազգային անվտանգության խորհրդի մասին» գործող օրենքը, հիմնադրույթների ձևակերպումից դատելով, դասվում է ռազմականացված խորհրդի կատեգորիայի տակ: Օրենքի առաջին՝ «Ազգային անվտանգության խորհուրդը» հոդվածի 1-ին կետում սահմանված է. «Վրաստանի Սահմանադ-

ության 99-րդ հոդվածի համաձայն, Ազգային անվտանգության խորհուրդը, որը ղեկավարում է Վրաստանի նախագահը, ստեղծվում է ռազմական շինարարության և ազգային պաշտպանության կազմակերպման նպատակներով»: Սույն օրենքի երկրորդ՝ «Ազգային անվտանգության խորհրդի իրավասությունները» հոդվածում երկրի ազգային անվտանգության ապահովման տակ առաջին պլան է մղվում պաշտպանական, ռազմական ասպեկտը: Առանձնացնենք սույն հոդվածում ներկայացված մի քանի հիմնական կետեր (մնացած կետերի մեծ մասում այս կամ այն չափով ազգային անվտանգության ապահովման տակ նույնպես դրվում է ռազմական, պաշտպանական ասպեկտը).

ուսումնասիրում է ներքին ու արտաքին քաղաքականության այն հիմնական հարցերը, որոնք ուղղակի կապված են ազգային պաշտպանության ու անվտանգության ապահովման հետ.

• ուսումնասիրում է ծրագրեր՝ զինված ուժերի շինարարության և հզորացման, դրանց իրականացումն ապահովելու նպատակով.

• հետազոտում և վերլուծում է միջազգային հակամարտությունների գոտիներում առկա իրավիճակն ու հեռանկարները.

• մշակում է նախագծեր հավաքական անվտանգության համակարգերի հետ Վրաստանի համագործակցության վերաբերյալ.

• մշակում է օրենքների և այլ նորմատիվային ակտերի նախագծեր՝ պաշտպանական և անվտանգության հարցերի վերաբերյալ.

• ուսումնասիրում է զինված ուժերի մարտունակությանն ու մոբիլիզացիոն պատրաստությանը վերաբերող հարցեր.

• կոորդինացնում է ռազմական գիտահետազոտական ուսումնասիրություններ.

• ամփոփում է ռազմական արդյունաբերության գործունեության ու զարգացման հեռանկարները.

• քննարկում է զինծառայողների պատրաստման, բաշխման, հավաքագրման և մոբիլիզացիային վերաբերող հարցեր.

• ուսումնասիրում է արտակարգ իրադրություն հայտարարված շրջանում Վրաստանի նախագահի ներկայացուցչի նշանակմանը առնչվող հարցեր:

Վրաստանի ԱԱԽ օրենքը, անվտանգության ապահովման հասկացության տակ քաղաքացիական կամ ռազմական տարանջատման տեսանկյունից, ըստ էության, չի տարբերվում 1947 թ. ստեղծված ԱՄՆ-ի ազգային անվտանգության խորհրդի օրենքից: ԱՄՆ-ի համապատասխան օրենքում ազգային անվտանգության ու դրա ապահովման հասկացությունների տակ հասկացվում է ուժային, հետախուզական, ներքին անվտանգության և կառավարական այլ ծառայությունների ու բաժանմունքների համագործակցությունը՝ առավելագույնս ինտեգրելու ներքին, արտաքին ու ռազմական քաղաքականությունը՝ ազգային անվտանգության համատեքստում: Վրաստանի կամ ԱՄՆ-ի համեմատ, ռազմական ասպեկտներն առավել ընդգծված են հատկապես Բելառուսի ԱԽ-ի հայեցակարգային սահմանումներում՝ նախ այն պարզ պատճառով, որ Անվտանգության խորհրդի օրենսդրության հիմքերն ամրագրված են երկրի «Ռազմական հայեցակարգ» փաստաթղթում[2]: Գրեթե նույն օրենսդրական սկզբունքով է գործում նաև Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը, որի անդամների շարքում նույնպես զգալի է զինվորականների քանակը[3]:

Ի տարբերություն Վրաստանի կամ Միացյալ Նահանգների, այլ սկզբունքի վրա է հիմնված մասնավորապես ՌԴ անվտանգության խորհրդի օրենսդրությունը, ուր անվտանգության հասկացության, նրա գործառույթների տակ դրվում է նախ և առաջ մարդու, քաղաքացու անվտանգությունը: Մասնավորապես, 2004 թ. հունիսի 7-ին ՌԴ նախագահի կողմից ստորագրված «Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի մասին» հրամանագրի երրորդ գլխում Անվտանգության խորհրդի հիմնական խնդիրները հանդիսանում են.

մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատության պաշտպանության, ՌԴ սուվերենության, անկախության և պետական ամբողջականության պահպանման, պետական իշխանության մարմինների փոխգործունեության կազմակերպման, պետության ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանման ուղղությամբ ՌԴ նախագահի կողմից՝ վերջինիս սահմանադրական լիազորությունների իրականացման համար պայմանների ապահովում.

անհատի, հասարակության և պետության կենսական նշանակության շահերի՝ որպես ազգային անվտանգության ապահովման հիմնական օբյեկտների սահմանում, այդ օբյեկտների անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքների բացահայտում.

անհատի, հասարակության և պետության անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքների չեզոքացման ուղղությամբ որոշումների պատրաստում.

արտակարգ իրավիճակների կանխման ուղղությամբ օպերատիվ որոշումների պատրաստում և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման կազմակերպում, որոնք կարող են հանգեցնել սոցիալ-քաղաքական, տնտեսական, ռազմական, բնապահպանական և այլ էական հետևանքների:

ՌԴ ԱԽ օրենսդրական հիմքերը չեն տարբերվում նաև Ադրբեջանի «Անվտանգության խորհրդի մասին» օրենքից (ստեղծվել է 1997 թ. ապրիլի 10-ին երկրի նախագահի հրամանագրով): Օրենքում հստակորեն սահմանվում է, որ «Անվտանգության խորհուրդը ապահովում է պայմաններ Ադրբեջանի նախագահի կողմից վերջինիս սահմանադրական լիազորությունները՝ քաղաքացու իրավունքների ու ազատության պաշտպանության, Ադրբեջանական Հանրապետության անկախության ու տարածքային ամբողջականության պահպանման ուղղությամբ իրականացնելու համար»:

Վրաստանի ԱԱԽ-ի իրավական հիմնադրույթների կարևորագույն առանձնահատկություններից է խորհրդի կարգավիճակի, երկրի կարևորագույն որոշումների ընդունման համակարգում նրա դերի հարցը: Որպես կանոն ԱԽ-ներն ունենում են խորհրդատվական ինստիտուտի կարգավիճակ. այս շարքին են դասվում Միացյալ Նահանգների, Թուրքիայի, Իսրայելի, Լատվիայի, Բելառուսի, Մոլդովայի, Ղազախստանի, Ադրբեջանի, ինչպես նաև Վրաստանի ԱԱԽ-ները[4]:

Այսպես, Վրաստանի «Ազգային անվտանգության խորհրդի մասին» օրենքի 1-ին հոդվածի երկրորդ կետի համաձայն, «Վրաստանի ազգային անվտանգության խորհուրդն իրենից ներկայացնում է Վրաստանի նախագահի հովանու ներքո խորհրդատվական մարմին»: Ի սկզբանե հստակեցնենք, որ անվտանգության խորհրդի «խորհրդատվական կարգավիճակ» սահմանումը, պայմանավորված տարբեր երկրների, տվյալ դեպքում՝ Վրաստանի ներքին քաղաքական, ներիշխանական ապարատից, կարող է մեծացնել քաղաքական ասպեկտը և ռիսկային գործոնը՝ խորհրդի որոշումների ընդունման համակարգում: Խնդիրն այն է, որ ԱԽ-ի կարգավիճակի հարցն ինքնին ենթադրում է պետական պատասխանատվության որոշակի մեխանիզմ: ԱԱԽ-ի խորհրդատվական կարգավիճակը թեև ընդունված որոշումների համար պատասխանատվությունից չի ազատում որոշումը կայացնող պաշտոնյաներին, սակայն կարող է որոշակի անհամաչափություն (կամ անհամաձայնություն) առաջացնել ԱԽ-ում՝ ինստիտուտի և երկրի կարևորագույն որոշումների համար պատասխանատու պաշտոնյաների միջև ձևավորված երկխոսությունում (ինստիտուտ-պաշտոնյա),ինչը հետևաբար կարող է բացասաբար ազդել որոշումների կայացման գործընթացի և արդյունքների վրա: Մյուս կողմից, իհարկե, վերոնշյալ անհամաչափության գործոնը կախված է նաև տվյալ պետության որոշումների ընդունման համակարգի արդյունավետությունից: ԱՄՆ-ի կամ Թուրքիայի պարագայում, որոնք ազգային անվտանգության ինստիտուտների կայացման հարցում ունեն պատմական մեծ անցյալ և փորձառություն, ռիսկային գործոնը բավական ցածր է նորանկախ այնպիսի պետությունների համեմատ, ինպիսին է Վրաստանը[5]:

Փոքր-ինչ այլ հարթության վրա է գտնվում է

Ուկրաինայի անվտանգության խորհրդի (Ազգային անվտանգության ու պաշտպանության խորհուրդ) իրավական կարգավիճակը, որին երկրի Սահմանադրության և 1996 թ. ընդունված «Ուկրաինայի ազգային անվտանգության ու պաշտպանության խորհրդի մասին» օրենքի համաձայն, տրվում են համեմատաբար սահմանափակ լիազորություններ: Ուկրաինայի Սահմանադրության 5-րդ՝ «Ուկրաինայի նախագահը» գլխի 107-րդ հոդվածի համաձայն, «Ուկրաինայի ազգային անվտանգության ու պաշտպանության խորհուրդը հանդիսանում է Ուկրաինայի նախագահին կից ազգային անվտանգության ու պաշտպանության հարցերը համակարգող մարմին»[6]:

Ի տարբերություն նշված երկրների, հակադիր դաշտում է տեղավորվում մասնավորապես ՌԴ ԱԽ-ն, որին տրվում է բարձրագույն օրենսդրական կարգավիճակ, ինչը, բնականաբար, ենթադրում է ինստիտուտի և նրա անդամների պատասխանատվության մեծացում:

Վրաստանի և ընդհանրապես ԱԽ-ների օրենսդրության առանցքային կետերից մեկն էլ առնչվում է խորհրդի անդամների կազմին: ԱԽ-ի կազմին վերաբերող իրավական հիմնադրույթների վերլուծությունը թույլ է տալիս պարզաբանել նախ երկրի անվտանգության գծով որոշումների կայացման պատասխանատուներին, ԱԽ-ի անդամների իրավական կարգավիճակին, երկրի իշխանական-քաղաքական դաշտում նրանց ազդեցությանն ա- ռնչվող հարցեր: Այսպես, Վրաստանի ԱԱԽ օրգանական օրենքի երրորդ՝ «Ազգային անվտանգության խորհրդի կազմը» հոդվածի 1-ին և 2-րդ կետերում սահմանված է. «Ազգային անվտանգության խորհրդի նիստերը ղեկավարում է Վրաստանի նախագահը: Ազգային անվտանգության խորհրդի մշտական անդամներն են՝ Վրաստանի վարչապետը, ԱԳՆ նախարարը, ՊՆ նախարարը, ՆԳՆ նախարարը, ֆինանսների նախարարը և Նախագահի՝ ազգային անվտանգության գծով խորհրդականը՝ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը»: Սույն հոդվածի երրորդ կետի համաձայն, «Վրաստանի խորհրդարանի նախագահը ուղղակի մասնակցություն ունի Ազգային անվտանգության խորհրդի նիստերին»: Երկրի խորհրդարանի նախագահը, փաստորեն, չունի ԱԱԽ-ի մշտական անդամի կարգավիճակ, այլ ներկայանում է որպես խորհրդի անդամ (գրեթե նույն կարգավիճակն ունի նաև Ուկրաինայի խորհրդարանի նախագահը): Ի դեպ, երկրի օրենսդրությունում գոյություն չունի «մշտական անդամների» և «ուղղակի մասնակիցների» կարգավիճակների տարբերակման որևէ հստակություն: Ի տարբերություն Վրաստանի, Ադրբեջանի ԱԽ-ի օրենքում, որտեղ չկա մշտական և ոչ մշտական անդամների կարգավիճակի սահմանում, խորհրդարանի (Միլլի մեջլիս) ղեկավարը Ադրբեջանի նախագահից հետո առաջնորդում է խորհրդի անդամների ցուցակը (վերջինիս հաջորդում են երկրի վարչապետը և Նախագահի աշխատակազմի ղեկավարը):

ԱԱԽ-ի կազմին առնչվող հարցերից մեկն էլ վերաբերում է խորհրդի անդամների նշանակման ու հեռացման կանոնակարգին: Վրաստանի Սահմանադրության 4-րդ՝ «Վրաստանի նախագահը» գլխի 73-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, «Վրաստանի նախագահն է նշանակում Ազգային անվտանգության խորհրդի անդամներին, նախագահում նրա նիստերը»: Ինչ վերաբերում է «Ազգային ան-վտանգության խորհրդի մասին» օրգանական օրենքին, ապա այստեղ ձևակերպված չէ անդամներին վերաբերող որևէ սահմանում, բացի խորհրդի քարտուղարից, որին ազատում ու նշանակում է երկրի նախագահը: Ի դեպ, թեև ԱԱԽ-ի քարտուղարն ունի մշտական անդամի կարգավիճակ և միաժամանակ ստանձնում է երկրի նախագահի՝ անվտանգության գծով խորհրդականի պաշտոնը, սակայն նրա իրավասությունները զգալիորեն կենտրոնացած են խորհրդի կազմակերպչական-համակարգող գործառույթների շրջանակներում, և թերևս չունի լուրջ ազդեցություն խորհրդի որոշումների վրա[7]:

«Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի ԱԱԽ-ի կազմը, ինստիտուտի որոշումների կայացման համակարգը, ժամանակ առ ժամանակ, ենթարկվել է փոփոխությունների, որոնք հիմնականում պայմանավորված էին կառավարական հաճախակի դարձած վերադասավորումներով ու ներիշխանական/քաղաքական զարգացումներով: Ի սկզբանե ասենք, որ ակնհայտ տարբերություն կա նոյեմբերյան իշխանափոխության առաջին տարիներին ձևավորված և գործող ԱԱԽ-ների միջև՝ կապված որո-շումների կայացման մեխանիզմում խորհրդի պատասխանատուների ազդեցության բաշխվածության, միջանձնային հարաբերությունների հարցերի հետ: Իշխանափոխությունից հետո երկրի վերնախավում գոյացած իշխանական երկու ճամբարների միջև հավասարակշռությունը՝ ի դեմս Սահակաշվիլու և Ժվանիա-Բուրջանաձե զույգի, արտացոլվում էր նաև Անվտանգության խորհրդում: Իրադրությունը կտրուկ փոխակերպվեց հատկապես Ժվանիայի մահից հետո, երբ վերնախավում սկսեց հիմնականում իշխել նախագահական թևը, և թուլացավ Բուրջանաձեի իշխանությունը: Արդյունքում՝ ԱԱԽ-ի որոշումների կայացման համակարգում զգալի դարձավ սահակաշվիլյան թիմի ազդեցությունը՝ ի դեմս ՊՆ նախկին ղեկավար Ի. Օքրուաշվիլու, ՆԳ նախարար Վ. Մերաբիշվիլու, արտգործնախարար Գ. Բեժուաշվիլու, ՊՆ նախկին նախարար Գ. Բարամիձեի:

Պաշտպանության նախարարի պաշտոնից Օքրուաշվիլու ազատումից հետո է՛լ ավելի ընդլայնվեցին նախագահական թևի քաղաքական մենիշխան լիազորությունները այդ ինստիտուտում: Երկրի ԱԱ -ի ներկայիս կազմում կառավարության ղեկավար Զ. Նոգաիդելին, իշխանությունում չունի լուրջ քաղաքական ազդեցություն ու հեղինակություն, ՆԳՆ և ԱԳՆ ղեկավարները՝ Վ. Մերաբիշվիլին ու Գ. Բեժուաշվիլին չունեն իշխանական խնդիրներ նախագահի հետ, իսկ ՊՆ ղեկավարի պաշտոնում նորանշանակ, երիտասարդ (ծնվել է 1978 թ.) Դավիթ Կեզերաշվիլին ավելի շուտ «տեխնիկական» նախարար է: Ֆինանսների նախարարության նորանշանակ ղեկավար, նույնպես երիտասարդ (ծնված 1975 թ.) Նիկա Գիլաուրին, որը 2004-2007 թթ. հանդիսանում էր երկրի էներգետիկայի նախարարը, քաղաքական դաշտում համեմատաբար չեզոք կերպար է: Ինչպես արդեն նշվեց, օրենսդրության համաձայն, ԱԱԽ-ում երկրի խորհրդարանի նախագահը՝ ի դեմս Բուրջանաձեի, չունի մշտական անդամի կարգավիճակ, իսկ քաղաքական առումով բավական թույլ են նրա դիրքերը, այդ թվում և խորհրդի ներսում[8]:

Ինչ վերաբերում է ԱԱԽ-ի քարտուղարին, ապա վերջին երկու տարիներին այդ պաշտոնը զբաղեցնում է Կոնստանտին Քեմուլարիան: Վերջինս մասնագիտությամբ իրավագետ է, բուհական կրթության մի մասը ստացել է Մոսկվայում, «վարդերի հեղափոխությունից» հետո՝ 2004 թ. նշանակվել ՌԴ-ում Վրաստանի դեսպան, իսկ մինչ ԱԱԽ-ի քարտուղարի պաշտոնը ստանձնելը՝ երկրի փոխվարչապետ էր (ռուս-վրացական հարաբերությունների գծով): 63-ամյա Կ. Քեմուլարիան, որը չի դասվում «վարդերի հեղափոխության» առաջատարների կամ ուղղակի մասնակիցների շարքին, ըստ ամենայնի նշանակվել է ԱԱԽ-ի քարտուղարի պաշտոնում ռուս-վրացական հարաբերու-թյունների համակարգման նպատակով (հաշվի առնելով ոլորտում նրա դիվանագիտական փորձառությունները ու անձնական կապերը) և թերևս չունի քաղաքական ազդե-ցության լուրջ լծակներ՝ խորհրդի որոշումների կայացման համակարգում:

Անդրադառնալով Վրաստանի ԱԱԽ-ի անդամների իրավաքաղաքական փոխդասավորվածության հարցերին, առանձնացնենք ևս մեկ կարևոր կետ, որը չի նկատվում սույն հոդվածում նշված գրեթե բոլոր երկրների Ա իրավական դաշտում[9]: Վրաստանի ԱԱԽ գործող օրենքի համա-ձայն «Վրաստանի ԱԱԽ-ի նիստերին մասնակցելու նպատակով, Վրաստանի նախագահի որոշմամբ, կարող են հրավիրվել այլ անձինք ևս» (Երրորդ հոդված, 4-րդ կետ): Ընդ որում, օրենքում որևէ հստակ ձևակերպում չկա Վրաստանի ԱԱԽ-ի նիստին հրավիրված տվյալ պաշտոնյայի քաղաքացիու-

թյան վերաբերյալ: Խորհրդանշական է, որ «վարդերի հեղափոխությունից» հետո երկրի ԱԱԽ-ի նիստերին, որտեղ սեղանին են դրվել առավել մեծ կարևորություն ունեցող հարցեր, Սահակաշվիլու հրավերով մասնակցություն են ունեցել հիմնականում ԱՄՆ-ի համապատասխան ներկայացուցիչները (օրինակ, 2004 թ. մայիսյան աջարական ճգնաժամի օրերին գումարված Վրաստանի ԱԱԽ-ի նիստին մասնակցում էր նաև երկրում ԱՄՆ-ի դեսպանը):

Եզրակացություն

Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի ներկայիս կազմը, խորհրդի ներսում որոշումների վրա նախագահական թևի մենիշխանությունը թույլ է տալիս հանգել մի քանի հիմնական հետևությունների.

հապճեպ կամ ոչ այնքան շրջահայաց որոշումների կայացում,

երկրի ներքին ու արտաքին քաղաքական կուրսում ոչ շրջահայաց քայլերի ձեռնարկման հավանականության մեծացում,

արտաքին ու ներքին (ռուս-վրացական սպեկտր, հակամարտություններ) կուրսի խստացում,

հակամարտության օջախներում ռազմական բախումների հավանականության մեծացում:

---

[1] Միջազգային անվտանգության խորհրդատվական խորհուրդը տեղակայվում է Մեծ Բրիտանիայում: Այն ձևավորվել է 1996 թ. մերձբալթյան երկրների ԱԳՆ և ՊՆ ղեկավարների խնդրանքով՝ նախկին խորհրդային համակարգից դեպի եվրոատլանտյան համակարգ անցնելու գործընթացին աջակցելու նպատակով:

[2] Ռազմական հայեցակարգի երկրորդ՝ «Ռազմական անվտանգության ռազմական-ռազմավարական հիմքերը» գլխում նշվում է, որ «Անվտանգության խորհուրդը Բելառուսի Հանրապետության ռազմական անվտանգության շահերի ապահովման համատեքստում սահմանում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները, ռազմական շինարարության ու Զինված ուժերի զարգացման սկզբունքները, կազմակերպում պետական կառավարման հանրապետական ու ռազմական կառույցների միջև փոխհամագործակցությունը»:

[3] Թուրքիայի «Ազգային անվտանգության խորհրդի մասին» գործող օրենքում սահմանվում է, որ «ԱԱԽ-ն, որը նախագահում է երկրի նախագահը, բաղկացած է վարչապետից, սպայակույտի պետից, պաշտպանության, ՆԳ ու ԱԳ նախարարներից, ցամաքային, ռազմածովային, օդուժի հրամանատարներից, ժանդարմերիայի գլխավոր հրամանատարից»:

[4] Հետաքրքրական է, որ Իսրայելի ազգային անվտանգության խորհուրդը ստեղծվել է միայն վերջերս՝ 1999 թ. մարտին, կառավարության 4889 որոշման հիման վրա: Իսրայելի ԱԱԽ-ն գործում է երկրի վարչապետի գրասենյակին կից: Այդ օրենքի համաձայն, «ԱԱԽ-ի նպատակը Իսրայելի վարչապետին ու կառավարությանը՝ որպես ազգային անվտանգության հարցերով կենտրոնական խորհրդատվական մարմին սպասարկումն է»: Իսրայելի ԱԱԽ-ն գերազանցապես կենտրոնացած է պաղեստինյան հիմնահարցի, ահաբեկչության դեմ պայքարի ոլորտներում:

[5] Ի դեպ, Թուրքիայի ԱԱԽ-ն ձևավորվել է դեռևս նախորդ դարի 30-ականներին, ավելի վաղ, քան ԱՄՆ-ի համապատասխան ինստիտուտը (1949 թ.): Մասնավորապես, 1933 թ. ապրիլի 24-ին 14443 որոշմամբ հիմնադրվեց այսպես կոչված Թուրքիայի «Գերագույն պաշտպանական ասամբլեան»՝ Թուրքիայի սպայակույտի պետի (Chief of the General staff) նախաձեռնությամբ: Միայն 1962 թ. այն վերանվանվեց «Ազգային անվտանգության խորհուրդ»:

[6] Կոորդինացիոն կարգավիճակ է տրվում նաև Բելառուսի անվտանգության խորհրդին՝ այդ երկրի համապատասխան օրենսդրության համաձայն:

[7] Ի տարբերություն Վրաստանի, մասնավորապես ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղարը ոչ միայն ունի խորհրդի մշտական անդամի կարգավիճակ, այլև նրա ձայնը որոշիչ նշանակություն ունի ինստիտուտի որոշումների ընդունման գործում: Ավելին, սույն օրենքի 5-րդ կետի համաձայն, «Անվտանգության խորհրդի մշտական և ոչ մշտական անդամները նշանակվում ու հեռացվում են ՌԴ նախագահի կողմից՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի ներկայացման հիման վրա»:

[8] Բուրջանաձեն լուրջ խնդիրներ ունի նաև խորհրդարանական մեծամասնության հետ, որը ներկայացնում է իշխանական «Ազգային շարժում» կուսակցությունը:

[9] Բացառություն է կազմում Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը, որի օրենքում սահմանվում է, որ «խորհրդի նիստերին իրենց տեսակետները հայտնելու նպատակով կարող են հրավիրվել այլ նախարարներ և անձինք»:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ Ա ՌՈՒՄԻՆԻԱՆ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Արմինե Ամիրյան

Ռումինիայի հայ համայնքը ավելի քան 600 տարվա պատմություն եւ կարեւոր դերակատարություն ունի հայ-ռումինական հարաբերությունների զարգացման գործում: Հայ-ռումինական հարաբերությունները, որպես կանոն, բնորոշվում են բարեկամական: Հայաստանի անկախացումից հետո դրանք առավել լայն թափով են զարգանում: Անցած տարիների ընթացքում երկու երկրների նախագահների մակարդակով տեղի են ունեցել մի շարք փոխայցելություններ: Այս տարի նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահն ու խորհրդարանական պատվիրակություններ են այցելել Ռումինիա: Պաշտոնական այցով Հայաստան է եկել նաեւ Ռումինիայի պաշտպանության նախարարը: Հայ-ռումինական հարաբերություններում մեծ տեղ է հատկացվում տնտեսական հարաբերությունների զարգացմանը, որն, ի դեպ, նախորդ տարիների ընթացքում զարգացման լուրջ միտումներ է դրսեւորել: 2006 թվականի տվյալներով՝ երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 84 մլն. դոլար:

Եվրոպայի հնագույն հայ համայնքներից մեկը տեղակայված է հենց Ռումինիայում, թեեւ ներկայումս այստեղ բնակվող հայերը մեծ թիվ չեն կազմում: Ռումինիայում հայերի մտավոր կարողությունների մասին բոլորը հպարտությամբ են խոսում. այստեղ կան հայ գրողներ, լրագրողներ, բժիշկներ, հայտնի ձեռներեցներ: Այստեղ հրատարակվում է երկու հայկական թերթ, գործում է «Արարատ» հրատարակչությունը, որտեղ տարեկան 15 անուն գիրք է լույս տեսնում: Դրանց մեծ մասը վերաբերում են հայ-ռումինական հարաբերություններին: Բուխարեստում գործում է նաեւ Ռումինահայոց միությունը՝ իր երկու տասնյակի հասնող մասնաճյուղերով: 1401 թվականին այս հողում հիմնվեց Հայ առաքելական առաջին եկեղեցին, որը հոգեւոր դաստիարակության առումով յուրօրինակ դեր ունի: Այսօր հայկական եկեղեցիներ են գործում Ռումինիայի տարբեր մասերում:

1989 թվականի ռումինական հեղափոխությունից

եւ վերափոխումներից հետո հայ համայնքը ակտիվացրել է իր գործունեությունը նաեւ Ռումինիայի քաղաքական կյանքում: Որպես ազգային փոքրամասնություն հայ համայնքը իրավունք ունի առաջադրելու պատգամավորի թեկնածու: Ռումինիայի խորհրդարանում ներկայումս կա ազգությամբ հայ երկու պատգամավոր: Իսկ Ռումինահայոց միության նախագահ Վարուժան Ոսկանյանը նաեւ իշխող Ազգային ազատական կուսակցության փոխնախագահներից է, Սենատի անդամ եւ կուսակցության կողմից առաջադրվել է նաեւ Ռումինիայի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի պաշտոնում: Երկու երկրները մեծ ուշադրություն են դարձնում նաեւ մշակութային երկխոսությանը: 2006 թվականին Բուխարեստում անցկացվել են հայկական կինոյի օրեր, որը մեծ արձագանք է գտել հասարակության կողմից: Ռումինիայի տարբեր քաղաքներում կազմակերպվել են նաեւ Արամ Խաչատրյանի ստեղծագործություններին նվիրված համերգներ: 1994 թվականից Բուխարեստում գործում է ՀՀ դեսպանատունը, որը ակտիվ գործունեություն է ծավալում երկկողմ հարաբերությունների զարգացման համար: ԵՄ անդամակցության ռումինական փորձը Հայաստանի համար կարող է եւս օգտակար լինել, այս ուղղությամբ նույնիսկ ստորագրվել է փորձի փոխանակման հատուկ համաձայնագիր: ԼՂՀ հարցում Ռումինիան ունի հավասարակշռված մոտեցում, ավելին՝ այս երկիրը հատկապես վերջին շրջանում շարունակ հանդես է գալիս տարածաշրջանային համագործակցության օգտին: Այդ ուղղությամբ նախաձեռնված բոլոր ծրագրերին Հայաստանը կողմ է արտահայտվել: Դրանցից առաջինը սեւծովյան ֆորումն էր, որի բացմանը 2006 թվականին մասնակցեց անձամբ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, նույն թվականին Հայաստանը մասնակցեց նաեւ Ռումինիայում, բայց Եվրոխորհրդի հովանու ներքո անցկացված մեկ այլ միջոցառման, որը կրկին ուղղված էր տարածաշրջանային համագործակցությանը: Ակնհայտ է, որ Ռումինիան փորձում է ամեն կերպ մեծացնել իր դերը եւ հանդես գալ որպես տարածաշրջանային համագործակցության կամուրջ, եւ այստեղ նրան մեծապես աջակցում են Եվրոատլանտյան կառույցները: Ի դեպ, հարկ է նշել, որ միջազգային կառույցների շրջանակներում Հայաստանն ու Ռումինիան հաջող համագործակցում են: Միջազգային ատյաններում քննարկվող հիմնական հարցերի շուրջ ըստ էության դիրքորոշումները համընկնում են:

Սեւծովյան տարածաշրջանային համագործակցության նոր հիմնադրամ՝ Բուխարեստում

Հոկտեմբերի 22-23-ը Բուխարեստը վերածվել էր մի կենտրոնի, որտեղ սեւծովյան տարածաշրջանի բոլոր երկրների պատասխանատուները խոսում էին տարածաշրջանային համագործակցության կարեւորության ու դրա շուրջ իրականացվող ծրագրերի մասին: Նախաձեռնությունը ամերիկյան Մարշալի հիմնադրամինն էր: Ամերիկյան մի շարք դոնորների ֆինանսավորմամբ ստեղծվեց Սեւծովյան տարածաշրջանային համագործակցության հիմնադրամը, որը գործելու է Բուխարեստում: Ամերիկյան դոնորների միջոցով աջակցություն կտրամադրվի սույն հիմնադրամին, որն էլ իր հերթին կֆինանսավորի այն ծրագրերը, որոնք կներկայացվեն երկրների կողմից եւ կարժանանան հիմնադրամի պատասխանատուների հավանությանը: ԵՄ սահմանների ընդլայնումը, սեւծովյան տարածաշրջանի որոշ երկրների ձգտումը դեպի ՆԱՏՕ, Իրանի, Իրաքի եւ Թուրքիայի շուրջ ընթացող զարգացումները Արեւմուտքի համար էապես մեծացրել են սեւծովյան տարածաշրջանի քաղաքական ու տնտեսական նշանա-



կությունը: Եվ հենց այստեղ է, որ խնդիր է դրված հրատապ մշակել նոր ռազմավարություն սեւծովյան տարածաշրջանի համար: Մարշալի հիմնադրամի նոր նախաձեռնությունը, տարածաշրջանային համագործակցության սեւծովյան հիմնադրամի հիմնումը գերիզորների մոտ հավատ է ներշնչում, որ հնարավոր է համագործակցության միջոցով մեծացնել վստահությունը եւ կայունությունը այդ տարածաշրջանում, որը հաճախ բնորոշվում է որպես ռիսկային: Եվրոպացի քաղաքական գործիչները համոզված են, որ համագործակցության այս ձեւաչափը քաղաքական եւ մշակութային երկխոսության՝ Արեւմուտք-Արեւելք փոխադարձ հետաքրքրությունների նոր հիմք կարող է լինել: ԵՄ-ին նոր անդամակցած Ռումինիան, որն, ի դեպ, համարվում է ԵՄ նոր անդամներից ամենաարագ զարգացողը, պատրաստ է աջակցել այս գաղափարի իրականացմանը, որտեղ, ի դեպ, հիմնական շեշտը դրվելու է քաղաքացիական հասարակության համագործակցության զարգացմանը: Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուն ընդգծում է, որ սեւծովյան տարածաշրջանի երկրների դեպի ՆԱՏՕ ձգտումը այս առումով կարող է առաջ բերել քաղաքական համագործակցության միանգամայն նոր տրամաբանություն: Դիմելով համաժողովի ներկաներին՝ Ռումինիայի նախագահը նշեց. «ԵՄ առաջարկների շրջանակը մեծ է: Երկրները իրենք պետք է որոշեն, թե ինչ են ցանկանում: Սեւծովյան տարածաշրջանում հաջող համագործակցության համար կարեւոր է նաեւ սառեցված հակամարտությունների լուծումը, դրանց լուծման միակ ճանապարհը խաղաղ բանակցություններն են: Ի տարբերություն սեւծովյան տարածաշրջանի մյուս հակամարտությունների՝ Ղարաբաղյան հակամարտության շուրջ բանակցությունները ընթանում են հստակ ձեւաչափով»:

Սեւծովյան տարածաշրջանում համագործակցության վերաբերյալ մոտեցումները, որպես կանոն, միանշանակ չեն լինում, թեեւ մեկ բան հստակ է բոլորի համար՝ քաղաքական-տնտեսական խնդիրների լուծումը եւ տարածաշրջանային անվտանգության հաստատումը մեծապես կախված են հենց այդ համագործակցությունից: Բաքվի քաղաքական հետազոտությունների ինստիտուտի տնօրենը այստեղ եւս չի մոռանում նշել, որ Արեւմուտքի համար սեւծովյան տարածաշրջանը գրավիչ է դառնում Կասպյան նավթով: Նա համոզված է, որ տարածաշրջանային հաջող համագործակցությունը նաեւ եվրոպական ընտանիքում ինտեգրվելու առումով է կարեւոր: Ադրբեջանը կարեւորում է տարածաշրջանային համագործակցությունը եւ այդ ուղղությամբ գործուն քայլեր է իրականացնում, վստահաբար ասում է Մամեդովը:

Թե Ադրբեջանի իրականացրած գործուն քայլերը որքանով են տեսանելի, դժվար է ասել, քանի որ դրանք տարածաշրջանային համագործակցության անվան ներքո ավելի շատ ուղղված են հարեւանների մեկուսացմանը: Բայց եւ այնպես, ԵՄ նոր հարեւանության քաղաքականությունը եւ տրամադրվելիք ֆինանսական հատկացումները եվրոպացիներին հույս են ներշնչում, որ սեւծովյան տարածաշրջանը կարելի է դարձնել կանխատեսելի ու կայուն: Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիի խոսքերով՝ այս նոր համագործակցությունը խաղաղ սահմանների համատեքստում անչափ կարեւոր է, դա երկրներին հնարավորություն է տալիս ԵՄ-ի հետ համագործակցել որպես գործընկեր երկրներ: Առկա այս համագործակցությունը չի գոհացնում, նրանց մեծ մասը գործում են միմյանցից անկախ: Հուսով եմ, որ կհաջողվի երկրների միջեւ համագործակցության նոր ցանց ստեղծել,- նշում է եվրոպացի դիվանագետը:

Աջակցելով սեւծովյան տարածաշրջանի երկրներին, որպես պատասխան ակնկալվում է մոտեցում եվրոատլանտյան ընտանիքին: Ամերիկյան Մարշալի հիմնադրամի նախագահը հուսով է, որ իրականացվելիք ծրագրերում Հայաստանը ակտիվորեն ներգրավված կլինի: Պարոն Գրեյգ Քենեդին նշում է. «Մենք ցանկանում ենք համագործակցություն տեսնել տարածաշրջանի բոլոր երկրների միջեւ. եվրոպական կառույցները եւ ՆԱՏՕ-ն այդ առումով կարող են օգտակար լինել»: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության մեծացումը կմեծացնի նաեւ տարածաշրջանային անվտանգությունը, ասում է Մարշալի հիմնադրամի նախագահը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ԽՈՐՀՐԴԱՆԻՇԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ

Համլետ Գևորգյան
ԳԱԱ ակադեմիկոս

(Սկիզբը «Դրօշակ»-ի № 6-ում)

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո (1920-21 թթ.) Հայաստանի առաջին հանրապետությունը պիտակավորվեց «դաշնակցական (այն է թե՝ ազգայնական) հանրապետություն» (իսկ ռուսական խորհրդային պատմագրության մեջ՝ «իմպերիալիստական Հայաստան, որը կռվում էր հեղափոխական Թուրքիայի դեմ»), «Մեր Հայրենիք»-ը՝ ազգայնական երգ, որի համար կարելի էր բանտի և աքսորի արժանանալ: Բայց բոլորը գիտեին այն. երբ հայկական դպրոցի աշակերտը Եղիշե Չարենցի «Ամենապոեմում» կարդում էր, թե «խանութպան Համոն... երգում էր «Մեր Հայրենիք»...», նա չէր հարցնում, թե ինչ է դա և թե ինչ է ուզում դրանով ասել բանաստեղծը: 1944-ին Մոսկվայում Հայկական մշակույթի տանը հավաքվող ուսանողների շրջանում շշուկով պատմում էին, որ Ալեքսանդր Մելիք-Փաշաևը, որը Մեծ թատրոնի դիրիժոր էր (հետո դարձավ գլխավոր դիրիժորը), նվագախմբի փորձերից մեկի ժամանակ բաժանել է «Մեր Հայրենիք»-ի պարտիտուրը և նվագել տվել այն: Երբ ինչ-որ մեկը, լսելով նվագը, ահաբեկված ու հևիհև ներս է վազել ու բացականչել՝ «Ալեքսանդր Շամիլովի՛չ, ի՞նչ եք անում», Մելիք-Փաշաևը հանգիստ պատասխանել է. «Իսկ ի՞նչ է պատահել: Լա՛վ երաժշտություն է»: Չգիտեմ, գուցե այս ամբողջ պատմությունը պայմանավորված էր նրանով, որ հենց այդ ժամանակ միութենական հանրապետություններին թույլատրվեց իրենց հիմնը ստեղծել: 1944-ին գործածության մեջ մտցվեց և 1978-ի Սահմանադրությամբ վերահաստատվեց Խորհրդային Հայաստանի պետական հիմնը: Հետաքրքրական է, որ չորսուկես տասնամյակի ընթացքում այն այդպես էլ մնաց բառացի իմաստով պետակա՛ն հիմն, որը, էլի բառացի իմաստով, ***կատարվում*** էր այս կամ այն արարողության ժամանակ, բայց երբեք չերգվեց (թեև երաժշտության հեղինակը աշխարհահռչակ Արամ Խաչատրյանն էր), և այս կարևորագույն իմաստով չդարձավ ազգայի՛ն օրհներգ, որը (որպես հայրենասիրական երգ) արթնացնում է (թե երաժշտությամբ և թե խոսքերով) անպայման հուզականորեն երանգավորված (ու նաև՝ խորհրդանշական-փոխաբերական) զուգորդություններ՝ կապված հայրենի երկրի և ժողովրդի հետ: Եվ ինչպե՞ս երգվեր՝

...Լենինն անմահ մեզ հուրն անշեջ պարգևեց (?!),
Մեր դեմ շողաց երջանկաբեր այգաբաց,
Հոկտեմբերը կործանումից մեզ փրկեց
Եվ տվեց մեզ նոր, պայծառ կյանք փառապանծ...

Փորձե՛ք սա երգել, ձայնակցել նվագախմբի կատարմանը հայրենիքի համար անձամբ մեր ապրած հպարտության և ոգևորության, կամ էլ պատմականորեն վճռական պահերին՝ այն էլ այսպիսի ծանր տեմպով և այդպիսի խոսքերով:

...1988-91 թթ. դրամատիկական իրադարձությունները բերեցին մարդկանց նաև ներքին ազատության ինքնագիտակցման, անկաշկանդ մտածողության, և ազգային պատմական հիշողության վրա դրված կապանքներից ազատված՝ նրանք հրապարակ հանեցին հայրենասիրական, ազգայինազատագրական, «ազգայնական» պիտակավորված երգերը, որոնք օր-օրի հնչում էին հանրահավաքների, ցույցերի, երթերի ժամանակ: Դա ցույց էր տալիս ամբողջատիրական հասարակարգի գաղափարախոսական սնանկացումը: Բայց օպերային թատրոնի՝ Ազատության հրապարակում «Մեր Հայրենիք»-ի,- մեր ազգային պատմական հիշողության մեջ ազատագրված ***Ազգային օրհներգի,***- կատարումն էր, որ ազդարարեց ամբողջատիրական հասարակարգի ավարտը,

Հայաստանի հանրապետության քաղաքական ռեժիմի փոփոխությունը:

* * *

...1975-ից «Մարսելիեզը» կատարվում է երաժշտական նոր խմբագրությամբ: Կան «Մարսելիեզի» հիանալի երգչախմբային մշակումներ, այդ թվում՝ մանկական երգչախմբի համար, որի մի հիասքանչ կատարումը հնչեց վերջերս Ֆրանսիայի միջազգային ռադիոյով: Բնական է, որ ժամանակակից հայ ականավոր կոմպոզիտորները նույնպես սիրով և հոգեհարազատությամբ կատարելու են «Մեր Հայրենիք»-ի երաժշտական նոր խմբագրումներ: Պատկերացրեք, թե ինչպես, որևէ ուրախ առիթով՝ մանկական փառատոնի կամ ծաղկի տոնի ժամանակ, դեմ-հանդիման կանգնում են երկու մանկական երգչախմբերը, և Հայաստանի փոքրիկ երգիչները ծայնակցում են ֆրանսիացի փոքրիկներին, երբ հնչում է «Մարսելիեզի» կրկներգը՝ ***«Ի զե՛ն, ո՛վ քաղաքացիներ, // Կազմե՛ք գումարտակներ,// Հառա՜ջ, հառա՜ջ, // Մինչ արյունն անմաքուր // Հեղվի մեր դաշտերում»:*** Իսկ հետո ֆրանսիացի փոքրիկներն են ծայնակցում՝ ***«Մեր Հայրենիք, այսքան տարվա // Շղթաներով կապկապված, // Յուր քաջ որդվոց սուրբ արյունով // Պիտի լինի ազատված»... «Ամենայն տեղ մահը մի է, // Մարդ մի անգամ պիտ մեռնի, // Բայց երանի, որ յուր ազգի // Ազատության կզոհվի...»:*** Եվ համոզված եղեք. ինչպես որ ֆրանսիացի մանուկները, Հայաստանի փոքրիկ երգիչները ներըմբռնողությամբ հասկանում են պահի հանդիսավորության և երգի հնաոճ լեզվի բառերի խորհրդանշական-փոխաբերական իմաստը:

Եվ, վերջապես, համոզված եղեք. այն օրը, երբ ֆրանսիական ժողովուրդը կհրաժարվի «Մարսելիեզից», նա կդադարի պատմական ժողովուրդ լինելուց, կհրաժարվի իր ազգային ինքնության գիտակցությունից...

* * *

Հիմա, ասվածի լույսի տակ, վերադառնանք սկզբում արված մի քանի տեսական հարցադրումների:

- Եվ այսպես, ժողովրդի ազգային ինքնության էական հատկանիշը նրա պատմական հիշողությունն է. դրա շնորհիվ է, որ անցյալի իրողությունները դառնում են ժողովրդի՝ որպես մի յուրովի անհատականության, ինքնագիտակցման ամբողջականության բաղադրիչներ՝ ապահովելով նրա ինքնության (նրա Ես-ի) անընդհատականությունը: (Իսկ և իսկ այնպես, ինչպես որ ամեն մի անհատ մարդու ինքնության գիտակցության էական բաղադրիչներն են կազմում իր կենսագրության իրողությունները, որոնք անմիջական կամ միջնորդավորված զուգորդություններով վերապրվում են՝ ապահովելով նրա Ես-ի անընդհատական ամբողջությունը: Այս առանձնահատկության կորուստը հանգեցնում է դեպերսոնալիզացիայի):

Մասնավոր դեպքում, թարգմանության դժվարությունը մեկ ուրիշ լեզվամտածողության կոնտեքստում լեզվական այն արտահայտությունը գտնելն է, որը հնարավոր դարձնի այդ ուրիշ լեզվամտածողության կրողի համար վերարտադրելու մտքերի և մտապատկերների նույն զուգորդական շղթան՝ հիշողության մեջ արթնացնելով անցյալի եղելությունների շարքը և դրանց հետ կապված ապրումների հաջորդական ընթացքը:

Ինչպես տեսանք, արվեստի ստեղծագործությունների, մասնավորապես պոեզիայի մեջ հենց այդ կերպ է իրականանում պատմական հիշողության ընթացքը: Եվ, նույն կերպ, որևէ առարկա՝ լինի դա մի անշուք շինություն, մոմերից սևացած մի քարակտոր, թե հոյակերտ մի կոթող, որևէ իրադարձություն՝ մի կենսագրական փաստ, թե մի մեծ ճակատամարտ,- ձեռք է բերում իմաստ ու նշանակություն ազգային կյանքի համար, երբ այն մտնում է մտքերի ու մտապատկերների, զգացմունքների ու հույզերի համապատասխան զուգորդական շարքի մեջ: Այդպես իրականանում է ժողովրդի հաղորդակցումն իր անցյալի հետ:

(Դիսկուրսը հենց ***այս*** եղանակով կատարվող հաղորդում/հաղորդակցություն/հաղորդակցումն է, որ կարող է ունենալ ամենատարբեր դրսևորումներ՝ առանձին մարդկանց, հանրությունների, ժողովուրդների ու մշակույթների միջև, ինչպես և, ասենք, դասախոսի ու լսարանի միջև, թատերական ներկայացման ժամանակ՝ դերասանի ու հանդիսատեսի միջև և այլն, ու նաև՝ ներկայի հաղորդակցումն անցյալի հետ[1]:)

- Պատմությունը՝ պատմական երկերը և պատմագրությունն առհասարակ, մեզ ներկայացնում են պատմական հիշողությունն արդեն օբյեկտիվացած, այսպես ասած՝ նրա կրողից օտարված, առարկայացած տեսքով: Պատմության (պատմագրության) մեջ, ասում է Հեգելը, ժողովուրդը կարող է տեսնել իր անդրադարձված պատկերը, երբ միանգամյա, մասնավոր, անցողիկ, պատահական իրողությունները մղտնում են մի ընդհանրական ամբողջության մեջ, որտեղ նրա

կրոնը, հանրային կյանքի իրավական ու բարոյական կազմակերպվածքը, տնտեսավարման եղանակը, գիտությունը, արվեստը և այլն բնութագրվում են խորհրդանիշների միևնույն համակարգով, որոնց միջոցով միայն կարելի կլինի կարդալ ու հասկանալ նրա պատմությունն ու բուն էությունը: (Այդ ընդհանրական ամբողջության համար Հեգելը գործածում է «ժողովրդի ոգի» տերմինը)[2]: Կյանք մտնող յուրաքանչյուր սերունդ պատմագրության, պատմական երկերի միջոցով հաղորդակցվում-մերվում է իր անցյալին, բայց նաև՝ յուրովի է ընկալում ու վերապրում, ուրեմն՝ նորից ու նորովի է գրում իր պատմությունը:

- Այս վերջին հանգամանքը շահարկում են ներկայիս արևմտյան քաղաքական պատմագրության հեղինակներն ու գաղափարախոսները. չկա օբյեկտիվ և ճշմարիտ՝ «հանրաճշմարիտ», բոլոր ժամանակների համար ընդունելի պատմություն որպես գիտություն, մասնավորապես՝ հնարավոր չէ ազգային ճշմարիտ պատմություն՝ որպես ժողովրդի պատմական հիշողության և ինքնության գիտակցության օբյեկտիվացում, առարկայացում: Ազգային պատմությունը պարզապես պատմական վերակազմության արդյունք է: Այդ ազգայնական գաղափարախոսներն են, որ «վերևից» ներշնչում են ժողովուրդներին, թե նրանք պատմական իրավունքներ ունեն անցյալ դարաշրջանների և ասպարեզից վաղուց հեռացած քաղաքակրթությունների տարածքների և մշակութային արժեքների նկատմամբ[3]: Լուսաբանման համար շատ հաճախ է բերվում և այդ կերպ մեկնաբանվում ֆրանսիացիների օրինակը. ֆրանսիացիները որպես ազգ ձևավորվել են 9-19-րդ դդ. ընթացքում, և անհիմն է գալլերին (գաղղիացիներին) ու նրանց մշակույթը ֆրանսիացիների ու ֆրանսիական մշակույթի թեկուզև պատմական ենթաբաժինը համարելը (գաղղիական աքաղաղի խորհրդապատկերը հետին թվով է ֆրանսիացիներին վերագրվել):

- Արևմտյան քաղաքական պատմագրության ներկայացուցիչները նույն կաղապարով մոտենում են Հայաստանի և հայ մշակույթի պատմությանը. Հին Հայաստանը, հելլենիստական դարաշրջանի հայկական պետական կազմավորումները, միջնադարյան Հայաստանը և դրանցում ստեղծված մշակույթները տարբեր բնույթի են, դրանք պատկանում են պատմական-քաղաքակրթական տարբեր դարաշրջանների, որոնք հեռացել-անցել են պատմության գիրկը և, ինչպես կասեր Հոբսբաումը, «դուրս են ժամանակակից հայի հիշողությունից»: Այդ միայն 19-20-րդ դդ. հայ ազգայնական գաղափարախոսությունն է «վերևից» ներշնչում, թե հայ ժողովուրդը դրանց հիման վրա կարող է տարածքային հավակնություններ ունենալ՝ այն դեպքում, երբ գոյություն ունեն նոր երկրներ բոլորովին այլ պետական սահմաններով:

Այս տեսության դեմ բոլոր հնարավոր փաստարկներից (որ ես բերել եմ այլ առիթներով) թերևս ամենակարևորը Հայկական բարձրավանդակում հնուց անտի հայկական մշակույթի շարունակականության և դիախրոնիկ ամբողջականության գաղափարն է. պատմական-քաղաքակրթական յուրաքանչյուր հաջորդ դարաշրջանում հայկական մշակույթը իր սեփական կարողականությունները ծավալել է ժամանակի մշակութային ձևերի մեջ, այնպես որ Ուրարտական և Այրարատյան թագավորությունների, հելլենիստական ժամանակաշրջանի, վաղ և ուշ Միջնադարի և Նոր ու Նորագույն շրջանի մշակույթները ներկայանում են իբրև ***միևնույն մշակույթի կոնկրետ պատմական ձևերը***՝ կազմելով հայկական մշակույթի դիախրոնիկ ամբողջականությունը: Հնագիտական, աղբյուրագիտական, ազգագրական, պատմական, այդ թվում՝ շինարարական արվեստի ու ճարտարապետության, մատենագրության և ապա՝ տպագրության, փիլիսոփայության, իրավունքի պատմության շարադրանքները փաստում և հավաստում են հայկական մշակույթի պատմական շարունակականությունը Հայկական բարձրավանդակում ու Կիլիկիայում և նրա դիախրոնիկ ամբողջականությունը: Հայկական մշակույթի փոխանցման և ժառանգորդման գործում վճռորոշ դեր է խաղացել գիտակրթական համակարգը, որն ստեղծվել, պահպանվել, գործել է հայ գրերի գյուտի ժամանակից մինչև Նոր ժամանակները: Օրինակ, միայն այն փաստը, որ այնքա՞ն արհավիրքներից ու սոցիալական աղետներից հետո էլ հայկական ձեռագիր մատյաններն ու հնատիպ գրքերը փրկվել ու պահպանվել են տասնյակ հազարավոր օրինակներով,- միայն այդ փաստը վկայում է, թե ինչ լայն գործառույթ է ունեցել մատյանը, գիրքը հայոց հանրային կյանքում:

- Չնայած դրան, ներկայումս Արևմուտքում գերիշխող քաղաքական պատմագրության տեսակետի համաձայն, մշակույթի այս «քաղաքակրթական», «էլիտար» շերտը և պատմական հիշողության գործառույթի ու նրա փոխանցման մեխանիզմը իբրև թե օտարված են մշակույթի կրող ժողովրդի իրական կեցությունից, ուստի և դրանցով ավանդված անց-

յալի իրողությունները «դուրս են ժամանակակից հայ հիշողությունից», ուրեմն՝ դրանք նրա ազգային ինքնության գիտակցության իրական բաղադրիչները չեն:

Այս թեզի դեմ իմ առարկությունները նույնպես արված են ուրիշ տեղերում[4], իսկ այստեղ կուզենայի շարունակել դրանցից մեկի ցուցադրումը: Ահավասիկ: Հին Հայաստանի, Ուրարտական թագավորության և Այրարատյան թագավորության ժամանակների պատմության եղելություններն արձագանքվել են հայոց հին էպոսում՝ առասպելներում ու լեգենդներում: Եվ այդ եղելություններից ավելի քան մեկ հազարամյակ անց Մովսես Խորենացին իր ժամանակի Գողթան երգերի մեջ դրանց պատումներն օգտագործել է որպես աղբյուրներ իր «Պատմության» համար պատմական վերակազմություններ կատարելիս: Բայց ահա Խորենացուց և ընդհանրապես մեր առաջին պատմիչներից մեկուկես հազարամյակ անց՝ 19-րդ դարում, Հայոց աշխարհի տարբեր գավառներում՝ Սասունում, Մուշում, Վասպուրականում և այլուր, իսկ արդեն Մեծ եղեռնից հետո, 20-րդ դ. երեսնական թթ., բանասացներից գրի առնվեցին հայոց նոր էպոսի՝ «Սասնա ծռերի» պատումները: Հայտնի է, որ այդ էպոսում վիպականացված են Հայաստանի արաբական նվաճումների շրջանի իրողությունները, որոնք անձնավորված են Մըսրա (Մըսրի՝ Եգիպտոսի) Մելիքի և Սասունցի Դավթի վիպական կերպարներում: Բայց մի զարմանահրաշ բան է, որ այդ էպոսը սերնդե-սերունդ կենդանի պատումներով մեր ժամանակներն է հասցրել ժողովրդի պատմական հիշողությունը մեր թվարկությունից էլ շատ դարեր առաջ կատարված իրադարձությունների մասին, Ասորեստանի և Բաբելոնի ժամանակների մասին՝ անձնավորված Սանասարի և Բաղդասարի, Ծովինարի, Ջոջ Միհրի, Պստիկ Միհրի և ուր. կերպարներում, Դուռն Միհրի պատկերի մեջ և այլն: Քաղաքագետ-պատմաբանի մտքով չի անցնում, որ կա մի ժողովուրդ, որն իր ծննդաբանության պատմությունը հասցրել է մեր օրերը ոչ միայն հնագիտական-քարեղեն կոթողների, վիմագիր արձանագրությունների, Աստվածաշնչի և գրավոր պատմության վկայություններով, այլև սերնդե-սերունդ ավանդված կենդանի պատումներով, որոնք իրենք իսկ հավաստում են այդ վկայությունները և իրենք էլ դառնում են կարևորագույն սկզբնաղբյուր պատմական գիտության՝ քննական պատմության համար:


Բարսեղ Կանաչյան

- Երբ ասում եմ ***քննական*** պատմություն, ուզում եմ շեշտած լինել այն անփոխարինելի նշանակությունը, որ գիտական պատմագրության համար կարող են ունենալ պատմական հատուկ և օժանդակ գիտակարգերը, տվյալ դեպքում՝ մասնավորապես աղբյուրագիտությունը, որի տեսանկյունից էպիկական առասպելները վիպասքեր են, պատմական եղելությունների վիպականացված պատումներ, իսկ հնագիտական առարկաները, իրենց բնույթով, իրենց խորհրդանիշներով ու խորհրդապատկերներով, նույնպես պատումներ են անցյալի մարդկանց, նրանց մտքերի, պատկերացումների, հավատալիքների ու գործերի մասին: Մեծարանքով կարող ենք նշել հունական և պարսից առասպելների՝ որպես պատմական սկզբնաղբյուրների, վերլուծությունը և մեկնաբանությունը Խորենացու կողմից: Էպոսի, որպես վիպականացված պատմության՝ վիպասքի, լավագույն լուսաբանումը կարող ենք գտնել Զամբատիստա Վիկոյի՝ Նոր ժամանակի եվրոպական պատմափիլիսոփայության սկզբնավորողի մոտ. տեսեք, թե նա ինչ հրաշալի, մանրակրկիտ վերլուծություն և մեկնաբանություն է տալիս Աքիլլեսի վահանի նկարագրությանը «Իլիականում»[5]: Այս ավանդույթը ազգագրական-պատմական հետազոտությունների մեջ շարունակել են Ֆոլկսկունդեի՝ 19-րդ դ. գերմանական ռոմանտիզմի շրջանի «առասպելաբանական դպրոցի» ներկայացուցիչները, այն անշուշտ կազմել է նաև 20-րդ դ. ազգագրության կարևոր ենթաբաժինը: Այս տեսության վերաբերյալ, հատկապես նրա մոտեցումների նշանակության բարցարձակացման դեմ արվել են լուրջ վերապահումներ: Սակայն կուզենայի հիշատակել ռուս ականավոր ազգագրագետ Ս. Ա. Տոկարևի մի դիտարկումը «առասպելաբանական դպրոցի» (և, հետևաբար, նրան հատուկ մոտեցման գիտա-

կան կարևորության) վերաբերյալ[6]: «Առասպելաբանական դպրոցին» է պատկանում այն գաղափարը, նշում է Տոկարևը, որ հնդեվրոպական ժողովուրդների առասպելաբանությունը եղել է մի միասնական ամբողջություն, որը մասնաբաժանվել է այդ ժողովուրդների բաժանման ընթացքում: Բայց մի՞թե այդ միասնական ամբողջության արձագանքը չէ, որ «Սասնա ծռերը» իր կենդանի պատումներով հասցրել է մինչև մեր ժամանակները: (Հետաքրքրական կլիներ ունենալ դասական բանասիրության մոտեցմամբ կատարված մի հատուկ մասնագիտական հետազոտություն՝ ««Սասնա ծռեր» հայկական էպոսի հնագույն ենթաշերտերը որպես Հին աշխարհի պատմության վերակազմության սկզբնաղբյուր»:)

Պատմական հիշողությունը եղել էր ու մնաց հայ ժողովրդի ազգային ինքնության գիտակցության էական բաղադրիչը: Նույնիսկ ցեղասպանությունը ի զորու չեղավ կտրելու հայ ժողովրդի պատմական հիշողության թելը: Իսկ այսօր տեխնիկական առաջընթացն արդեն դուրս է մղել պատմական հիշողության փոխանցման բանավոր եղանակը, մասնավորապես՝ վիպասքի բանավոր պատումը: Բայց երբ (և եթե) ժողովուրդն ապրում է իր ստեղծած պատմամշակութային միջավայրում, երբ նա ապրում է անձնական, ընտանեկան ու հանրային կյանքի իր յուրահատուկ ձևերով, երբ շարունակվում է ազգային մշակույթի, արվեստի, գրականության անընդմեջ գործառույթը ժամանակակից ձևերի մեջ, ապա ուրեմն ձգվում է անվանումների, դեպքերի ու դեմքերի, իրադարձությունների հետ կապված, նրանցով հարուցված մըտքերի ու մտապատկերների, զգացմունքների ու հույզերի այն զուգորդական շղթան, որը պատմական հիշողության ընթացքն է կազմում, ինչպես դա մենք տեսանք վերը, մասնավորապես՝ ազգային պետականության խորհրդանիշներից մեկի՝ Ազգային օրհներգի օրինակով:

ՀՀ օրհներգի ընդունման ընթացքում ծայր առած քննարկումները շատ հաճախ հասարակական և մշակութային երևույթների առանձնահատկություններն անտեսելու միջոցով էին կատարվում: Բացառված չէ, որ նման քննարկումները կրկնվեն նաև մոտ ապագայում, երբ ամփոփվի օրհներգ ստեղծելու հայտարարված մրցույթը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Համլետ Գևորգյանի ուշագրավ սույն հոդվածը, որ արտատպում ենք «Մարդ և հասարակություն» ամսագրի 2007 թվականի թիվ 2-ից, իր մոտեցումով, երևույթների մեջ խորանալու կարողականությամբ, կարծում ենք, ուղենշային պիտի լինի ապագա այդ քննարկումներում:

"Դրօշակ"

1. Իմ տված սահմանումը ճշտում և մանրամասնում է discourse տերմինի բառարանային սահմանումը. «Դիսկուրս անվանում են մտքերի հաջորդականության [հաջորդական շարքի] կապակցված հաղորդումը/փոխ-հաղորդումը» (տե՛ս The New International Webster's Comprehensive Dictionary of the English Language. Encyclopedic Edition. Typhoon international, 2004):

2. Տե՛ս Г. В. Ф. Гегель. Философия истории. / Гегель. Соч., т. VIII. М.-Л.: Соцэкгиз, 1935, էջ 61, 154: Մանրամասն վերլուծությունը տրված է իմ «Национальная культура с точки зрения философии истории: գրքում (Ер., Изд. АН, 1992):

3. Տարբեր առիթներով ես մեջբերել և վերլուծել եմ այս տեսության նշանավոր ներկայացուցիչների գրվածքները, այդ թվում՝ է. Հոբսբաումի գիրքը, որի մեջ հեղինակն ուղղակի անդրադառնում է հայոց պատմությանը և «հայկական ազգայնականությանը». E. J. Hobsbawm. Nations and Nationalism Sonce 1780, New York: Cambridge Univ. Press, 1993.

4. Մասնավորապես տե՛ս «Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ» (Եր., ԳԱԱ հրատ., 2005), բաժին Գ:

5. Տե՛ս Дж. Вико. Основания новой науки об общей природе наций. Ленинград: Изд. "Художественная литература", 1940, էջ 197-198: Իսկ առհասարակ Հոմերոսի «Իլիականի» և «Ոդիսականի» որպես գիտական պատմության սկզբնաղբյուրների մասին նա գրել է. «Հոմերոսը առաջին Պատմաբանն է, որ ամբողջ հեթանոսական շրջանից հասել է մեզ... Հոմերոսի պոեմներն արժանի են մեծագույն վստահության, քանի որ դրանք Հնագույն Հունաստանի ավանդությունների երկու մեծ շտեմարաններն են» (նույն տեղում, էջ 368):

6. С. А. Токарев. История зарубежной этнографии. , 1978.

Յովհաննես ՉԱՏԻԿՅԱՆ

Հ. ՏԱՍՆԱՊԵՏՅԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆԸ



Դիվանագիտական խարդավանքների հանգույց, մեծ տերությունների զոհասեղանին դրված մեր ազգային գերխնդիրը մնայուն տեղ է զբաղեցնում միջազգային հարաբերությունների ոլորաններում, իր վրա սեւեռելով հայության ազգային ճակատագրի նկատմամբ անտարբեր ու հոգացավ գործիչների ու մտածողների ուշադրությունը, որոնք էլ պատճառ են դառնում ասպարեզ բերված բազմաբնույթ լուծումների գոյությանը: որքային ու մակերեսային տեսությունները դիվանագիտական մարտադաշտ են հանում սահմանումներ, որոնք հաճախ հեռանալով պատմական ճշմարտությունից, խճճում ու թնջուկ են ստեղծում բազմաչարչար խնդրի շուրջը: Դարեր շարունակ զրկված լինելով պետականությունից, հայ ժողովուրդը գործուն մասնակցություն չի ունեցել իր գերխնդրի լուծմանը եւ վաստակելով «խնդրատու ժողովուրդ» որակումը, արժանացել է մեծերի «բարեհոգության» արդյունք խեղված լուծումների, որոնք ոչ միայն բալասան չեն դարձել դարավոր վերքին, այլ ավելի են խճճել իրականությունը, գործունեության անկաշկանդ ասպարեզ թողնելով հայության ճակատագիրը «տնօրինողների» համար, մինչդեռ ոչ այնքան անմարսելի այս խնդիրը միշտ էլ պահպանել է գոհացուցիչ վերջնական արդյունքի հնարավորությունը:

Հայկական հարցի էությունը ճիշտ ըմբռնելու առաջին քայլը, նրա ծագումն ու ձեւավորումը ճշմարիտ բնորոշելու մեջ է: Առ այսօր խնդրին վարձահատույց ուսումնասիրողների մեծ մասը տեղակայելով տարբեր դարաշրջաններում, հարցը զրկում են ամբողջականությունից, աղճատում, եւ դիվանագիտական մարտավարությունների առումով, հետաքրքրած ժամանակահատվածի լուծումները արժեւորում դրական, որոնք էլ պատճառ են դառնում հարցի նկատմամբ թյուրըմբռնման, որովհետեւ առ այսօր շրջանառության մեջ չկա Հայկական հարցի խորը գիտական վերլուծությունների արդյունքը, ինչն էլ հնարավորություն է տալիս անկաշկանդ այլախոհական եզրահանգումների:

Ազգային գերխնդրի նման գոյությունը չէր կարող արձագանք չունենալ հայագիտության երախտավորների շրջանում, եւ ասպարեզ եկան ուսումնասիրություններ, որոնք փորձում էին ճշգրտել ու իրական կերպարանք տալ խնդրին, հակահարված տալ բոլոր այն մտավարժանքներին, որոնք մեր գերխնդրի նկատմամբ պատկերացումն ու սահմանումները, լուծման ուղիները տանում էին նոր փակուղի: Առավել վտանգահարույց էին այն մոտեցումները, երբ Հայկական հարցը կապվում էր միմիայն Հայ դատ եւ Պահանջատիրություն հասկացությունների հետ, որոնք հանդիսանալով Հայկական հարցի բաղկացուցիչ մասերը, չէին ամբողջացնում խնդիրը, զրկում էին պատմական հեռավոր հիմքերից, դարձնելով նրան առօրեական ու միմիայն այժմեական հարց:

Այս եւ սրանից բխող անարդարություններն էլ պատճառ դարձան, որ Հ. Տասնապետյանը 1975 թ., Բեյրութում, Մեծ եղեռնի 60-ամյակի հիշատակի օրվա առթիվ երիտասարդության առաջ հանդես գար ոչ թե Մեծ ոճրագործության դատապարտման ու վերագնահատման տեսանկյունից, այլ Հայկական հարցի անցած ժամանակաշրջանների վերլուծությամբ: Նույն թվականին էլ տպագրված այդ զեկույցը դարձավ Հայկական հարցի մինչ այդ գոյություն ունեցող ուսումնասիրությունների վերլուծականը, նոր սահմանումների հանրագումարը:

Հայկական հարցի միջազգային ճանաչման թվական ընդունելով Սան Ստեֆանոյի պայմանագիրը (1878 թ.), Հ. Տասնապետյանը գտնում է, որ հարցը ծագել է «այն օրէն ի վեր՝ որ Հայաստանը կը հիւծէր թուրանական ժողովուրդներու լուծին տակ», երբ, ժան Պիեռի բնորոշմամբ, հայ ժողովուրդը կրում էր «թուրանական ցեղի բոլոր տեսակներուն դժնդակ փորձառութիւնը»: Այսինքն, Հ. Տասնապետյանը Հայկական հարցի ծագումը տեղափոխում է 10-11-րդ դար, ինչը հետագա տարիներին, սկսած 90-ական թվականներից, անձնական զրույցների ժամանակ, վերագնահատում էր եւ համաձայնվում հարցի ծագումը հասցնել մինչեւ հայ ժողովրդի կազմավորման շրջանը: Հակառակ դեպքում, Հայկական հարցի էությունը աղճատվում էր, զրկվում ձեւավորման գործընթացից, ասել է նաեւ հարցի բաղկացուցիչ մասերից, որոնք են Հայրենիք հասկացության արմատավորումը, ազգային ու պետական մտածողությունը եւ նրանց հանրագումար՝ ազգային գաղափարախոսությունը: Հայկական հարցի բնականոն զարգացման այս գործընթացը չընդունող ուսումնասիրողները անտեսում են հայության ինքնագիտակցության, ինքնաարժեւորման բարդ ու դժվար կայացման գործընթացը եւ այն կապում են միջազգային խաղերի հետ, մոռանալով, որ Հայկական հարցը միջազգային ճանաչման է հասել ոչ թե 1878 թ. պայմանագրով, այլ 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով, որովհետեւ վերջինս նույնպես միջազգային փաստաթուղթ էր եւ անմիջականորեն առնչվում էր հայության ճակատագրին:

Հաջորդ առիթով, Հ. Տասնապետյանը, սակայն, փորձում է վերագնահատել իր իսկ սահմանումը եւ հարցի ծագումը առաջ տանում մինչեւ 18-րդ դար՝ այն կապելով «երիտասարդ իշխան Իսրայէլ Օրիի դիւանագիտական անխոնջ գործունէութեան», Դավիթ Բեկի հերոսամարտի, Արցախի մելիքների պայքարի շրջան: Շարունակելով իր մտածողությունը, հեղինակը կանգ է առնում Հայկական հարցի նոր հանգրվանի վրա, երբ թուլացող ու դեպի անկում ձգտող թուրքական բռնատիրության ճակատագիրը վճռողները կամակոր լուծումներ էին տալիս իրենց շահե-

ոի թիրախ հայության խնդրին, որոնք «մարդասիրական միջամտություններ» լինելով, շաղախված էին «պետութեանց հակամարտութիւններով», «Ռուսաստանի ախորժակներով՝ մէկ կողմէ արգելակուած աւստրօ-հունգարական ու բրուսական զինական ուժի սարսափով, եւ միւս կողմէ՝ Բրիտանական կայսրութեան աւանդականօրէն թրքանպաստ քաղաքականութեամբ»[1]:

Բեռլինի կոնգրեսը շրջադարձ հանդիսացավ հայկական կյանքում: Սկսվեց ոչ թե լաց ու կոծի շրջանը, այլ զորեղանալու, զինված պայքարի փուլը, երբ անխուսափելի էր դառնում հայոց հոգեկան ու մտավոր զարթոնքը, սեփական ուժերի վերագնահատումը: Հայության մտավոր ողջ կարողությունը՝ գրականությունը իր «երկու թեւերով» նախապատրաստում էին գաղափարական վերելքը, որովհետեւ, ինչպես բնորոշում էր Հ. Փաստրմաճյանը, 61-րդ հոդվածը, որ «Հայոց համար իրաւունք մը, Թուրքիոյ համար պարտաւորութիւն մը եւ Եւրոպայի համար՝ պարտականութիւն մը կը կազմէր»[2]: Հայոց համար հոդվածը «իրավունք» էր այն առումով, որ արագացրեց օսմանիզմը պետական քաղաքականություն ընդունած Թուրքիայի «պարտավորությունների» կատարումը, երբ իրականացվեցին 1894-1896 թթ. կոտորածները, եւ Եվրոպայի համար՝ պարտականություն, որպեսզի կոծկվեին ու քաջալերվեին կոտորածները եւ հիմնահատակ կործանվեին Ռուսաստանի մերձավորարեւելյան հենարանները: Դժնդակ ժամանակները հասունացման փուլ տեղափոխելով Հայկական հարցը, «պետութեանց միջամտելու անկարողութեան դիմաց» հայ ժողովուրդը գծեց «պատւոյ եւ ազատութեան ճամբան»:

1887-1914 թթ. Հայկական հարցի առանձին փուլ դասակարգելով, Հ. Տասնապետյանը արժեքավոր լրացումներ է կատարում եւ նորովի գնահատում արեւմտահայության կացությունը: Երիտթուրքական հեղաշրջումը նոր կնճիռներ էր բերում հայոց գերխնդրին, որովհետեւ ժառանգելով սուլթանի օսմանիզմի քաղաքականությունը, նոր վարչակարգը թուրքացման սլաքն ուղղեց հատկապես արաբների եւ հայերի դեմ, որովհետեւ «վերջիններու աշխարհագրական դիրքն իսկ համաթուրանական երազի իրականացման առաջին խոչընդոտը կը կազմէր»[3]:

Պաղեստինի, Իրաքի, Եմենի ազատագրումը թուրքական բռնատիրության կապանքներից, Բալկանյան պատերազմները (1912 թ.), 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագիրը «իրականացման ճամբու» վրա բերեցին ինքնավար Հայաստանի գաղափարը: Սակայն, թուրք վարիչները հոժարությամբ ընդունելով հայերին մասնակի բավարարում տալու փորձը, ավելի հեռատես գտնվեցին, որովհետեւ իրենց վրայից հեռացրին հսկողությունը, եւ մեծ տերությունները, որ զբաղված էին նոր աշխարհամարտի սանձազերծման ուղու վրա, հնարավորություն տվեցին թուրք վանդալներին, վերաբաժանելու մոլուցքով տարված տերությունները թաքցրեցին հայոց նկատմամբ իրականացրած եղեռնագործությունը, այն դեպքում, երբ, ինչպես ընդգծում է Հ. Տասնապետյանը, կառավարական շրջաններին հայտնի էին Նայիմ բեյի, Մորգենթաուի, Լեփսիուսի, Ջ. Բրայսի, Ա. Թոյնբիի, Ա. Մանդելշտամի, Հ. Կիպնսի, Ֆ. Նանսենի, Ի. Թրամբների, Հ. Բարապի, Ֆազիլ էլ Ղոսեյնի, Ք. Պոնարիֆ.Մաքլերի, Ժ. Մորգանի, Հ. Փուատպարի հեռագրերն ու զեկուցագրերը, վավերագրերը, տեղեկագրերը, գրքերը: Բայց, ցավով արձանագրում է Հ. Տասնապետյանը, «Մարդկութեան դէմ գործուած քստմնելի այս ոճիրը տեղի ունեցաւ ուրեմն 20-րդ դարու մէջ եւ մնաց անպատիժ»[4]:

Հայությունը, նրա պատժիչ բազուկ Հ.Յ.Դաշնակցությունը, սակայն, չէր կարող մոռանալ միջազգային դավի արդյունք եղեռնագործությունը, եւ «Նեմեսիս» խումբը իր վրա վերցրեց եղեռնի կազմակերպիչների ոչնչացումը, իբրեւ հատուցում չարիքի եւ պատասխան՝ միջազգային թողտվության: Այստեղ Հ. Տասնապետյանը բարձրացնում է համամարդկային մի խոշոր խնդիր՝ եղեռնագործությունները պատժելու պահանջ, հակառակ դեպքում նորանոր հիտլերներ կընդօրինակեն թուրքական գազանությունները, մարդկությանը կանգնեցնելով նոր փորձությունների առաջ:

Հայկական հարցի հետագա շրջանը անվանելով «Հա-

յաստանի հարությունը», Հ. Տասնապետյանը ընդհանուր գծերով անդրադառնում է հետհոկտեմբերյան ժամանակաշրջանին, Թուրքիայի դիրքերը «կարծրացրած» Բրեստի պայմանագրին, Թուրքահայաստանի ինքնորոշման բոլշեւիկյան դեկրետին, այն գնահատելով որպես դավ Հայկական հարցի նկատմամբ, ավելացնում. «Կարելի՞ է երբեւիցէ ընբռնել ու լուծել այն ամբողջ անհեթեթութիւնն ու ողբերգա-կատակերգութիւնը՝ որ պարունակութիւնը կը կազմէ այնքան հակասական սա քաղաքական կեցուածքներուն: - Հայաստանի սեփականատիրութիւնէն պաշտօնապէս հրաժարուելէ երկու ամիս ետք, ռուսները զայն Թուրքիոյ «կը նուիրէին»[5] (խոսքը 1917 թ. դեկտեմբերի 29-ի դեկրետի եւ 1918 թ. մարտի 4-ի Բրեստի պայմանագրի մասին է): Իրոք, դեկրետը անհեթեթություն էր, քանզի բոլշեւիկներին քաջ հայտնի էր, որ գոյություն չուներ ինքնորոշվող ժողովուրդը: Սա յուրահատուկ ընծա էր մարդակեր թուրքիզմին: Ողբերգություն եւ կատակերգություն էր պայմանագիրը, որովհետեւ բոլշեւիկները հրաժարվում էին Հայաստանից եւ դրա բարոյական ու պետական իրավունքը չունենալով, հայության պատմական հայրենիքը նվիրում էին թուրքական վանդալիզմին, որն էլ քաջալերված միջազգային թողտվությունից, նոր Թալեաթի՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, մինչեւ 1922 թ. ավարտին հասցրեց իր գաղափարական նախորդների կիսատ թողած հրեշավոր ծրագիրը, հայության պատմական հայրենիքը իսպառ դատարկելով նրա իսկական տիրոջից:

Տրապիզոնի եւ Բաթումի անպտուղ բանակցությունները, Սեյմի ցրումը հարցականի տակ էին դնում արեւելահայության գոյության հնարավորությունը: Բայց հայ ժողովուրդը, որ Ք. Մոքլերի գնահատմամբ՝ «սպանուած բոլոր փոքր ժողովուրդներուն ամէնէն աւելի սպանուածն էր», հենվելով իր հավաքական ուժի վրա, առաջնորդ ունենալով ՀՅԴ-ն ու Արամները, հառնեց ինչպես փյունիկ ու կերտվեց հայության հոյսերի ապավեն Առաջին Հանրապետությունը:

Հանրապետության ստեղծումով Հայկական հարցը գտավ իր անդավաճան տիրոջը, 1919 թ. մայիսի 28-ին ազգային գաղափարախոսությունն ու Հայկական հարցը ճանաչվեցին իբրեւ պետական քաղաքականություն: Հասունանում էր Սեւրի դաշնագիրը, թուրք-բոլշեւիկյան մոլուցքը ուղղվում էր Հայոց հայրենիքի դեմ, որովհետեւ այն դիտվում էր համաշխարհային հեղափոխություն կոչված դատարկ ու անհայրենիք ուսմունքի ճանապարհին պատնեշ: Սկսվեցին դիվանագիտական նոր խարդավանքները, բացահայտ ու թաքուն արշավները ու, թեեւ լույս աշխարհ բերվեց Սեւրի պայմանագիրը, սակայն այն չուներ գործադրվելու հնարավորություն: Շարունակվող հակահայկական քաղաքականությունը հաղթանակ ապահովեց թուրք-բոլշեւիկյան դաշինքին, Հայաստանը բռնի խորհրդայնացվեց, մոռացվեց Սեւրի պայմանագիրը, իսկ 1923 թ. մրցակցող կողմերը միակամ եղան Լոզանում եւ մոռացության գգրոց ճանապարհելով Սեւրի պայմանագիրը, Թուրքիային հերթական անգամ ապահովագրեցին մասնատման վտանգից: Հակահայկական տրամադրությունների հեղինակ ու կազմակերպիչ Անգլիան, իր վարչապետ Ու. Չերչիլի բերանով ցինիկորեն հայտարարում էր. «Լոզանի դաշնագրին մէջ պատմութիւնը ի զուր պիտի փնտռէ Հայաստան անունը», որովհետեւ՝ «Քարիւղն աւելի ծանր կշռեց քան հայկական արիւնը»[6]:

Անկարելի է սառը դատողությամբ ընդունել միջազգային դավը, եւ Հ. Տասնապետյանը տուրք տալով ճշմարտությանը գրում էր. «...ոմանց շահախնդիր ստորնութիւնը ուրիշներու կրաւորական կեցուածքը, անտարբերութիւնը կամ տկարութիւնը չի կրնար մոռցնել տալ: Լոզանի մէջ, Հայկական հարցի դիւանագիտական թաղման համար, բոլոր կայսրապաշտութեանց շքախումբն էր, որ, գիտակցօրէն, թուրք ազգայնամոլութեան մեղսակիցը դարձաւ»[7]:

Աշխատության «Հայկական խնդիրը ներկայիս» (ասել է՝ 1975 թ.) գլուխը ավելի քան մտատանջ է, որովհետեւ խորհրդային կայսրության զնդանում հայտնված հայ ժողովուրդը, թեեւ իրավաբանորեն ուներ իր պետականությունը, բայց այն զրկված էր ազգային գերխնդիրը բարձ-

ռացնելու հնարավորությունից: Հայկական հարցը երբեմն-երբեմն ասպարեզ էր բերվում, երբ խորհրդային դիվանագիտությունը զգում էր Թուրքիային զսպելու անհրաժեշտությունը: Նման իրավիճակում, սփյուռքահայությունը հենված իր «հաւաքական ինքնագիտակցութեան, հաւաքական կամքի ու վճռականութեան» վրա, ճիգեր էր գործադրում «բռնագրաւուած իրենց հայրենիքին վերատիրանալու, ազատագրուած իրենց հողերուն վրայ՝ իբրեւ անոր վաւերական տէրերը՝ վերստին հաւաքուելու եւ քաղաքակրթութեան բազմահազարամեայ օրրան Հայաստանը վերակերտելու անտեղիտալի վճռականութիւնը»: Ավանդական կուսակցությունների, բազմանուն կազմակերպությունների, Հ.Յ.Դաշնակցության Հայ դատի հանձնախմբերի ջանադիր գործունեությամբ Հայկական հարցը նորից բարձրացավ միջազգային ասպարեզ, իսկ 1990-ական թվականներին վերածվեց պետական քաղաքականության, արդյունքում հասնելով ոչ միայն միջազգային ճանաչման ու Հայոց ցեղասպանության ընդունման ու դատապարտման, այլեւ լուծում ստացավ Արցախ հայրենիքի ճակատագիրը, Հայոց հանրապետությունը իր պատվավոր տեղը գտավ միջազգային ասպարեզում:

Դեռեւս, գրեթե 30 տարի առաջ, Հ. Տասնապետյանը համոզված էր, որ Հայ դատը արդար լուծում է ստանալու, որ «բացառապէս անժամանցելի են իրենց իրաւունքները, եւ իրենց հաւաքական ձգտումներուն մէջ ամրօրէն վճռակամ՝ անոնք տակաւին կը շարունակեն հաւատք ընծայել միջազգային խղճին, ինչպէս նաեւ արդարութեան, հաւասարութեան, ազատութեան, մարդոց եւ ազգերու ինքնորոշման իրաւունքի գաղափարներուն...»[8]:

Տասնապետյանական լավատեսությունը հիմնազուրկ չէր, գործիչն ու մտածողը համոզված էր, որ հարազատ ժողովրդի հավաքական ուժը անպարտելի է, որ Հայկական հարցի լուծման բանալին, ինչպես դարեր շարունակ, պարտադրված, հանգամանքների բերումով, փնտրվել է օտար երկրներում, գալու է ժամանակը, երբ Հայոց պետականությունը դառնալու է իր գերխնդրի պահանջատերը եւ հայ ժողովրդի կամքը, ի վերջո, սասանելու է բոլոր արգելքներն ու ազատագրություն է բերելու պատմական հայրենիքին, լուծում է ստանալու բազմաչարչար Հայկական հարցը:

Այս նկատառումով էլ «Հեղափոխություն» աշխատության մեջ Հ. Տասնապետյանը որպես ավանդ թողել է հետեւյալ տողերը. «Հայ Յեղափոխութիւնը տակաւին հասած չէ իր աւարտին եւ կը շարունակուի: Պիտի շարունակուի, իբրեւ յեղափոխական մնայուն վիճակ, իբրեւ ամենօրեայ պայքար ու կռիւ, մինչեւ իրականացումը իր վախճանական նպատակին, մինչեւ ստեղծումը ընկերվարական եւ էապէս ժողովրդավար արդար կարգերով օժտուած՝ ամբողջական, ազատ ու անկախ Հայաստանին եւ ամբողջ հայութեան մէկտեղումը այնտեղ»[9]:

---

1. Հ. Տասնապետյան, Հայկական հարցը, Բեյրութ, 1975, էջ 7:
2. Նույն տեղում, էջ 13:
3. Նույն տեղում, էջ 22:
4. Նույն տեղում, էջ 31:
5. Նույն տեղում, էջ 37:
6. Նույն տեղում, էջ 47-48:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, էջ 57:
9. «Հեղափոխություն», Բեյրութ, 1978, էջ 155-156:

...Ուրեմն ո՞րն է բուն դրդապատճառը

Կարեն Խանլարյան

Երբեք չէի ցանկանա պատասխանել «Ազգին», որի նկատմամբ ունեի ու շարունակում եմ տածել խոր հարգանք, քանզի, որպես օրաթերթ, նա գտնվում է մեր ժողովրդի ամենատարբեր խավերի ուշադրության կենտրոնում: Եվ սա, իհարկե, պատահական չէ: «Ազգը» մեր մամուլի ամենաինտելեկտուալ ներկայացուցիչներից է այսօր եւ եթե նրա բարձրացրած որոշ խնդիրները չառնչվեին մեր ազգային իդեալներին, հանգիստ խղճով կարելի էր շրջանցել մյուս բոլոր քննադատությունները:

«Ազգն» իր 2007 թ. նոյեմբերի 17-ի համարում ՀՅԴ-ՌԱԿ միջկուսակցական համաժողովի հայտարարության առիթով նախնական գնահատումով է սկսում իր մեկնաբանությունը՝ ՀՅԴ-ին ու ՌԱԿ-ին որակելով որպես «ավանդական, կամ ինչպես իրենք են կոչում՝ համահայկական մեր զույգ կուսակցություններ»: Որպես սկիզբ հիշեցնենք, որ եթե «ավանդական» կոչման հետեւում թաքնված է ՀՀՇ-ական իշխանության օրերից ժառանգված հեգնանքն ու թերարժեւորումը, ապա «համահայկական» կոչման մեջ, գոնե հիշյալ կուսակցությունների տեսակետից, չկա գերագնահատման, ինքնարծարծման քարոզչական միտում: Երանի հայ իրականության մեջ գործող քաղաքական մյուս ուժերի ելակետները, մտահոգությունները եւ կազմակերպական տարածքները համահայկական լինեին ու նրանք էլ համահայկական կոչվեին:

ՀՅԴ-ն ու ՌԱԿ-ը, ըստ «Ազգի», «դեռեւս գտնվում են անցյալ դարի 60-ական թվականների մտածողության մակարդակում: Եվ կամ, առնվազն, նրանք անկեղծ չեն ժամանակակից իսկական մարտահրավերները դիմագրավելու հարցում, եւ, հետեւաբար, բավարարվել են սեփական շարքերին եւ այլոց տպավորելու համար արված դեկլարատիվ բնույթի հաստատումներով»: Կարծում եմ, որ «60-ական թվականների մտածողության մակարդակ»-ը պարզ խայթոց է, որի վրա չարժե կանգ առնել: Սակայն մեզ հետաքրքրում է, թե «Ազգը» ինչի՞ց է եզրակացնում զույգ կուսակցությունների «անկեղծ չլինելու» պարագան: Եթե «ժո-

ղովրդավարության ամրապնդում»-ը, «օրենքի գերակայություն»-ը «ամբողջական արդարություն»-ը, «արդար, ազատ եւ թափանցիկ ընտրություններ»-ը, «կաշառակերության դեմ պայքար»-ը եւ բազում այլ հարցեր, որ նշվել են ՀՅԴ-ՌԱԿ դեկլարացիայում, Հայաստանի ու հայության «ժամանակակից իսկական մարտահրավերները» չեն, ապա որոնք են «իսկական մարտահրավերները», որոնց նկատմամբ անկեղծություն չի նկատում «Ազգը» եւ «շարքերին եւ այլոց տպավորելու համար արված դեկլարատիվ բնույթի հաստատումներ» է անվանում նշվածները: Զարմանալ «Ազգի» այս կեցվածքի վրա, հնարավոր չէ...

Առավել զարմանալի է պատմա-իրավական այն հաստատումը, որի հիմամբ «Ազգը» վիլսոնյան իրավարարությունը գտնում է «բնավ չվավերացված» եւ Սեւրի դաշնագիրը «երբեք կյանքի չկոչված»: Մասնագիտական իմաստով իրավասու չեմ իրավական միանշանակ հաստատումներ անել, սակայն որքան գիտեմ, երկկողմ համաձայնության արդյունքում հանձնարարված իրավարարությունը (ինչպիսին է վիլսոնյան արբիտրաժը), ըստ միջազգային օրենքների, վերջնական ու վավերական է եւ բնավ ենթակա չէ վերահաստատման: Սեւրի դաշնագրի պարագայում, հիշեցնենք, որ «կյանքի չի կոչվել» միմիայն եւ բացառաբար Հայկական հարցի դեպքում: Իսկ դարձյալ, ըստ միջազգային նորմերի, միջազգային ակտի մասնակի կատարումը, ինքնին, պարտավորություն է ստեղծում դրա ամբողջական կիրառման համար: Գիտեմ նաեւ, որ Ալեքսանդրապոլի, Կարսի պայմանագրերն են, որ չունեն համարժեք վավերականություն:

Իրավական այս ակտերի դեպքում չկա, իհարկե, վավերականության հարց, այլ ուժի գործադրման խնդիր: Թուրքերը ուժով տիրապետություն են հաստատել հայկական տարածքի վրա: Տարածք, որը նույնիսկ ԱՄՆ-ի կողմից դեռ պաշտոնապես չի ճանաչվել որպես Թուրքիայի պետականության մաս: Այս պատմական ճշմարտության վրա աչք փակելով ու եղած-չեղածն էլ սեփական ձեռքերով դարակը նետելով, չգիտեմ ուր պիտի հասնենք վերջապես... Թող գործող իշխանությունները չբարձրացնեն տարածքային պահանջներ եւ նույնիսկ հատուցման հարց, դա կընկալվի թերեւս: Բայց պահանջատիրությունից հրաժարվելը մարտավարական հարց չէ ու դրա իրավունքն էլ չունեն հատկապես համահայկական ուժերը:

ՀՅԴ-ն եւ ՌԱԿ-ը քաղաքական բազմամյա փորձից հետո, լավագույնս գիտեն Սեւրի դաշնագրի իրավական հիմքերը եւ հատկապես վիլսոնյան իրավարարության վավերականությունը: Հիջազի, Սիրիայի եւ Իրաքի նկատմամբ Սեւրի պարտավորությունները ստանձնած եւ իրականացրած Թուրքիայի պետությունը, իր պաշտոնական խոսնակներով, Սեւրի դաշնագրի «կյանքի կոչվելու» մասին ավելի զգուշավոր է արտահայտվում, եւ ջանում է հնարավորինս չարտահայտվել վիլսոնյան իրավարարության մասին: «Ազգը» պատահակա՞ն է համարում պաշտոնական Անկարայի այս կեցվածքը, թե՞ կարծում է, որ թուրքերն էլ միամտաբար Սեւրի դաշնագիրը չեն զանազանում վիլսոնյան իրավարարությունից... Թերեւս պետք է եւս մեկ անգամ շեշտել, որ Թուրքիան Սեւրի դաշնագրի ամբողջական ստանձնումով, ընդամենը ճանաչելու է ՀՀ անկախությունը եւ գերիշխանությունը, ինչը թուրքերը փորձում են չանել: Իսկ վիլսոնյան իրավարարության մերժումը իրավականորեն հնարավոր չէ Թուրքիայի կողմից, ինչը թուրքերը շատ լավ գիտեն ու դրա համար էլ շրջանցում են հարցը:

Երանի գտնվեր գոնե մի թուրքերեն թերթ, մի թուրք մտավորական Թուրքիայում, որ քաղաքական ինչ-ինչ հաշվարկներից մեկնած եւ թեկուզ առանց իրավական հիմնավորումների, գեթ մի անգամ, վավերական համարեր վիլսոնյան իրավարարությունը, ճիշտ այնպես, ինչպես մեզանում, որ հաճախ ջանում ենք փոսեր որոնել՝ վիլսոնյան իրավարարությունը թաղելու, հաճախ էլ առանց իրավական հիմնավորումների, հաճախ էլ մոռանալով, թե թաղման նման արարողությունները բացասական որքան հետքեր են թողնում մեր սերունդների դաստիարակության վրա...

ՀՅԴ-ն եւ ՌԱԿ-ը «փաստորեն հարվածում են» Հայոց ցեղասպանության միջազգային գործին... «Ազգի» այս հայտնագործությունը կարող էր հանճարեղ վերտառության շաղախ հանդիսանալ երբեմնի հրատարակվող թերթերի համար կամ հենց «Ազգի»... ապրիլմեկյան համարի, սակայն, ցավոք, այդ մասին կարդում ենք նոյեմբերի 17-ի համարում, ուր կտրուկ ասվում է. «*հայտարարությունն ստորագրողները նման շեշտադրությամբ* (այսինքն հայապատկան հողատարածքների վերադարձը իրենց իրավատիրոջը- Կ. Խ.) *փաստորեն հարվածում են հենց այն գործին, որին այժմ լծված են Հայոց պետությունն ու լոբբիստական տարբեր խմբերը, այդ թվում՝ ստորագիր կուսակցությունները տարբեր երկրներում՝ Ցեղասպանության ճանաչում տարբեր պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից*»: Ահա թե ինչպես է փաստարկում «Ազգը». «*Փաստ է, որ թուրքական դիվանագիտական ջանքերը ներկայիս ուղղված են ոչ միայն Ցեղասպանության ժխտմանը, այլեւ հայության վերոհիշյալ արդարացի պահանջները որպես ծավալապաշտության ապացույց ներկայացնելուն: Նույնը՝ թուրքական ներքին ճակատի վրա, որտեղ թուրք իշխանությունները հայերի «ծավալապաշտական նկրտումներով» են ձգտում լռեցնել ճանաչմանը կողմնակից թուրք փոքրաթիվ խմբերին, մեջընդխառն խեղաթյուրելով նաեւ ղարաբաղյան հարցի էությունը, այն նույնպես որպես «հայկական նվաճողականություն» ներկայացնելով: Զույգ կուսակցությունների ծրագրերում հստակորեն արձանագրված են մեր բոլոր պահանջները, հետեւաբար, այս պահին կարիք չկար նման մարտավարական սայթաքման*»: Այստեղ մի քանի հարց է առաջանում, որոնց էլ կփորձենք պատասխանել. նախ եթե ՀՅԴ-ն ու ՌԱԿ-ը չկատարեն նշյալ «մարտավարական սայթաքումը» ապա քարոզչական գետնի վրա զինաթա՞փ է դառնում թուրք դիվանագիտությունը: Ո՛չ, քանզի նրանք, ամբոխային տրամաբանությամբ, առանց այն էլ բազում պատրվակներ ունեն մեզ «ծավալապաշտ» եւ այլ անվանարկումներով կոչելու: Երկրորդ. այդ «սայթաքում»-ը թույլ չտալով կհանվի՞, 301-րդ հոդվածով կամ էլ աստված գիտե քանիերորդ հոդվածով, իրավական հուժկու դաշտը, որը, որոշակիորեն, մշակվել է ներքին ձայները լռեցնելու համար: Իհարկե, ո՛չ: Թուրքերը ձայներ լռեցնելու համար վաղուց կառչած են հենց «Սեւրի սինդրոմին»... ու նոր սինդրոմներով չեն պայմանավորում իրենց «պայծառ ուղին»: Երրորդ. Արցախյան հարցում արդարանալու համար, թուրքերը ուրիշ ի՞նչ խաղ պիտի մոգոնեին, եթե ոչ «Հայաստանի ագրեսիա»-ն, եթե ոչ «հայկական ծավալապաշտություն»-ը: Արդյո՞ք Վուդրո Վիլսոնը հայ-ադրբեջանական սահմանն էլ է՞ր վճռորոշել: Պիտի հիշեցնել, որ արցախյան հարցում էլ Թուրքիայի դիրքորոշումները չեն պայմանավորվում մեր պահանջներով, նրանք, կոնցեպտուալ կերպով, առաջ են մղում «ադրբեջանցիների ցեղասպանության» հարցը: Խնդրեմ, թող «Ազգը» այս մասին էլ տա իր ախտաճանաչումը: Ի դեպ, ըստ ոմանց, եթե մենք հրաժարվենք Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարից, թուրքերը չե՞ն արծարծելու Խոջալուի առասպելը:

Ուրախալի է, որ «Ազգը» արծարծում է «ճանաչմանը կողմնակից թուրք փոքրաթիվ խմբերի» հարցը եւ մտահոգվում նրանց ճակատագրի համար: Ապա «Ազգը» ի՞նչ կարծիքի է, Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում շոշափելի արդյունք ձեռք բերած ՄԷՀԷՓԷ-ի եւ գորշգայլական մյուս հոսանքների մասին, որոնք, օրենսդիր իշխանության մաս կազմելով հանդերձ, իրենց երազած «Մեծ Թուրանիա»-ի, Ադրիանապոլիսից մինչեւ Չինաստան տարածվող «թուրքական տարածքների» քարտեզներով ողողում են թուրքական մեդիան... Եվ ոչ «Զումհուրիեթը», ոչ էլ «Հուրիեթը» չեն քննադատում, թե դա խանգարելու է Թուրքիայի իշխանությունների հակահայ լոբբիզմը եւ թուրքերին ներկայացնելու է որպես «նվաճողական», որպես «ծավալապաշտ»: Տարբերությունների մասին էլ չհիշեցնեմ, որ ՄԷՀԷՓԷ-ն ռասիստ է, իսկ ՀՅԴ-ն՝ սոցիալիստ, ՌԱԿ-ը՝ լիբերալ-դեմոկրատ, ՄԷՀԷՓԷ-ն ցեղասպանության տեսության կողմնակից է, Իսկ ՀՅԴ-ն ու ՌԱԿ-ը՝ ցեղասպանության դառն հետքերը կրած եւ հատուցման

համար տարիներ պայքարած ուժեր: Թուրքիայում ՄԷՀԷՓէ-ին «ավանդական կուսակցություն» պատվին չեն արժանացնում, բայց եւ նրան չեն էլ հռչակում ազգային շահի ուղղությամբ տարվող պետական քայլերը խանգարող... Սիա թուրք ազգն ու մեր «Ազգը»:

ՀՅԴ-ի ու ՌԱԿ-ի համար Հայ դատը միմիայն Ցեղասպանության ճանաչում չէ: Նա ունի նաեւ տարածքային պահանջատիրության երես: Մյուս կողմից՝ տարակույս չունեմ, որ տարածքային պահանջատիրությամբ այսօր չեն կարող հանդես գալ ՀՀ իշխանությունները: Սա ներկայիս քաղաքական պայմաններում ռացիոնալ քայլ չի համարվելու: Սակայն պարագան նույնը չէ համահայկական կուսակցությունների համար:

Մտադիր չեմ ՌԱԿ-ի «Կոչ»-ը պաշտպանելու դիրքերում հանդես գալ, քանզի հավատում եմ, որ ՌԱԿ-ը որպես փորձված քաղաքական կուսակցություն, ունի իր «Կոչ»-ի տրամաբանական հիմնավորումները: Բայց ուզում եմ մի երկու դիտողություններ անել. «Կոչ»-ը տեսակետ է հայտնում Հայ դատի պահանջատիրության իրավունքի մասին եւ ոչ թե՝ Ցեղասպանության ճանաչման: Թերեւս նույն մտահոգությամբ (տարածքային հարցով ՀՀ իշխանությունների պահանջատեր կեցվածքի անպատեհությունը) ՌԱԿ-ը փորձել է քաղաքական ելք գտնել՝ պահանջատիրական քայլերը սփյուռքի միջոցով նախաձեռնելով: Ինչ կա այստեղ այդքան արտառոց, որ ստիպում է «Ազգին» առատորեն քննադատել ՌԱԿ-ին: Եթե «Ազգը» հարմար է նկատում, որ ազգը չարծարծի իր պատմա-իրավական իրավունքները, որ հանկարծ ՀՀ իշխանությունները Թուրքիայի կողմից չհռչակվեն «ծավալապաշտական նկրտումներ ունեցողներ», էլ ինչու է զարմանում ՌԱԿ-ի «Կոչ»-ից եւ նրա առաջարկած ելքից: Չէ՞ որ նրանք փորձել են ելք գտնել՝ հենց այդ գլխացավանքներից հեռու պահել ՀՀ իշխանություններին...

Անցնենք մյուս ախտաճանաչմանը. «*Եթե վաղը Ջավախքը ինքնավար դառնա, հայաթափությունն այդ երկրամասում չի դադարի այնքան ժամանակ, քանի դեռ ջավախահայությունը կայուն աշխատանքի պայմաններ չի ունենա, հետեւաբար ազգային ու քաղաքական հարցերի լուծման հիմքը նյութական ներդրումներն են*»: Այս հանճարեղ թվացող եզրակացությանը, ժամանակին, հանգել էին բոլշեւիկները: Եթե տեսականորեն թափանցենք նրա խորքը, ապա, պարզվում է, մատերիալիստական հին բանաձեւը, ըստ որի կարելի է տնտեսական իրավիճակի բարելավմամբ, կամ նյութական ներդրման ճամփով, լուծել ազգային, էթնիկական, մշակութային հարցերը: Թողնենք մանավանդ Ջավախքի կապակցությամբ նման բանաձեւերի պատմական ձախողված փորձերը ու միանանք «Ազգին», տեղին համարելով հայաթափման մտահոգությունը (մյուս քննադատությունների համեմատ, «Ազգն» էլ այս մասն էր ավելի լավ ձեւավորել): Սակայն, հիշեցնելով պատճառահետեւանքային հինավուրց օրինաչափությունը, հայտնենք նաեւ, որ Ջավախքում հայաթափման, կայուն աշխատանքի պայմանների չգոյության եւ մյուս սոցիալ-տնտեսական բարդությունների բուն պատճառների կարեւոր մի մասը լուծվելու է Ջավախքի ինքնորոշման եւ ինքնավարության պայմաններում:

«*Թող որ այս պահին,*- շարունակում է «Ազգը»,- *երբ անլուծելի են մնում Աբխազիայի եւ Օսեթիայի հակամարտությունները, Թբիլիսին որպես թշնամական ակտ է ընդունում նման հայտարարությունը*»: Հազվադեպ է պատահել մարդկային պատմության մեջ, որ տերիտորիալ, էքստերիտորիալ կամ նույնիսկ մշակութային ավտոնոմիան հաշտ աչքով է ընկալվել կենտրոնական իշխանությունների կողմից՝ մանավանդ եթե նրանք պատկանել են բազմազգ պետություններին: Հայտարարություն չանելով, այդ մեկից էլ հրաժարվելով, դժվար է հույս կապել վրացական ներկա ռեժիմի բարյացակամության հետ: Նման կեցվածքները կտրուկ հակասում են համահայկական կուսակցությունների առաքելությանը: Բուն մտահոգությունը, անշուշտ, դեպի ինքնորոշում տանող ճանապարհն է, որի փարատման համար էլ ՀՅԴ-ՌԱԿ դեկլարացիան առաջադրում է օրինականության ընդհանուր շրջագծում քայլելու ռազ-

մավարություն: «*Աջակցիլ Ջավախքի հայության՝ Վրաստանի կազմին մեջ ինքնավարության ձեռք բերման օրինական պահանջներուն*»,- ընդգծում է դեկլարացիան:

Չեմ ուզում անդրադառնալ «Ազգի» այն քննադատությունների տարափին, որոնք վերաբերում են սփյուռքյան ցավոտ հարցերին, քանզի մտադիր չեմ փչացնելու այդ հարցերի բարեհաջող լուծման ուղղությամբ ստորագրված դեկլարացիայի բարձր տրամադրությունները՝ հին ու մաշված հանգերգներին տոն տալով: Եթե ՀՅԴ-ն ու ՌԱԿ-ը ազգի այդ ցավոտ հարցերը լուծելու համատեղ կամք են դրսեւորել, հավատացած են, որ դրանք լուծվելու են ամենայն սկզբունքայնությամբ, անկախ «Ազգի» հորդորներից:

ՀՅԴ-ՌԱԿ հայտարարության մեջ Հայ դատի պահանջատիրության, Վիլսոնյան իրավարարության, Արցախի, Ջավախքի եւ մյուս նշյալ ազգային, պետական եւ քաղաքական հարցերի շուրջ եթե հնչեին իրադրային, պատեհապաշտական եւ համահայկական կուսակցությունների սկզբունքայնությանը չհամապատասխող ֆրազներ, կարծում եմ, առաջին բողոքողների շարքում հանդես էր գալու հենց ինքը «Ազգը», որպես ազգային մամուլի ամենահնտելեկտուալ ներկայացուցիչներից մեկը: Չեմ էլ տարակուսում... Ուրեմն ո՞րն է բուն դրդապատճառը, որ ստիպեց «Ազգին» այդքան հեռու գնալ իր իսկ որդեգրած ազգային վարքագծից:

Փորձեմ հիմնավորել. նախորդ իշխանությունների ժամանակներից, «նարինջ ուտողները թող մեզ խելք չսովորեցնեն» մոտեցմամբ, նախ հորինվեց «ավանդական կուսակցության» հասկացությունը, ապա հանրության գըլխին փաթաթվեց նրանց «ավանդական դերակատարության» կոպիտ սահմանումը: Օրինակ՝ ՀՅԴ-ն միայն պիտի զբաղվեր Հայ դատով, սփյուռքի կազմակերպական գործերով, իսկ ՌԱԿ-ը պիտի հանդես գար Հայաստանին նյութական օժանդակություն ցուցաբերողի դերում: Բնականաբար համահայկական կուսակցությունները տվյալ սահմանումներում չտեղավորվեցին (ու չէին կարող տեղավորվել): Հիշում եք, չէ՞, արդյունքը ի՞նչ եղավ. ՌԱԿ-ին հասցրին ներկուսակցական անջատման եզրին, իսկ անջատման մինագամայն անընդունակ Դաշնակցությանը արգելափակեցին:

Շինծու ստերեոտիպը չանհայտացավ իշխանափոխությունից հետո եւ, վարպետորեն, շարունակեց որդեգրվել նոր իշխանություններում գտնվող ուժի կենտրոնների կողմից: Նրանք զայրանում են, երբ խախտվում է նրանց ստերեոտիպ սահմանումը, երբ «ավանդական կուսակցությունները» դրսեւորում են «ոչ-ավանդական» քաղաքական կեցվածքներ, հատկապես նախագահական ընտրությունների սեմին: Հայաստանի քաղաքական դաշտը վաղեմի ոխակալություններից, նախապաշարվածություններից, սուբյեկտիվ եւ անիմաստ հակադրություններից մաքրագործելու ուղղությամբ ՀՅԴ-ի առած քայլերը, զարմանալիորեն, թերարժեւորվում են հենց այն ուժի կենտրոնների կողմից, որոնցից է, հիմնականում, ակնկալվում անոխակալության դրսեւորումներ...

Բայց ո՞նց կարելի է հանդուրժել. դաշնակն ու ռամկավարը, իրենց սփյուռքյան գզվռտոցը թողած, արդարության, արդար, ազատ ու թափանցիկ ընտրությունների, սոցիալական հարցերի մասին դեկլարացիաներ արձակելով, նորից մեզ խելք ե՞ն սովորեցնում: Թվում է, այստեղ է թաքնված բուն դրդապատճառը... ամեն գնով թերարժեւորել դեկլարացիայի ակտը:

Դիտողություններս թերեւս սուր, անզիջում, մի քիչ էլ խստաշունչ էին «Ազգի» այն մտքերի նկատմամբ, որոնք արծարծվել էին մեր ազգային իդեալների կապակցությամբ: Սակայն այս վերջին հարցով... միայն հույս եմ հայտնում, որ սխալ եմ դատել, որ «Ազգի» հոդվածը ազգային մտահոգություններից բխած, հետին նպատակներից հեռու, անմիջական ու զգացական անփույթ դրսեւորում է եղել, եւ ոչ թե քաղաքական ճղճիմ հաշվեհարդարի հերթական, կամայական արգասիք...



29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2007

ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԱԲՐԱՀԱՄ ԱՇՃՅԱՆԻ ԱՌԵՎԱՆԳՄԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ

ԱՎՈ ԳԱԹՐՃՅԱՆ

Պատմության ընթացքին հաճախ մարդիկ կուգան ու կերթան, եւ ամեն մեկը իր դերը կը կատարե, ինչպես թատերգության մը դերակատարները: Բայց ամեն մեկը անկասկած հատուկ իր դրոշմը կը ձգե, որպես ոճ, գույն ու հոտ, որովհետեւ «ամեն ծաղիկ իր գույնն ու բույրն ունի»:

Այստեղ, սակայն, անմիջապես կը մեջբերենք սխալաբանված ժողովրդական այն ասացվածքը, որ կըսե, թե՝ «**Անփոխարինելի մարդ չկա՛ այս աշխարհի վրա**»: Արդ, բացահայտ եւ անհերքելի իրողություն է ճիշտ հակառակը: **Անկրկնելի եւ անփոխարինելի են մարդիկ**: Անհրաժեշտ է չխաբվիլ երեւութական նմանություններե, պատրանքներե:

Ինչպե՛ս է պարագան պատմության, ան չի՛ կրկնվիր, այլ կը նմանի:

Հետեւաբար, անկրկնելի եւ անփոխարինելի է յուրաքանչյուր անձ, իր հավատքով, ինքնությամբ, սկզբունքներով...

Մեկնողներու փոխարեն զանոնց փոխարինողները անկասկած իրենց հետ կը բերեն նոր շունչ, նոր ավյուն եւ մանավանդ նոր գործելաոճ: Այսպիսով մարդկության դիմագիծը կը կրե արմատական փոփոխություն:

Այս առումով ամենեն դիպուկ օրինակն է Դաշնակցության կազմակերպական ավանդներուն անհարիր անփոխարինելի կորուստներու գաղափարը, վկա՝ Քրիստափորի իսկ նահատակութենեն վերականգնելու Դաշնակցության պատմական փորձը:

Դաշնակցության դրոշին ներքեւ գործելու համար շատեր եկան ու մեկնեցան: Տակավին կուգան: Կուգան իրենց հատուկ մտածելակերպով, գործելաձեւով, սխրագործությամբ, հավատարմությամբ, անկեղծությամբ, բայց ոչ բոլորը նույնանման են:

Ահա այդ ընտրանիներու ընտրյալներեն էր Դաշնակցության Լիբանանի Կեդրոնական կոմիտեի երկար տարիներու անդամ եւ շրջանի կազմակերպության ապահովական գործին թե ընդհանրապես ամբողջ դաշնակցական ընտանիքին ողնաշարը հանդիսացող մարտական կառույցին ամենեն փորձված ու հավատավոր ներկայացուցիչ՝ ընկ. Աբրահամ Աշճյանը, որի 29 դեկտեմբեր 1982-ի առեւանգումն ու հետագային սպանությունը եղավ առաջին ու ծանրակշիռ օղակը հակադաշնակցական ոճիրներու այն վատոգի շղթային, որ մինչեւ 1986-ի գարունը խլեց կյանքերը դաշնակցական անփոխարինելի ծանոթ գործիչներու և ընկերներու:

Այսօր, Աբրահամ Աշճյանի առեւանգման 25-ամյակի առթիվ, եթե փորձենք ամփոփ կերպով անդրադառնալ անոր կյանքի զանազան գիծերուն, նվաճումներուն, ազգային եւ կուսակցական իր բազում ծառայություններուն, անկասկած պիտի մնան բացթողումներ և պիտի չամբողջանան ոչ այսօր, ոչ ալ վաղը:

Վերոհիշյալ մեկնակետեն ելլելով, մաղթենք, որ ուսումնասիրական այս համեստ հոդվածը վառ պահե անոր հիշատակը:

Աբրահամ Աշճյան ծնած է 1925-ին Հալեպ, ուրֆացի ծնողքե, որոնք գաղթած են Ուրֆայեն և հաստատված Հալեպ: Հայրը Հովսեփ, մայրը Վարդուհի, ունեցած են երեք մանչ զավակներ՝ Հակոբ, Արմեն և Աբրահամ (Աբո): Հետագային անոնք կը փոխադրվին Պեյրութ:

Նախնական կրթությունը ստացած է ավետարանականներու դպրոցը: 13 տարեկանին մաս կը կազմե Հ.Յ.Դ. «Բաբկեն Սյունի» պատանեկան միության: Ան անդամագրված էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի, նախ իբրեւ գայլիկ, ապա՝ սկաուտ:

Նախակրթարանեն ետք անցած է «Գապպուշիյէ»-ի (Պապ Ըտրիսի շրջանը) երկրորդական դպրոցը, սակայն ավարտին մեկ տարի մնացած կը լքե դպրոցը:

Աբրահամ Աշճյան մարզանքի հանդեպ ունեցած մեծ սերը կատարելագործելու համար մաս կը կազմե Հ.Մ.Ը.Մ.-ի բռնցքամարտի խումբին, ավելի ուշ կը միանա «Սահիա» մարզական ակումբին (նետի սահիա), մասնակցելով բռնցքամարտի եւ ըմբշամարտի խմբակին, ուր ան խնամք կը տանի իր մարմնի ձեւավորման ու զորացման:

Մոտավորապես 1948-ին կը կատարե իր դաշնակցականի երդումը եւ մաս կը կազմե Հ.Յ.Դ. «Քրիստափոր» կոմիտեության, դառնալով հավատարիմ ծառան Հ.Յ.Դ.-ի գաղափարական մեծ ընտանիքին: Երկար տարիներ կը ստանձնե կոմիտեության պաշտոն:

1975-ին, երբ Լիբանանի մեջ կը սկսի քաղաքացիական պատերազմը, ընկ. Աբրահամ արդեն շրջանի Կեդրոնական կոմիտեի անդամ է: Այդ քաղաքացիական պատերազմին Հ.Յ.Դաշնակցությունը, իր կոչումին հավատարիմ՝ կը ստանձնե շրջանի հայության ինքնապաշտպանությունը: Միջին Արեվելքի Հայ դատի խարիսխներեն մեկն ըլլալով Լիբանանը, անհրաժեշտ էր, որ պահվեր այդ գաղութին ինքնուրույն հայկական դիմագիծը, եւ ահա այս ծանր պարտականությունը կը ստանձնե որպես մարտական եւ շրջանի ապահովական պատասխանատու դաշնակցական Աբրահամ Աշճյանը:

Բնավորությամբ հանդարտ, պարտաճանաչ եւ բոլորանվեր՝ Դաշնակցության հին օրերեն դաշնակցական հայդուկապետ եւ ռազմագետ Նիկոլ Դումանի հետնորդն էր ան: Դաշնակցականի մարտական խիզախությունն ու անսպառ կորովը, խստապահանջ կարգապահությունն ու անխարդախ նվիրումը եղան ընկեր Աբոյի ցայտուն հատկանիշները: Եթե երեսին վրա ծիծաղ մը տեսնվեր, կը նշանակեր, որ ջղայնությունը գագաթնակետին հասած էր:

Ռազմական արվեստը դժվարին մարզ մըն է, հոն ոչ մեկ սխալմունքի տեղ կա, միշտ անհրաժեշտ է ըլլալ արթուն, զգոն եւ կատարյալ զորավոր սիրտով: Մանավանդ երբ կը հետապնդես Դատ մը, եւ կը պաշտպանես քեզի վստահված քու սուրբ ազգիդ կյանքը, պիտի գիտնաս, որ ամեն ջանք պետք է թափես կյանք մը ազատելու համար, ի գին քու կյանքիդ: Արդ, Աբրահամ Աշճյան գիտակցելով այս բոլորը, նախազգացումը ուներ, թե իրեն պես կարեւոր անձի մը ինչ կրնա պատահիլ: Մանավանդ երբ անոր բեղուն կյանքը ամբողջությամբ հատկացված էր իր մեծ ընտանիքին՝ պաշտած կուսակցության եւ անոր միջոցավ ազգին:

29 դեկտեմբեր 1982-ին, չորեքշաբթի առավոտյան վաղ ժամերուն, Աբրահամ Աշճյան կառեւանգվի, երբ ան էշրեֆիեի իր բնակարանեն կուղղվեր դեպի Պուրճ Համուտի իր գործատեղին: Նույն օրն իսկ կը սկսին լիբանանյան իշխանության հետ շփումները եւ պետական թե կուսակցական հետապնդումները, քողազերծելու համար առեւանգումին հեղինակները եւ փրկելու Աբրահամ Աշճյանը:

Աբրահամ Աշճյանի ինքնաշարժը, կուսակցական ընկերներու հետապնդումով, կը գտնվի հաջորդ առտու, Համրա թաղամասին մեջ: Բայց այնուհետեւ, հակառակ թափված ճիգերուն, կարելի չըլլար գտնել Աշճյանի հետքը: Հետեւաբար՝ հառաջիկա օրերուն թե՛ մամուլով, թե՛ թղթիկներու ձեւին տակ, հայ ազգային երեք կուսակցությունները (ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ) լույս կընծայեն հաղորդագրություն մը, որ ուժգնորեն կը դատապարտե առեւանգման արարքը:

Առեւանգման լուրը անմիջապես բողոքի մեծ ալիք մը կը բարձրացնե կուսակցական եւ համահայկական առումով:

Ուրբաթ, 31 դեկտեմբեր 1982-ին, երկու ժամվան խորհրդանշական գործադուլով մը, հայությունը կարտահայտե իր ընդվզումն ու բողոքը:

Լիբանանի մամուլն ու հաղորդակցության միջոցները կարծագանքեն թե՛ առեւանգման լուրին եւ թե՛ հայության բողոքի ելույթներուն: Դատապարտումի խոսքերով Հ.Յ.Դ. Լիբանանի Կ. կոմիտեի հետ կը կապվին պատասխանատու դեմքեր, իրենց կարգին ընդգծելով, որ Լիբանանի հայության ուղղված նման հարված մը կը սպառնա բովանդակ երկրի ապահովության:

Երկուշաբթի, 3 հունվար 1983-ին, «Ազդակ» իր խմբագրականով, հանրային կարծիքին ուշադրության կը

հանձնե մտահոգիչ հետեւանքները Աբրահամ Աշճյանի առեվանգումին, շեշտելով անհրաժեշտությունը համալիբանանյան վճռական քայլերու, որպեսզի կարելի ըլլա ծախողության մատնել դավադիր արարքին մութ հաշիւները:

Արդարեւ, տեսակցություններու եւ հետապնդումներու գծով թափված ճիգերուն իբրեւ եզրակացություն, շուտով բացահայտ կը դառնա, որ առեւանգման ետին կը գտնվի միայն մեկ հասցե՝ թուրք պետությունը եւ անոր գաղտնի սպասարկությունները:

Հետեւաբար՝ այս մեկնակետեն ելլելով, չորեքշաբթի, 12 հունվար 1983-ին, «Ազդակ» լույս կընծայե «Հեղինակը եւ նպատակը» խորագիրով խմբագրականը, որուն ոգիեն մեկնելով լիբանանյան հանրային կարծիքին ուղղվեցավ նաեւ պաշտոնական հաղորդագրություն մը, որ հակահայ այս անարգ ոճիրին պատասխանատու կը նկատե թուրք պետությունը՝ պահանջելով ազդու քայլերու դիմել՝ թե՛ Աշճյանի ազատ արձակումը ապահովելու եւ թե՛ Լիբանանի մեջ «Հայկական հարց» մը հրահրելու թրքական սադրանքը վիժեցնելու համար:

Ստորեւ կը ներկայացնենք «Ազդակ»-ի, 12 հունվար 1983-ին, լույս տեսած խմբագրականեն հատված մը, որ կըսե.

«թրքական պետական ահաբեկչությունը պիտի շարունակե միշտ գործել մութին մեջ, բացառապես ապավինելով բիրտ ուժի եւ խորամանկ ու նենգավոր ռազմավարությանց. պիտի գործե մութին մեջ եւ միշտ դավադրորեն, որովհետեւ կը վախնա լույսեն եւ մարդկային արդարութենեն. որքան ալ ծեռնոց նետենք, մենք կամ ուրիշներ, թուրք պետությունը երբեք քաջությունը պիտի չունենա ազգային կամ միջազգային որեւէ դատարանի ներկայանալու, ո՛չ իբրեւ ամբաստանող եւ ոչ ալ մանավանդ որպես ամբաստանյալ. անոր միակ ապավենը է՝ եւ պիտի մնա պետական ահաբեկչությունը եւ միայն մութին մեջ գործելու հնավանդ արհեստավարժությունը»:

Վերոհիշյալ հոդվածին, որպես պատասխան, 21 հունվար 1983-ին, Անկարայեն տրված հեռագրալուրով մը, մամլո «Ռոյթըր» գործակալությունը կը հաղորդե, որ Թուրքիա կը հերքե Հ.Յ.Դ. Լիբանանի Կ.Կ.-ի անդամ Աբրահամ Աշճյանի առեւանգման անարգ ոճիրին իր պատասխանատվությունը:

Հեռագրալուրը բառացիորեն կը հաղորդե հետեւյալը.

«Թուրքիո արտաքին գործոց նախարարության մեկ բանբերը շինծու եւ սուտ որակեց հայկական կուսակցության մը այն ամբաստանությունը, որուն համաձայն՝ թուրք գաղտնի գործակալներ առեւանգած են անոր ղեկավարներեն մեկը:

Դաշնակ կուսակցությունը, որ Լիբանանի հայկական երեք կուսակցությանց մեծագույնը կը նկատվի, անցյալ շաբաթ ամբաստանած էր թրքական կառավարությունը՝ դեկտեմբեր 29-ին իր ղեկավարներեն Աբրահամ Աշճյանը առեվանգած ըլլալու հանցանքով:

*Նույն բանբերը հայտնեց, որ հայկական զինյալ կազմակերպությանց միջեւ հակամարտությունները ծանոթ են, եւ ավելցուց, թե «**վերջին այս դեպքը կը թվի ըլլալ այդ հակամարտության հետեւանքներեն մեկը**»:*

Ինչպես կը նկատենք, օրին, Թուրքիա ոչ միայն կուրանա իր ոճիրը, այլեւ նենգամտորեն կը ստե՝ խառնակչություն ընելու եւ ներ-հայկական «զինյալ հակամարտություններ» հրահրելու ոճրամտությամբ:

Սակայն, որքան ալ ուրացումի դիմե եւ շարունակե մութին մեջ դավել՝ Թուրքիա չի կրնար խուսափիլ ճշմարտության ձայնեն, որովհետեւ հակահայ ամեն քայլի ետին օտարը եւս կը տեսնե անպատիժ Հայասպանության ծանրագույն ոճիրը եւ Թուրքիո կը հիշեցնե իր պատասխանատվությունը: Վկա՝ Թուրքիո արյունաթաթախ անցյալն ու Հրանդ Տինքը:

Աբրահամ Աշճյանի նկարագրին մեջ կարելի էր տեսնել Նիկոլ Դումանի, Դրոյի եւ այլ տիպարներու համադրությունը, որոնք միաձուլվելով անոր մեջ հիմնվեցավ «Աբոյական» դպրոց մը:

Այս բոլորը կը վերականգնենք, առանց կույր անհատապաշտության ծայրահեղ աստիճանի հասցնելու հարգանքի զգացումը:

Անոր գործը օրինակ թող ծառայե մեր դարու աճող, մտավորական դասակարգ կազմող սերունդին եւ մարտական բանակին:

Անոր բյուրեղյա սիրտը, անսահման անձնազոհությունը, հավատարմությունը եւ ազգասիրությունն ու հայրենասիրությունը պահած էին զինք ամրակուռ դաշնակցական: Այսպես էր ան, որովհետեւ անոր մղիչ ուժը հավատքն էր: Այդ հավատքով զինված՝ կը ստանար իր ուժն ու կենսունակությունը:

Ան կը հավատար Հայ դատի արդարության եւ անոր հաղթանակի անխուսափելիության:

Աբրահամ Աշճյանի առեւանգման 25-ամյակի առթիվ, դժբախտաբար պիտի չկարենանք բան մը ըսել հատկապես անոր շիրիմին ու գերեզմանին մասին: Անոր անտերունչ, անթաղ մասունքին, որ չունեցավ հիշատակարան, եւ հողակույտ՝ մեզի այցելության:

ՔՐԻՍՏԱՓՈՐԸ ԵՎ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ

Վաղեմի իմ բարեկամ, հայագետ Երվանդ Փամբուկյանից, որն այժմ զբաղվում է իր սիրելի գործով՝ հրատարակության է պատրաստում Դաշնակցության արխիվային նյութերը՝ «Նյութեր Հ.Յ.Դաշնակցության պատմության համար» վերտառությամբ («Նյութերի» Ե հատորի մասին կարող եք կարդալ «Դրօշակ»-ի նախորդ համարում), նամակով խնդրել էի Սիմոն Վրացյանի թղթածրարների մեջ փնտրել ինձ հետաքրքրող մի հուշագրություն, որի մասին ակնարկել էր ինքը՝ Վրացյանը, Հովհ. Քաջազնունու «Յետ մահու» գրքի առաջաբանում:

«Քաջազնունիի թողած ձեռագիրներէն մէկը միայն չի դրուած հատորի մէջ - «Վճռական ժամին» - Հայաստանի խորհրդայնացման նախօրեակին վերաբերուող իր յուշերը,- գրում է Սիմոն Վրացյանը իր իսկ կազմած գրքի «Երկու խոսքում»:- Գործնական կեանքի համար արդէն ուշ է, պատմութեան համար դեռ շուտ է այդ յուշերի հրատարակութիւնը: Դրա ժամանակն էլ կը գայ»:

Եվ, ահա, մեկ ամիս էլ չանցած, Բեյրութից, շնորհակալությամբ, ստանում եմ Երվանդ Փամբուկյանի պատասխան նամակը.

«Սիրելի Ռուբէն,

Կը պատասխանեմ Հոկտ. 13-ի գրութեանդ: Խնդրանքդ առիթ ծառայեց, որ այս վերջին շաբաթները միտքվիմ Վրացեանի արխիւները կազմող շուրջ 200 թղթածրարներուն մէջ եւ փնտռեմ... փնտռածդ: Ուստի պէտք է երեւակայես հրճուանքս, երբ վերջապէս երեւան հանեցի մինչ այդ ինծի համար ծածուկ մնացած Քաջազնունիի այդ գրութիւնը...

Թղթածրարներու քննութեան ժամանակ, շատ մը այլ փաստաթղթերու շարքին, գտայ նոյնպէս ձեռագրեր Ավետիք Իսահակեանէն, յատկապէս «Դաշնակցութեան տասնամեակին» խորագրով ծանօթ իր պոէմին, ինչպէս նաեւ Հայ-Գուսանի Քրիստափոր Միքայէլեանի գրած մէկ նամակին: Առիթ եղաւ, որ քիչ մը բանասիրական աշխատանք տանիմ որոշ տարբերութիւններ (ոչ այնքան կարեւոր) երեւան բերելու համար: Արդիւնքը եղաւ այն, որ թերեւս ուղես հրատարակել ոչ այնքան ուսումնասիրական այդ չնչին գործը այդ մէկը առիթ ծառայեցնել Իսահակեանի այդ բանաստեղծութիւնը «Նորք»-ի կամ այլ միջոցով վերստին շրջաբերութեան մէջ դնելու: Յամենայն դէպս, այդ գործը եւս կուղարկեմ՝ բացատրական ծանօթութիւնովս եւ կը թողում քո դատողութեան: Վստահ եմ, որ գոնէ մէկ մարդ, Ավիկ Իսահակեան, սուր հետաքրքրութիւն պիտի ցուցաբերէ այդ յայտնութեան նկատմամբ»:

Ավետիք Իսահակյանի ձեռագիրը եւ Երվանդ Փամբուկյանի համեմատական ուսումնասիրությունը սիրով հանձնեցի Ավիկ Իսահակյանին, պայմանով, որ նա իր մեկնաբանությամբ ու ծանոթագրություններով պոեմը պատրաստի «Նորք»-ում տպագրելու համար: Իր հերթին՝ Ավիկ Իսահակյանը «Դրօշակ»-ին տրամադրեց Ավետիք Իսահակյանի՝ Քրիստափորին նվիրված բանաստեղծության ձեռագիրը:

Ստորեւ տպագրում ենք եւ Սիմոն Վրացյանի արխիվից հանված Ավետիք Իսահակյանի նամակը, եւ Գրականության եւ արվեստի թանգարանի Ավետիք Իսահակյանի ֆոնդում պահվող, Քրիստափորին ձոնված բանաստեղծությունը:

Իսկ ինչ վերաբերում է Հովհ. Քաջազնունու «Վճռական ժամին» հուշագրության հրապարակմանը, ապա Սիմոն Վրացյանի պես ես էլ ասեմ՝ դրա ժամանակն էլ կգա:

Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ

22 փետր., Վիեննա

Քրիստափոր ջան,

երեկ նամակդ ստացա. տեսա, որ կողմիցս նամարդություն է բան չգրելը. մեկ էլ ուղիղն ասած՝ քու ազիզ խաթրը պահեցի, թե չէ իսկի սիրտ չունեի: Մի խոսքով վերցրի թղթերս, կիսատ գրածներս, սիգար, սուրճ, կաթ, եւ սկսեցի գրել. երեկ գրեցի, վերջացրի մինչեւ կես գիշեր. իսկ այսօր էլի նույն տեղը արտագրեցի եւ այժմ ուղարկում եմ.- սրա վրա ծախսեցի 4 ֆրանկ. պարտական ես (լուրջ չեմ ասում):

Կարծեմ լա՜վ բան է, էպիկական է, հին ռապսոդիների պես. զգույշ սխալներ չանենք:

«Ջավահիր սարե՜ր» - Ջավոյի խաթեր համար գրեցի: Նրան կը հայտնես դա[1]*:*

Օրերս վատ են անցնում, մենակ եմ, տխուր. բժիշկը քննեց. ունիմ Neurasthenie, սրտի ջղայնություն. ծովում լողանալ խորհուրդ տվեց, կամ Օդեսա կերթամ, կամ Վենետիկ, կամ ժընեւ կու գամ,- լիձը, գոնե մի բան է: Փող լիներ, կերթայի Վենետիկ. տեսնեմ. հետո կը գրեմ. նամակս ստանալուն պես հայտնիր ինձ:

Ժողովրդական բառեր կան, չփոխեք: Օր. հանց կը նշանակե «ինչպես» եւ այլն:

Կարոտալի բարեւներ,

Ձեր Վվո,

Գուսան 7[2]

---

1. Ջավահիր Ներսիսյան. դաշնակցական ուսանողուհի ժընեւ, ուր հանդիպած էր իրեն բանաստեղծը: Ավելի ծանոթ է մտերմական Ջավո անունով. հետագային կինը Լեւոն Շանթի:

2. Գուսան 7, այսինքն յոթներորդը «Հայդուկի երգերու» շարքին: Արդարեւ «Դաշնակցության տասնամյակին» պոեմը այդ շարքին 7-րդ բանաստեղծությունն է:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

<ՄԵՐ ՔՐԻՍՏԱՓՈՐԸ...>

Մեր Քրիստափորը՝ որ ինքը ժընեւ
Սիրտը Հայաստան
Որ գրիչ ձեռին՝
Որ գրիչն էր թաթխում
Իր սրտի միջին,
(Եվ ժողովրդի ծով արյան միջին)
Եվ սրտի արյունով
Գրում էր այրված
Եվ առավոտից մինչեւ առավոտ:

Մենավոր, անբիծ իր ազիզ սրտից
Անուշ երգում էր գովքը Հայրենիքի
Վիշտը ժողովրդի.
Եվ երգերը նորա
Լսվում են մինչեւ հիմա
Հայոց լեռներում:

Քայլում էր նա ժողովրդի սրտից -
Նա երգն էր խորին
Հայ ժողովրդի:
Նա երգն էր խորունկ
Ազատության մեծ զանգի:

Թագ ու գահ չենք ուզում...
Ազատ կյանք ու ազատ գործ,
Արդար կյանք ու ճշմարիտ օրենք:

Մենք լույս ենք ուզում, ազնիվ աշխատանք:
Որ հայու թեւերն ազատ սլանան
Եվ ստեղծենք ազատ
Կյանք ու ապագա.
Երկիր ու երկինք:

Ավ. Իսահակյանի ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, N 261-II

Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 11—12 (188) XVII ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Հայկական հարցը եւ անգլիական մամուլը.- Տիգրանակերտի սպանությունների և հարստահարությունների լուրերը, անգլիական լուրջ մամուլի մեջ, անակնկալ կերպով, վեր կը հանեն նորեն հայոց հարցը եւ այժմեությունը կուտան անոր, որ զուրկ չէ շահեկան ըլլալե:

"The Nation", ազատական կուսակցության շատ ծանրակշիռ թերթը, ամփոփ հաղորդելով «գիշատիչ» քրդերու արարքները, կը հարուցանե հայոց խնդիրը սա բառերով. «Միեւնոյն ժամանակ ամենակարեւոր է, որ բան մը կատարվի հայերը փրկելու համար: Նույնիսկ Գերմանիոյ դեսպանը շարժեցավ: Մենք հիմա չը պիտի գտնեինք Ռուսիա իբր հակառակորդ, ինչպես գտանք 1895-ին:

"Times" իր հրատարակած մեկ ուսումնասիրության մեջ Լիբանանու մասին, ցույց կուտար, թե այդ լեռան առանձնաշնորհյալ Սահմանադրությունն ինչ թերություններ եւ առավելություններ ունի: Իսկ "The Spectator" շաբաթաթերթը կըսե. «կը հանձնարարենք այդ ուսումնասիրությունն ամեն անոնց, որոնք պիտի զբաղին հայոց խնդրովը»:

* * *

Հռովմի "Avanti"!-ի մեջ կարդում ենք հետեւյալ հեռագիրը Կ. Պոլսից:

Իշխանությունները բաց են արել երկրում սահմանադրական պրոպագանդ, որի հեղինակները մեծ միջոցների տեր են: Հրատարակված են պրոգլամացիաներ, ուր հրավիրում են բոլոր կուսակցություններին, առանց ցեղի ու կրոնի խտրության՝ միանալ ու պա-

հանջել սուլթանից սահմանադրություն, և մերժման դեպքում՝ հարկադրել բոլոր միջոցներով: Կարծվում է, որ Փոքր Ասիան և մասնավորապես Էրզրումը կենտրոնն են հեղափոխական պրոպագանդի:

* * *

Ռուս մայրաքաղաքի թերթերը ծանուցում են. Էրզրումում սկսվեցին մասսային ձերբակալություններ ու խիստ հալածանքներ, հենց որ եկավ նոր գեներալ-նահանգապետը՝ օժտված բացարձակ լիազորություններով:

* * *

Վիեննայի "Freie Presse"-ին հաղորդում են Սոֆիայից.

Սարաֆովի և իր ընկերոջ սպանությունը ցնցեց ազգաբնակչությանը: Ողբում են Մակեդոնիայի անզուգական հերոսին: Շատերը մեղադրում են սոցիալ-դեմոկրատ Սանդանսկու կուսակցությանը, որ կատաղի մրցակից է սարաֆովական կուսակցության եւ աշխատում է նույնպես Մակեդոնիայում:

Սպանողը անհետացած է, ժողովրդական զայրույթին սահման չը կա: Ուրիշ կասկածներ կան, որ վերաբերում են թուրք կառավարության գործակալներին. Սուլթանը 2000 ոսկի էր խոստացել Սարաֆովի գլուխը բերողին: Ոստիկանությունը անդադար խուզարկություններ է անում:

Սպանվածների մարմինները դրված են Ս. Գեորգ եկեղեցում, շարունակ պսակներ են տեղում: Այն պատգամավորների մեջ, որոնք հեռագրով ծանուցել են իրենց մասնակցությունը թաղման հանդեսին՝ գտնվում է նաեւ Հ.Յ.Դ. պատգամավորությունը:

* * *

Սահմանադրական շարժում Հայաստանում - Այս վերնագրով հետեւյալ հեռագրական տեղեկությունն է հաղորդված Կ. Պոլսից Վիեննայի Fremdenblatt-ին.

«Հյուպատոսների զեկուցումները Էրզրումից նկարագրում են դրությունը, իբրեւ վերին աստիճանի խռովալի: Տաճիկ հեղափոխական մի կոմիտե տարածել է մի կոչ, որը դատափետում է բռնակալ կառավարությունը եւ հորդորում է ժողովրդին դուրս գալ իր անտարբերությունից: «Կոչը» նկարագրում է կառավարության մեջ տիրող կաշառակերությունը, որի շնորհիվ եւ արտադրվում է մանր կաշառակեր պաշտոնյաների բանակը գավառների համար: Վերջապես, թուրք հեղափոխական կոմիտեն պահանջում է ժողովրդական ներկայացուցչություն: Քրիստոնյաները հրավիրվում են մասնակցության: Լուր կա, թե Էրզրում շուտով կը ղրկվի քննիչ»:

Սեյրան Օհանյան
XXI դարի բանակը
Երևան, 2007,
«Տիգրան Մեծ» հրատարակչություն, 270 էջ:

Երջանիկ է այն մարդը, ով տարիների հեռվից, երբ ետ է նայում, տեսնում է, որ իր ապրած կյանքը եկել, անցել է իր միջով և ոչ թե շրջանցել է իրեն:

Այս տեսակետը մի առիթով հայտնեց երջանկահիշատակ Լևոն Ներսիսյանը, ում ուսանողը լինելու մեծագույն պատիվն եմ ունեցել Երևանի պետական համալսարանում:

Այդ օրվանից մոտ քսանհինգ տարի է անցել, և այդ պահը հազիվ թե հիշեի, եթե անակնկալ սեղանիս չհայտնվեր ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար, ՊԲ նախկին հրամանատար, Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» և բազմաթիվ այլ շքանշանների ասպետ, գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանի ուղերձների, հարցազրույցների, ելույթների, զեկույցների ժողովածուն: Ժողովածու բառը, սակայն, խիստ հարաբերական է «XXI դարի բանակը» գրքի պարագայում, քանի որ ասելիքի մեջ երկրի ու ժողովրդի ապագայի շուրջ մտորումներն են, այդ ապագայի անվտանգության ակունքներում կանգնած հայ զինվորի ու զինվորականության դերի ու նշանակության գնահատանքը, այն բանակի ստեղծման գաղափարը, որը «**դատապարտված է միայն հաղթելու**»:

Այդ հաղթանակը կարող է իրականանալ միայն ժողովրդի ու բանակի միասնությամբ, այնպիսի միասնությամբ, ուր պառակտում ասվածն ընդհանրապես տեղ չունի: Հռետորական տարրը, որ հատուկ է զինվորական մասնագիտություն ունեցող մարդկանց ելույթներին, Ս. Օհանյանի խոսքում երբեք էլ առաջնայինը չէ: Նա գիտակ մարդու խոհեմությամբ է վեր հանում ու գնահատում դեպքերն ու դեմքերը, ցավով ընդգծում այն սխալներն ու բացթողումները, որոնք մենք թույլ ենք տվել խաղաղ ժամանակներում՝ անհրաժեշտ ուշադրություն չդարձնելով ռազմական պատրաստականության հարցերին: «**Այսօր,**- կոչ է անում հեղինակը,- **մենք իրավունք չունենք կրկնելու նույն սխալը և պարտավոր ենք անընդհատ գործել ժամանակի առաջադրած պահանջներին համապատասխան**»:

Գրքի հետ հպանցիկ ծանոթությունն անգամ պետական մտածողության լավագույն դասեր է տալիս: Նկատի ունենալով բանակային ունեցվածքի հանդեպ անբարեխիղճ վերաբերմունքի ինչ-ինչ դրսևորումներ՝ գեներալը հստակ ձևակերպում է միակ ճիշտ ուղին, որով դրանք պետք է արմատախիլ արվեն բանակից. «**...ձեռքբերումները մեր և գալիք սերունդների համար կարող են մնայուն արժեքներ դառնալ միայն ու միայն այն դեպքում, եթե այսօրվա ստեղծածն աշխատենք պահպանել աչքի լույսի պես և դրան վերաբերվենք սրտացավությամբ: Այդ իսկ պատճառով հարկավոր է պարբերաբար հաշվառման ենթարկել եղած նյութատեխնիկական միջոցները, ...ձեռնպահ մնալ ավելորդ ծախսեր ու գերծախսեր կատարելուց**»: Նա՝ որպես պետական գործիչ, հստակ գիտակցում է, որ ռազմական ոլորտում թույլ տրված ամեն մի շռայլություն ուղղակի հարված է առանց այն էլ ծանր վիճակում հայտնված ժողովրդի սոցիալական վիճակին:

«Տասնհինգամյա հերոսական ուղի» գլուխը, որով բացվում է գիրքը, այսպիսի մի փոքրիկ, բայց և ուշագրավ նախաբան ունի.

«**Մտածելով պատերազմի մասին, ըստ այդմ բարձրացնելով սեփական զինուժի մարտունակությունը, որը թերևս հակառակորդին զսպելու ամենակարևոր կանխարգելիչ միջոցն է՝ մենք լավագույն նախադրյալներ ենք ստեղծում լիարժեք խաղաղություն հաստատելու համար**»:

Սա այն մարդու հավատամքն է, ով վերլուծում է իր կյանքի վերջին տասնհինգ տարիների անցուդարձը, տարիներ, որոնք եղել են պատերազմի ու զրկանքների, հաղթանակի ու բերկրանքի, բայց և ինքնահաստատման ու լուրջ հետևություններ անելու տարիներ, որոնք եկել-անցել են իր միջով ու, բարեբախտաբար, չեն շրջանցել իրեն, ինչի համար ինքն անսահման երախտապարտ է ճակատագրին, քանզի մեկն է այն սերնդից, ումից ավելին է պահանջվել, քան նա կարող է տալ, ում, երևի, վիճակված է փակելու նախնիների բոլոր պարտքերը:

Զորի Բալայանը, ով, ի դեպ, այս գրքի նախաբանն է գրել, մի հետաքրքիր դիտարկում է կատարել՝ համեմատություն անցկացնելով Արցախյան հերոսամարտի մասին մինչ այս լույս տեսած առատ գրականության ու ներկայացվող գրքի միջև: Ըստ Զ. Բալայանի՝ այս գրքի մի կարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ տվյալ դեպքում հեղինակը մարտական գեներալ է, որ նա հայ զինվորի հետ հավասար «ոջիլներ է կերակրել խրամատներում», և նրա խոսքը բոլորովին էլ նման չէ «խրամատները շրջանցած ու վառոդի հոտ չառած» գրչակների խոսքին: Հայտնի հրապարակախոսը նաև հիշյս է հայտնում, որ «պատերազմի ճշմարտությունը» փրկելու առումով Ս. Օհանյանի օրինակը կարող է լավ իմաստով վարակիչ դառնալ շատերի համար:

Ասենք նաև, որ գրքում տեղ են գտել հերոսամարտի օրերն ու այսօրվա ՊԲ առօրյան պատկերող բազմաթիվ լուսանկարներ:

Էդուարդ Անդրեասյան

Վարուժան Վարդանյան



Տկարչությունը չի գոռում , չի ճչում, չի խոսում, նույնիսկ չի շշնջում, այն համր արվեստ է: Նա արվեստներից ամենալուռն է, որտեղ չկան հնչյուններ ու բառեր, որտեղ շարժումն անգամ քարացած է, այն ինքնամփոփ է ինչպես միտքը, որ դեռ չի արտասանվել: Եվ հենց այդ լռությունն է պատճառը, որ արվեստանոց մտնելիս հաճախ բղավում եմ: Դա մարդկային նախնական զգացողություններից կազմված մի ձայնարկություն է, որի մեջ ահավոր կատաղություն կա անհայտ հակառակորդի հանդեպ եւ կնոջը սիրելու ցանկություն, կուտակված էներգիայի պարպում, բնազդի ողջույնը իր իսկ ծնած ինտելեկտին՝ ա՜, ա՜, ա՜: Ահա իմ թռիչքը, իմ կատաղի, վայրագ, կրքոտ ճիչը դեպի նկարչության լռությունը, դեպի կտավների անտարբեր, համր կեցվածքը, դեպի արվեստանոցի պատուհանների ապակիներում քարացած, մեռած քամու ձայնը:

Վարուժան



«ԴՐՕՇԱԿ» -ի պատկերասրահ

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ



ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ԴԱՇՏ

ԱՍՊԵՏԻ ԵՐԱԶԸ

ԱՔԱՂԱՂՆԵՐԻ ԿՌԻՎ



ԵԿՎՈՐ-1